Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Հայ գրականություն, Թատերգություն
13+

Շիրվանզադե
Կործանվածը

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍԵՆԵՔԵՐԻՄ ՍԱՀԱՌՈՒՆԻ — 54 տարեկան:

ԿԱՏԱՐԻՆԵ, նրա կինը — 46 տարեկան:

ԱՐՏԱՇԵՍ, նրանց որդին — 26 տարեկան:

ԱՆԱՀԻՏ, նրանց դուստրը — 24 տարեկան:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԼՎԱՆԴՅԱՆ — 59 տարեկան:

ՖԼՈՐԱ, նրա աղջիկը — 21 տարեկան:

ՏԻԳՐԱՆ, Արտաշեսի մտերիմ ընկերը — 27 տարեկան:

ՀՐԱՆՏ, Արտաշեսի ընկերը — 24 տարեկան:

ՆՈՅԵՄԶԱՐ, որի իսկական անունն է Անտոնինա Սկվարցովա — 23 տարեկան:

ԱՐԱՉ ԱՐԱՉՅԱՆ, Արտաշեսի նախկին ընկերը — 28 տարեկան:

ՆԱԶԱՆԻ, Սահառունիների վաղեմի խոհարարուհին — 48 տարեկան:

ԴԱՆԻԵԼ, Ալվանդյանների ծառան:

ՍՈՖԻԱ, Ալվանդյանների աղախինը:

Մի ոստիկանական պաշտոնյա:

Գործողությունը կատարվում է Կովկասի մեծ քաղաքներից մեկում 190... թվին: I, III և IV արարվածները կատարվում են Սահառունիների, II Ալվանդյանների տանը:

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Տեսարանը ներկայացնում է Սահառունիների բնակարանը: Մի բավական մեծ սենյակ, որ թե հյուրասենյակ է ու թե սեղանատուն: Աջ պատի մեջ երկու դռներ, որոնցից ավանսցենի կողմինը տանում է Անահիտի սենյակը, իսկ խորքինը Սենեքերիմի և Կատարինեի ննջարանը: Խորքի պատի մեջ դեպի ձախ դռներ, որ տանում են նախասենյակ և խոհանոց, դեպի աջ՝ ճաշի սեղան, քովը՝ պահարան ամանեղենի համար: Ձախ պատի մեջ, ուղիղ Անահիտի սենյակի դռների հանդեպ, դռներ որ տանում են Արտաշեսի սենյակը, մի փոքր հեռու, դեպի խորքը՝ գրասեղան, քովն աթոռներ: Աջ պատի երկու դռների միջև սովորական թախտ: Այս ու այն տեղ հասարակ աթոռներ: Դռները վարագույրներ չունին: Պատերին կախված են հայ հին, և նշանավոր մարդկանց պատկերներ և «Ոգի Հայաստանի» կոչված նկարը, ձեռագործ:

ՏԵՍԻԼ 1

ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԿԱՏԱՐԻՆԵ ԵՎ ՆԱԶԱՆԻ

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Ալեխառը, կարճ խուզած մորուքով ու մազերով մարդ է, պարզ դեմքով և շատ հասարակ ձևերով: Քիչ նյարդային է, շարժուն, դյուրագրգիռ, դյուրահավան, շուտ ուրախացող, շատ տխրող: Շատ է ծխում: Հագած է ծալած օձիքով շապիկ, և փողկապ, լայն, հնաձև պիջակ, երկայն ժիլետ, լայն պանթալոն: Կարդալ-գրելիս դնում է պենսնե, որ միշտ կախված է վզովը: Վարագույրը բարձրանալիս նստած է գրասեղանի քով, գրում է, ստեպ-ստեպ բաց թողնելով գլխից վեր ծխախոտի ծուխը:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Նիհար, գեղեցիկ, բայց ոչ մեղմ դեմքով կին է, հարուստ և քիչ ալեխառը մազերով: Հագնում է սովորաբար սև հագուստ՝ հասարակ, բայց ոչ անճաշակ: Վարագույրը բարձրանալիս ճաշի սեղանի քով լվանում է թեյի բաժակներն, ու մաքրում): Նազանի՛, Նազանի՛:

ՆԱԶԱՆԻ. (Գալիս է խորքի դռներից ավելը ձեռին, թևերը ծալած): Հրամանքդ, խանմ ջան:

ԿԱՏԱՐԻՆԵ. Սամովարը տար, նորից եռացրու ու բեր: Արտաշեսը զարթնել է ու հագնվում է:

ՆԱԶԱՆԻ. Էս սհաթիս: (Ավելը հենում է պատին, սամովարը տանում է խորքի դռներով):

ԿԱՏԱՐԻՆԵ. (Ավելորդ բաժակները տեղավորում է պահարանում, սեղանի վրա թողնելով մի մաքուր բաժակ, հաց, պանիր, կարագ և մեղր: Հետո կանգ է առնում և հանդիմանական հայացքով նայում Սենեքերիմին):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Շարունակ գրելով): Զգում եմ հայացքդ, զգում եմ: Այն վզիս վրա ազդում է ինչպես անձրևի սառը կաթիլներ, ու հավիտենական վերահսկիչ իմ կյանքի:

ԿԱՏԱՐԻՆԵ. Պետք է բազար գնալ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Գրիչը դնում է սեղանի վրա): Ըհը, վերջացրի, անզուգական կողակիցդ իմ, այժմ կարող եմ ծառայել քո տնտեսական հրամաններին: (Վեր է կենում):

ԿԱՏԱՐԻՆԵ. Երանի գիտենամ, էլի ում դեմ ես գրոտում տաքացած:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ինչպես միշտ, իմ ազգի թշնամիների դեմ: Առաջ մեզ մեղադրում էին, թե վաշխառուներ և հարստահարիչներ ենք հրեաների պես: Այժմ նոր ագռավներ են եկել և նոր տեսակի ղռղռոցներ սկսեր: Այժմ ասում են, թե հայ հասարակությունն ընդունակ չէ բարձր իդեալներով ոգևորվելու: Ահա այս անգամ այս տեսակ հայատյացների հերն եմ ուզում անիծել:

ԿԱՏԱՐԻՆԵ. Թո՛ղ, աստված սիրես, թո՛ղ այդ կռիվները, բավական է:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ուշ է: Կատարինե, ուշ է: Այսպես սկսել եմ կյանքս, այսպես էլ պիտի վերջացնեմ: (Մոտենում է ու մի ձեռքով գրկում կատարինեին): Բայց հիմա, Կատարինե, քեֆն իմն է: Մի պաշտպան և օգնական է եկել, որ թշնամիների մի ամբողջ բանակի դեմ պիտի կռվի ինձ համար:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Մեղմիկ ազատվում է Սենեքերիմի գրկից, հեգնաբար): Ո՞վ է այդ պաշտպանը:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Ձեռքը հանդիսավոր մեկնելով, դեպի ձախ դռները): Այ, նա՛, իմ միակ ժառանգը, որ երեկ վերադարձավ հայրենիք գիտության պաշարով և թարմ ուժերով: Համոզված եմ, որ նա իմ տված կրթությունը չի մոռացել, որ նրա սիրտը վառ է բուռը սիրով դեպի իր ազգը:

ԿԱՏԱՐԻՆԵ. Աստված սիրես, մի՛ անիծիր իմ որդուն:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Իա՛, ինչպե՞ս թե անիծել: Ազգը սիրել ու ազգին ծառայել կնշանակի անիծված լինել:

ԿԱՏԱՐԻՆԵ. Ազգը սիրել կարելի է. դա ամենքիս պարտքն է: Բայց ազգին ծառայելը հիմարություն է:

ՍԵՆԵՔԵԻՄ. Ի՞նչ ես դատարկ դատարկ դուրս տալիս, կին...

ԿԱՏԱՐԻՆԵ. Ես երկնային պատիժ կհամարեմ ինձ համար, եթե Արտաշեսը գնա քո ճանապարհով:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Հեգնորեն): Այսի՛նքն...

ԿԱՏԱՐԻՆԵ. Այսինքն, եթե, իր բախտը թողած, ընկնի հասարակական գործերի ետևից: Ի՞նչ ես վաստակել դու, ի՞նչ որ նա էլ վաստակի: Սրան հարվածիր գրչով, նրա պակասը երեսովը տուր խոսքով, այստեղ կռվիր հարուստների հետ, թե ազգին ինչու մեծ-մեծ փողեր չեն տալիս, այնտեղ հայհոյիր հոգևորականներին, թե ծույլ են, տգետ են և այլն: Ինչ գիտեմ, քսանույոթ տարի է ապրում ենք ինչպես կյանքի խորթ զավակներ, կես կուշտ, կես քաղցած, միշտ դողալով վաղվա համար, միշտ հոգալով մի փոր հացի մասին: Ա՜հ, եթե իմանայի, որ իմ կյանքն այդ է լինելու, կփտեի իմ հոր տանը և քեզ հետ չէի ամուսնանալ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Լռել է, զանազան նյարդային անհամբեր շարժումներ անելով): Շարունակի՛ր, շարունակիր, ինչու էլ դադարեցիր: Ես խոմ միշտ համբերությամբ լսում եմ քո ագռավի երգը: Գիտեմ դու ինչ էիր սպասում ինձնից, երբ ամուսնացար հետս: Դու փափագում էիր, որ փաստաբանի թղթապանակը կռնատակիս դրած գոնե դուռն ընկնեի, սրան շոյեի, նրան շողոքորթեի՝ կլիենտներ ձեռք բերելու: Դու ավելի երջանիկ կհամարեիր քեզ, եթե ես մի անգամ արդարին պաշտպանելով, հինգ անգամ գողերին ու սրիկաներին պաշտպանեի, ստեի, խաբեի, խարդախեի: Այո, այն ժամանակ դու ավելի կուշտ կապրեիր և ավելի կհարգեիր ինձ: Բայց ես չարի այդ, ես ընտրեցի ուսուցչիդ համեստ արհեստը, որ իմ խելքի և ընդունակությունների չափով ծառայեմ իմ խեղճ ժողովրդին: Ես իմ գրչիս ազատեցի դատաստանական խարդախանքների ճահճից և նվիրեցի ազգին: Լավ արի թե վատ, թող ուրիշներն ասեն, բայց ես այսօր էլ չեմ զղջում, չեմ զղջում, չեմ, զղջում:

ԿԱՏԱՐԻՆԵ. Իսկ Արտաշեսը չի անիլ քո արածը: Ոչ, նա չի հետևիլ քո օրինակին, ես չեմ համաձայնվիր:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Օ՜օ, ես գիտեմ, շատ լավ գիտեմ, որ դու չես թողնիլ: Դու ամեն կերպ պիտի աշխատես խլել նրան ինձանից, դարձնել մի սովորական ողորմելի քաղաքացի կուշտ փորով, ճարպոտ ուղեղով և դատարկ զգացումներով: Բայց ես հուսով եմ, որ Արտաշեսը քո ասածը չէ, որ նա իմն է և ոչ քոնը:

ԿԱՏԱՐԻՆԵ. Է՜է, եթե նա խելոք է, ոչ իմը կլինի և ոչ քոնը, այլ կպատկանի ինքն իրան:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Հա, այդպես ասա: Ես դեմ չեմ, թող նա չհետևի ինձ, ուրիշ ճանապարհով օգնի իր ազգին: Բայց օգնի: Լսի՛ր, Կատարինե, լավ լսի՛ր: (Մոտենում է և ձայնը ցածրացնելով): Վերջերս ինչ-որ նոր քամիներ է գալիս հյուսիսից: Հայ երիտասարդները սկսել են, վրացիներին հետևելով, վարակվիլ այդ քամիներով, այսինքն այնպիսի գաղափարներով, որ միանգամայն հակառակ են մեր հասարակության շահերին: Եթե Արտաշեսն էլ վարակվել է, այն ժամանակ, օ՜օ, այն ժամանակ ահա իմ իսկական դժբախտությունը. Ես չեմ դիմանալ այդ բանին, ես Արտաշեսին կհամարեմ անձնական թշնամի: Հասկանում ես, որովհետև, որովհետև, Կատարինե, ինձ համար անձ և գաղափար միևնույն բաներ են: Ես իմն ասացի: Այժմ հրամայիր, ի՞նչ ես ուզում:

ԿԱՏԱՐԻՆԵ. Գնա բազար ու գնիր միս, ձուկ և ուրիշ ինչ որ հարկավոր է: Այսօր Արտաշեսի ընկերները գալու են, ես ուզում եմ նրանց ճաշի պահել:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Իսկույն: Քառորդ ժամ չանցած կվերադառնամ: Ես պետք է մի լավ խոսեմ Արտաշեսի հետ: (Վերցնում է գրասեղանի վրայից լայնեզր գլխարկը և գնում խորքի դռներով):

ԿԱՏԱՐԻՆԵ. (Նայում է Սենեքերիմի ետևից): Երեխա, միշտ երեխա...

ՏԵՍԻԼ 2

ԿԱՏԱՐԻՆԵ ԵՎ ԱՆԱՀԻՏ

ԱՆԱՀԻՏ. (Ներս է մանում աջ կողմի առաջին դռնից: Հագնված է պարզ, մաքուր և ոչ անճաշակ: Դեմքի վրա նկատելի են անդադար աշխատանքի հետք և հոգնածություն: Սակայն շարժումներն աշխույժ են): Աշակերտուհիներիս տետրակներն ուղղեցի, այսօր տոն է, կարող եմ քեզ օգնել, մայրիկ:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Թախտի բարձերն ուղղելով): Հարկավոր չէ, բավական է, որ դրսերում աշխատում ես, գոնե տանը հանգստացիր: Խեղճ աղջիկ, դու հոգնեցիր այս հինգ տարվա մեջ շատ դասեր տալուց: Բայց մի՛ մտածիր, եղբայրդ ուսումն ավարտել է ու եկել, այժմ հերթը նրանն է աշխատելու: (Ուրախ): Ա՛հ, այսուհետև հեռու մեզնից հոգսեր, մենք բախտավոր կլինենք: Այնպես չէ՞, Անահիտ:

ԱՆԱՀԻՏ. Ես երբեք մեզ անբախտ չեմ համարել, մայրիկ, մանավանդ ինձ:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Դարձյալ տխրելով): Է՛հ, ասում ես էլի, մտիկ արա հայելուն, հետո խոսիր: Երեկ չէ մեկել օրը քսանուչորս տարիդ լրացավ և դու դեռ ծնողներիդ տանն ես:

ԱՆԱՀԻՏ. (Շառագունելով): Մայրի՞կ...

ԿԱՏԱՐԻՆԵ. Լավ, լավ, մի՛ նեղանար, այսօր ես միտք չունիմ սիրտ նեղացնելու: (Ուրախ): Լսի՛ր, Անահիտ, առաջ էլ ես միշտ մտածում էի Ֆլորայի մասին, բայց երեկվանից դես նա աչքիս առջևից չի հեռանում: Կարծես նա արդեն իմ հարսն է և ես նրա սկեսուրը: Արդեն ես երևակայում եմ Ալվանդյանների հարստությունը Արտաշեսի ձեռքում:

ԱՆԱՀԻՏ. Մայրիկ, օրիորդ Ալվանդյանի հարստությունը չէ գրավիչը, այլ ինքը: Ֆլորան հիանալի աղջիկ է. և՛ սիրուն, և՛ խելոք, և՛ պարկեշտ:

ԿԱՏԱՐԻՆԵ. Ես շատ ուրախ եմ, որ դու նրան այդպես հավանում ես: Ուրեմն, օգնիր ինձ, որ այս թանը գլուխ բերենք Արտաշեսի համար:

ԱՆԱՀԻՏ. (Վիրավորված): Մա՛յր, ես խնդրում եմ քեզ միանգամ առմիշտ ազատել ինձ այդ տեսակ դերերից: Ես միջնորդ լինել չեմ կարող:

ԿԱՏԱՐԻՆԵ. Լավ, քիչ կոտրատվիր, Ֆլորան խոմ ուրիշ չէ, ընկերուհիդ է: Նա քեզ սիրում է և միշտ մի բան անելիս առաջ քո խորհուրդն է հարցնում:

ԱՆԱՀԻՏ. Ֆլորան այնքան խելոք է և այնքան անկախ, որ այդ տեսակ մի լուրջ բանի համար ոչ ոքի խորհուրդը չի հարցնիլ:

ԿԱՏԱՐԻՆԵ. Իսկ հայրը կարո՞ղ է նրա վրա ազդել:

ԱՆԱՀԻՏ. Հայրը նրան այնպիսի ազատություն է տվել, որպիսին ունեն մեր օրիորդներից շատ քչերը: Միայն Ֆլորան այնքան հարգում է իր հորը, որ հազիվ թե ամուսնանա հակառակ նրա կամքի:

ԿԱՏԱՐԻՆԵ. Որ այդպես է, ես շատ էլ վախ չունիմ: Ալեքսանդրը Ալվանդյանը Արտաշեսին մանկությունից է սիրում: Կարծես, նա մի օր ինչ-որ ակնարկություն էլ արել է հորդ մոտ: Բայց հայրդ ուշադրություն չի դարձրել: Ախ, այդ մարդն իր ընտանիքի թշնամին է:

ԱՆԱՀԻՏ. Մայրիկ, դու միշտ հարձակվում ես հայրիկի վրա: Այդ անարդարություն է: Հայրիկն Ալեքսանդր Ալվանդյանի մոտիկ բարեկամն է, սիրված և հարգված նրանից: Բայց նա այնքան ազնիվ և անշահասեր մարդ է, որ անձնական բարեկամությունը երբեք չի շահագործիչ ո՛չ իր և ո՛չ իր ընտանիքի համար, այնպես որ այս կողմից հայրիկին չպիտի մեղադրել, Բայց ապահով կաց, Ֆլորան կամուսնանա միայն այն երիտասարդի հետ, որին կհավանե և կսիրե:

ԿԱՏԱՐԻՆԵ. Արտաշեսին նա կհավանի էլ, կսիրի էլ: Ահ, Անահիտ, ո՞վ չի հավանիլ նրան: Տեսնո՞ւմ ես, ինչպես է փոխվել: Նրա սիրուն հասակը, գեղեցիկ ճակատը, կրակոտ աչքերը, գանգուր մազերը, բոլորը, բոլորը կատարյալ են:

ԱՆԱՀԻՏ. Այդ քո ճաշակով, Ֆլորան ունի իր սեփական հայացքը: Այսպես, թե այնպես, եթե իմ կարծիքը որևէ նշանակություն ունի, խորհուրդ կտայի, մայրիկ, թողնել այդ գործը իրան՝ Արտաշեսին: Դու կարող ես նրան բարկացնել, հայրիկին էլ գրգռել:

ՆԱԶԱՆԻ. (Ներս է բերում սամովարը, դնում է սեղանի վրա, ու ավելը վերցնելով, կանգնում է խորքի դռների առջև):

ԿԱՏԱՐԻՆԵ. Ինչ որ էլ լինի, ես պետք է Արտաշեսի ուշադրությունը դարձնեմ Ֆլորայի վրա:

ԱՆԱՀԻՏ. Դո՛ւ գիտես: Սո՛ւս, գալիս է:

ՏԵՍԻԼ 3

ՆՈՒՅՆՔ, ԱՐՏԱՇԵՍ հետո ՍԵՆԵՔԵՐԻՄ

ԱՐՏԱՇԵՍ. (Գալիս է ձախ կողմի դռներով: Մտախոհ, խելացի դեմքով, լայն ճակատով, առողջ կազմվածքով, թանձր ու գանգուր մազերով երիտասարդ է: Հագած է սև գույնի պիջակ ու պանթալոն, կապույտ ուսանողական շապիկ, որի

վրեն մեջքին կապած է մետաքսյա գոտի երկայն ծոպերով): Բարի լո՛ւյս: (Արագ քայլերով մոտենում է ճաշի սեղանին, նստում է և ոտը ոտի վրա ձգում):

ԿԱՏԱՐԻՆԵ. Բարի՛ լույս իմ դոկտորին: Հըմ, լավ քնեցիր: (Սկսում է Արտաշեսի համար թեյ ածել):

ԱՐՏԱՇԵՍ. Հիանալի է: Յոթը օրվա անքուն ճամփորդությունից հետո փափուկ անկողինն ինձ համար նեկտար էր: Հա, պատմեցեք ձեր կյանքից: Երեկ ժամանակ չունե ցանք երկար խոսելու: (Առնում է մորից լիք բաժակը և դնում իր առջև):

ՆԱԶԱՆԻ. (Սիրով նայել է Արտաշեսին): Բոյիդ ղուրբան, կթողնե՞ս, որ օթախդ սրբեմ:

ԱՐՏԱՇԵՍ. (Ետ նայելով): Օօ, Նազանի, բարի լույս, բարի լույս: (Վեր է կենում Նազանու ձեռը սեղմում և ետ է գալիս): Ինչպե՞ս ես, լա՞վ ես:

ՆԱԶԱՆԻ. (Շփոթված և զգացված): Աստված քեզ կյանք տա, աղա:

ԱՐՏԱՇԵՍ. Աղա՛: Չէ , Նազանի, այդ չեղավ, ինձ ուղղակի անվանիր Արտաշես: Նշվելը թող այնտեղ, եկ նստիր: Ուզում եմ քեզ հետ մի քիչ զրույց անել, ես ինքս իմ սենյակը կսրբեմ:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Սաստիկ զարմացած Արտաշեսի վարմունքից) Ինչպե՛ս թե դու կսրբե՛ս: Գնա, Նազանի, գնա բանիդ:

ՆԱԶԱՆԻ. (Տակավին շփոթված): Խի՞ պիտի դու սրբե՛ս, Նազանու ձեռները չորացե՞լ են: (Գնում է ձախ կողմի դռնով):

ԿԱՏԱՐԻՆԵ. Մի՞թե կարելի է ծառայի հետ այդպես վարվիլ:

ԱՐՏԱՇԵՍ. Ինչո՞ւ չի կարելի, (Թեյ է խմում):

ԿԱՏԱՐԻՆԵ. Նա քո ընկե՞րն է, թե հավասարը: Մեղր ու կարագ կեր:

ԱՐՏԱՇԵՍ. Ինձ համար բոլոր մարդիկ հավասար են: Դեհ, Անահիտ, ասա է, ի՞նչ ես լռել: Դու հիանալի նամակներ էիր գրում ինձ: Զարմանալի գիտես դեպքերը հանգամանորեն նկարագրել: Ես քո մի քանի նամակներից կազմել եմ թղթակցություններ մայրաքաղաքի լրագիրների համար: Վաթսուն ռուբլի վարձ եմ ստացել, կեսը քեզ է պատկանում: (Հաց ու պանիր է ուտում):

ԿԱՏԱՐԻՆԵ. Ի՞նչ, դու է՞լ ես գրում լրագրներում (Վերցնում է Արատաշեսի բաժակը և նորից լցնում):

ԱՐՏԱՇԵՍ. Երբեմն:

ԿԱՏԱՐԻՆԵ. Մի՛ արա, որդի, գրելուց խեր չկա: Հայրդ ի՞նչ շահեց, որ դու ի՞նչ շահիս: (Բաժակը դնում է Արտաշեսի առջև.): Հա, ինչո՞ւ մեղր ու կարագ չես ուտում: Կեր: (Ամանները մոտեցնում է Արտաշեսին): Հատկապես քեզ համար ենք առել:

ԱՐՏԱՇԵՍ. Մայրիկ, կարծեմ, դու ինձ դեռ երեխա ես համարում:

ԿԱՏԱՐԻՆԵ. Որդին մոր համար միշտ երեխա է: Սպասիր, ես քեզ համար յուղապատառ կպատրաստեմ: (Ուզում է պատրաստել):

ԱՐՏԱՇԵՍ. (Ժպտալով): Թող, մայր, դու կատարյալ դայակ ես ուզում լինել ինձ համար: Երևակայիր, Անահիտ, գիշերվա ընթացքում երեք անգամ մտավ սենյակս, որ տեսնի քնա՞ծ եմ, թե՞ արթուն: Ես, իհարկե, քնած ձևացա:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Անհանգիստ): Ի՞նչ, ուրեմն դու լավ չե՞ս քնել:

ԱՐՏԱՇԵՍ. (Ծիծաղելով): Դեե դե, բաներս փչացրի:

ԱՆԱՀԻՏ. Այդ արդեն չափազանցություն է, մայրիկ:

ԿԱՏԱՐԻՆԵ. Լռիր, դու ինչ գաղափար ունիս մայրական զգացման մասին: (Արտաշեսին): Թեյդ խմիր, կպաղի:

ԱՐՏԱՇԵՍ. (Կատակով): Օհ, դու ինձ կսպանես, մայրիկ: Դեհ, աչքի վրա, ինչպե՞ս կիրամայես խմել — գցած, թե՞ կծովի բաժակով, թե՞ պնակով: (Լուրջ): Մայրի՛կ, եթե ուզում ես սիրտս շահել, այդ չէ միջոցը:

ԿԱՏԱՐԻՆԵ. Բաս ո՞րն է, ասա, որդի, որ իմանամ:

ԱՐՏԱՇԵՍ. Թող ինձ անուշադիր, բոլորովին անուշադիր: (Վեր է կենում): Դե, ես կերա էլ, խմեցի էլ, բավական է: Ո՞ւր է հայրիկը:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Դժկամությամբ ոտքի է կանգնում և սկսում է սեղանի վրայի բաները ժողովել ու պահարան դնել): Գնաց բազար քո հյուրերի համար ուտելեղեն գնելու:

ԱՐՏԱՇԵՍ. Իմ հյուրերի համա՞ր, Միթե ես հյուրեր եմ հրավիրել:

ԱՆԱՀԻՏ. Ների՛ր, այս անգամ ես մայրիկի կողմն եմ: Նա ուզում է քո ընկերներին պատվել ճաշով: Դու իրավունք չունիս նրան այդ բավականությունից զրկելու:

ԱՐՏԱՇԱՍ. Թող այդպես լինի, բայց ի սեր աստծու, թողեք այդ չինական ձևերը: Առհասարակ ես ձեզ խնդրում եմ իմ մասին չհոգալ: Այնպես կարծեցեք, որ ես իսկի չեմ էլ եկել Ռուսաստանից:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Ծիծաղելով): Այդ խելոք-խելոք խոսելը համալսարանո՞ւմ ես սովորել: Ինչպե՞ս թե չես եկել, քանի որ եկել ես:

ԱՐՏԱՇԵՍ. (Լուրջ): Եկել եմ, բայց Էլի շուտով պիտի գնամ: Ես ժամանակավոր հյուր եմ այստեղ:

ԿԱՏԱՐԻՆԵ. Շատ ուրախ եմ, որ հանաք անել չես մոռացել:

ԱՐՏԱՇԵՍ. Ես հանաք չեմ անում: Ես կմնամ այստեղ ամենաշատը մի շաբաթ կամ տասն օր, հետո պիտի գնամ և այս անգամ... գուցե երկար ժամանակով: (Երեսը դարձնում է հուզմունքը թաքցնելու համար): Լռություն:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Նայում է Արտաշեսին երկարատև հայացքով): Լսեցի՞ր, Անահիտ:

ԱՆԱՀԻՏ, Այո՛, մայրիկ, նա կատակ չի անում:

ԱՐՏԱՇԵՍ. Մի՛ ընտելացիր ինձ, մայր: Որքան սառը վարվես ինձ հետ, հրաժեշտը թեթև կլինի թե՛ քեզ և թե՛ ինձ համար:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Ամանը, որ բռնած ուներ ձեռքում, ընկնում է հատակի վրա և փշրվում): Արի ու երազին մի հավատա: Երեկ գիշեր դու մի մեծ գետի ափումն էիր, ես մյուս ափում: Կանչում էի քեզ, կանչում, դու չէիր լսում...

ԱՆԱՀԻՏ. Ինչո՞ւ այդպես վախեցար, մայրիկ: Նա գնում է, էլի կգա: Երևի, դեռ քննությունները չի վերջացրել:

ԿԱՏԱՐԻՆԵ. Ո՛չ, ո՛չ, Անահիտ, նրա խոսքերի մեջ ինչ-որ խորհրդավոր շեշտ կա: Մայրական սիրտը խաբել անհնարին է: (Խորը նայում է որդու երեսին): Կարելի՞ է իմանալ քո գնալու պատճառը:

ԱՐՏԱՇԵՍ. Եթե թույլ կտաս սուտ չասել — ոչ, չի կարելի (քայլում է):

ԿԱՏԱՐԻՆԵ. Ուրեմն իմ բոլոր հույսերը զուր էին, ուրեմն հինգ երկար տարիներ աչքս ճանապարհին չպիտի սպասեի քեզ, ուրեմն իմ երջանիկ երազները քո մասին ծովն են ընկնում: Ասա՛, ունիս դու որդիական սեր:

ԱՐՏԱՇԵՍ. Ես ունիմ զորավոր սեր դեպի մի մեծ պարտականությունը: Քանի որ այդ պարտականությունը կատարված չէ, չեմ կարող պատկանիլ ոչ միայն իմ ծնողներին, այլև ինքս ինձ:

ԿԱՏԱՐԻՆԵ. Լսո՞ւմ ես: Աղջի, ես ոչինչ չեմ հասկանում: Բացատրիր ինձ, ի՞նչ է ուզում ասել:

ԱՆԱՀԻՏ. Մայրիկ, նրա ասածն ինձ համար էլ մի հանելուկ է: (Կոտրտված ամանի փշրանքը ժողովում է, տանում դուրս խորքի դռներով, իսկույն ետ է գալիս):

ԱՐՏԱՇԱՍ. Մայր, մի ստիպիր ինձ ասել այն, ինչ որ չունիմ իրավունք ասելու: Մի ստիպիր նույնպես ստելու: Գրգռվում եմ ամեն տեսակ ստերից:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Թուլացած նստում է): Դու այնպիսի մի հարված տվեցիր ինձ, որ աշխարհը գլխիս մթնեց: Հինգ տարի սպասել և վերջը ա՞յդ լսել: Արտաշես, Արտաշես, դու սիրտ չունիս:

ԱՐՏԱՇԵՍ. (Հառաչում է ծանր): Թող այդպես լինի: Ներիր ինձ, ես պիտի մի քանի կարևոր նամակներ գրեմ: (Քայլերն ուղղում է դեպի ձախ դռները):

ԿԱՏԱՐԻՆԵ. (Ուշքը ժողովելով, արագ ոտքի է կանգնում): Ո՛չ, վեր կա՛ց: Այդ ինչո՞ւ այդպես ծանր հառաչեցիր: Ես ուզում եմ իմանալ քո հոգսը: Կյանքս տակն ու վրա մի արա, ինչո՞ւ համար ես փախչում ծնողներիդ տնից: Քննություն ունի՞ս:

ԱՐՏԱՇԵՍ. Ո՛չ:

ԿԱՏԱՐԻՆԵ. Քեզ քշո՞ւմ են այստեղից:

ԱՐՏԱՇԵՍ. Ո՛չ:

ԿԱՏԱՐԻՆԵ. Սիրահարվա՞ծ ես:

ԱՐՏԱՇԵՍ. (Գրգռված): Ո՛չ, ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ: Մա՛յր, աղաչում եմ քեզ, մի՛ գցիր ինձ նեղը քո անհանգիստ հարցերով: Ես ճշմարտությունն ասել չեմ կարող, իսկ ստել չեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում: (Ուզում է գնալ)

ԿԱՏԱՐԻՆԵ. (Առաջն առնելով): Որդի, ինչո՞ւ ես նեղանում, չէ՞ որ ես մայր եմ և դու իմ միակ որդին ես: Ինչո՞ւ ես թաքցնում ինձնից քո հոգսերը:

ԱՐՏԱՇԵՍ. Ժամանակին ամեն բան կիմանաս, մայր, հանգիստ կաց: Իսկ առայժմ մի աշխատիր ազդել իմ սրտի վրա: Այնտեղ կան զգացումներ, որոնց զոռ չես կարող փոխել:

ԿԱՏԱՐԻՆԵ. Այդ զգացումներն ավելի թանկ են քան քո մա՞յրը:

ԱՆԱՀԻՏ. (Տեսնելով, որ մոր հարցերը ճնշում են Արտաշեսին): Մայրիկ, ինչո՞ւ համար ես այդքան զոռում: Տեսնում ես, որ չի ուզում ասել:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Բարկացած): Մի՛ խառնվիր, քո բանը չէ, (Արտաշեսին): Ասա՛, ավելի թանկ են քան քո մա՞յրը: Ասա՛, ես մայր եմ, հասկանո՞ւմ ես, մայր:

ԱՐՏԱՇԵՍ. (Դառնացած ու գրգռված): Իսկ ուրիշները մա՞յր չեն, իսկ իմ ընկերները քարի՞ց են ծնվել: Մայրեր կան, որոնց թշվառությունը դու երևակայել չես կարող: Մայրեր կան, որոնց առջև դու ունիս մի խոշոր պարտականություն: Ահա այդ պարտականությունն է, որ ես հանձն եմ առել կատարել... Ու պիտի գնամ կատարելու:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Դուրս է գալիս խորքի դռներից, աննկատելի կանգնում է շեմքի վրա և սկսում է ականջ դնել):

ԿԱՏԱՐԻՆԵ. Ի՞նչ ես ուզում ասել, որդի, քանի գնում, այնքան անհասկանալի ես դառնում:

ԱՐՏԱՇԵՍ. Բայց ի՞նչ կարող եմ ձեզ հասկացնել, քանի որ ձեր աչքերը չեն տեսնում, թե ինչ է կատարվում ձեր շուրջը: Ի՞նչ կարող եմ բացատրել, երբ ձեր համար միայն նա է թանկ, որ մերձ է ձեր եսին, երբ ձեր սրտերը չեն կարողանում ամփոփել իրանց մեջ ավելի բարձր զգացում, քան մայրական սերը:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Ուրախանալով, մեկուսի): Ասա՛, որդի, ասա՛:

ԱՐՏԱՇԵՍ. (Ավելի ու ավելի ոգևորվելով): Կույրեր եք դուք, որ մայրական սեր եք տեսնում այնտեղ, ուր եսամոլությունն է տիրում յուր ամբողջ ուժով: Ձեր հասկացած մայրական սերը մի ախտ է, որ միշտ մաքառել է բարձրագույն սիրո դեմ և ջլատել է շատ ուժեղ հոգիներ: Ո՛չ, հեռու պիտի փախչել նրանից, որպեսզի ավելի եռանդով և ավելի արթուն մտքով ծառայես իսկական սիրույն: Ես կստորանամ իմ աչքում, եթե հանուն որդիական սիրո փախչեմ իմ պարտականությունից: Այն վեհ գործից, որ այնքան զոհեր է տարել և դեռ պահանջում է...

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Ուրախության նշաններ անելով): Ճիշտ է. ճիշտ է, տառապյալ ժողովրդի սուրբ գործից:

ԿԱՏԱՐԻՆԵ. Ի՞նչ պատահեց քեզ, որդի, ո՞վ քեզ վիրավորեց, որ այդպես բարկանում ես: (Հանդարտ լալիս է):

ԱՆԱՀԻՏ. (Մի կողմ քաշված, նայում է մերթ եղբորը և մերթ հորը, որին նկատել է միայն ինքը): Մայրի՛կ:

ԱՐՏԱՇԵՍ, Լաց, արտասուք, միշտ միևնույն զենքը հոգիները թուլացնելու համար: Ահա ինչու ես չէի ուզում գալ այստեղ: Մայր, հերիք է, ի՞նչ կա, կերթամ, էլի մի օր կգամ: Ի՞նչ կարիք կա լաց լինելու. Դե, հերիք է ասում եմ, ա՛խ, մի աշխատիր գլխիցս վռնդել գաղափարներ, որոնք այնտեղ հաստատվել են առմիշտ. Բավական է: Շիկացած երկաթը դժվար է արցունքներով սառցներ: Մայր, թող, որ իմ ուխտը հաստատ մնա, իմ երդումն անխախտ. Մի անգամ, որ պարտականությունը կանչել է ինձ, պետք է գնամ, պետք է գնամ, պետք է գնամ: Բավական է, ասում եմ: Դե լավ, լաց եղիր որքան կամենաս, եթե հեղեղ անգամ դառնա քո արցունքը, չի կարող իմ ճանապարհը կապել: (Գնում է ձախ կողմի դռներով):

ՏԵՍԻԼ 4

ՆՈՒՅՆՔ առանց ԱՐՏԱՇԵՍԻ

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Առաջ է գալիս ոգևորված): Որդին իմն է, իմը: Իմ ցանածը ծլել է, ծաղկել և պտուղներ է տալիս: (Դառնալով դեպի այն դուռը, որով Արտաշեսը գնաց) Օրհնվի քո եկած ճանապարհը, ավելի օրհնվի այն ճանապարհը, որով պիտի գնաս: (Դառնալով կնոջն ու աղջկան): Ի՞նչ եք մայր ու աղջիկ քարացած մնացել: Չլսեցի՞ք նրա խոսքերը, Այդ ոսկի խոսքերը պիտի դրոշմված լինեն յուրաքանչյուր հայ երիտասարդի սրտում: Անահիտ, չես հպարտանում քո եղբորով: Ինչ որ հայրդ քարոզել է խոսքով ու գրչով, նա ուզում է կատարել գործով: Կին, տեսնո՞ւմ ես ինչ որդի ունիս: «Շիկացած երկաթը դժվար է արցունքով սառցներ»: Եվ դու այդ խոսքերից հետո դարձյա՞լ լաց ես լինում: Հիմար ես, հիմար, ուրիշ ոչինչ: Որդիդ որոշել է ծառայել մայրենի ժողովրդին, և դու լա՞ց ես լինում: Աա՛, ի՞նչ կասես, Անահիտ, ինչո՞ւ ես լռում:

ԱՆԱՀԻՏ. (Մտազբաղ): Հայրիկ, ես աշխատում եմ հասկանալ Արտաշեսի մտքերը:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Հասկանալ, հը, ի՞նչ անհասկանալի բան ասաց նա: Նա հիշեցրեց իմ երիտասարդությունը, երբ մի այսպիսի օր հորս հետ կռվեցի և տնից փախա:

Նա ինձ նոր կյանք ներշնչեց: Ա՛հ, ի՞նչ սխալված եմ եղել ես, կարծելով, թե Ռուսաստանը հայ երիտասարդների մեջ սպանում է ազգային զգացումը:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Աչքերը սրբել է և կատաղի նայում է Սենեքերիմին): Հերի՛ք է, խելագար, հերի՛ք է:

Վ1ԵՆԵՔԵՐԻՄ. Ա՛հ, ո՛չ հերիք չէ: Մարդու կյանքում այսպիսի երջանիկ օրեր հազիվ են պատահում: Խելագար եմ, այո , գիտեմ, ոգևորված եմ: Ինչ անենք, մայրս ինձ այսպես է ծնել: Բայց դու ինձ նախանձում ես, Կատարինե, այդ պարզ է: Որովհետև Արտաշեսն իմն է և ո՛չ քոնը: Որովհետև առյուծը չի ուզում քո թևերի տակ ապրիլ: Ողորմելի, ի՞նչ էիր սպասում, որ նա վաղվանից սկսի լրագրերում հայտարարել՝ այսինչ բժիշկն ընդունում է այսինչ ժամերին եկեք, եկեք, ռուբլիներ բերեք, որ ձեզ Երուսաղեմ ուղարկի: Դու պահանջում էիր, որ նա դառնա մեկն այն եսամոլներից, որոնց դեմ ես այնքան կռվել եմ: Հա, հա, հա, գիտեմ, դու նրա համար մինչև անգամ հարսնացու է ես պատրաստել: Ինչո՞ւ չէ, Ֆլորան սիրուն աղջիկ է, համակրելի, պարկեշտ, հարուստ, օ՜օ , մանավանդ հարուստ: Բայց չեղավ, դա չեղավ, նետդ քարին դիպավ: Արծիվը չի ուզում աղավնի դառնալ և յուր բունը հաստատել քո կտուրի տակ: Նա թռչում է հեռու, հեռու, բարձր ու բարձր: Եվ ես ուրախ եմ, օ՜օ, անսահման ուրախ:

ԿԱՏԱՐԻՆԵ. Անսիրտ, անհոգի, անխելք, բավական է փրփրես, ինձ էլ լսիր, որդիդ ձեռքիցդ գնում է:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Տակավին ոգևորված): Սա, իհարկե, գնում է, բայց ո ւր, հասկանում ես, արդյոք: Նա գնում է մի տառապյալ ժողովրդի գիրկը, ուր գնում են նրա ընկերները: Նա ուխտ ունի, չլսեցիր, երդում: Հասկանում եմ, նա բժիշկ է, իսկ այնտեղ բժիշկների մեծ կարիք կա, ես հարյուր անգամ գրել եմ այս մասին:

ՆԱԶԱՆԻ. (Դուրս է գալիս ձախ կողմի դռներից երկայն ավելը ձեռքին նա գնում է դեպի խորքի դռները):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Գնա խոհանոց, Նազանի, ես գնել եմ ամեն բան: Բոլոր շնորհքդ գործ գիր և ամենաընտիր կերակուրները պատրաստիր: Այսօր Սենեքերիմ Սահառունին տոնախմբություն ունի:

ՆԱԶԱՆԻ. Աչքիս վրա: (Գնում է խորքի դռներով):

ԿԱՏԱՐԻՆԵ. Լսի՛ր, գիժ, լսի՛ր, հարբած առանց խմելու, եթե քո գլխի վրա աստված ու կրծքի տակ խիղճ կա, մի կործանի ր իմ որդուն: Նա իմ միակ հույսն է, չունիմ ուրիշը, պահիր նրան այստեղ, մի թողնիր գնալու, ապա թե ոչ՝ կփոշմանես, շատ կփոշմանես: (Արագ քայլերով գնում է խորքի դռներով):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Ետևից նայելով): Լսո՞ւմ ես, Անահիտ: Նա ինձ փոքրացրել է, ուզում է որդուս էլ փոքրացնել: Բայց հույսով եմ, որ այդ չի հաջողիլ: Ա՜ա, տրամադրությունից պիտի օգտվել: Իսկույն պետք է գրել մի հոդված «Շիկացրած երկաթ» վերնագրով: (Մոտենում է գրասեղանին):

ԱՆԱՀԻՏ. Բայց, հայրիկ, ինձ թվում է, որ դու Արտաշեսի ասածները սխալ հասկացար:

ՏԵՍԻԼ 5

ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԱՆԱՀԻՏ, ՖԼՈՐԱ հետո ԿԱՏԱՐԻՆԵ

ՖԼՈՐԱ. (Գալիս է խորքի դռներից: Սիրուն, վայելչակազմ օրիորդ է, կիրթ ու կենդանի ձևերով, որ զերծ են կոկետությունից: Հագնված է համեստ, պարզ, ճաշակով: Ձեռքին ունի մի գեղեցիկ քսակ): Այ քեզ նորություն: Արտաշեսն եկել է: Ես այդ չգիտեի: Նազանին ասաց: Շնորհավորում եմ, սիրելիս: (Համբուրվում է Անահիտի նետ): Պարոն Սենեքերիմ, թույլ տվեք ձեզ էլ շնորհավորել: (Մոտենում է և աշխուժով սեղմում Սենեքերիմի ձեռքը):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Դեռ չի նստել գրասեղանի քով): Շնորհակալ եմ, Ֆլորա, շնորհակալ եմ: Դու իրավունք ունիս ինձ շնորհավորելու:

ՖԼՈՐԱ. Ես էլ նոր լուր եմ բերել քեզ համար, Անահիտ: Գիտեմ, որ քեզ կուրախացնի: Հայրս այսօր ձեր ուսումնարանին նվիրեց հազար ռուբլի:

ԱՆԱՀԻՏ. Այդ իսկ որ շատ ուրախալի լուր է: Մեր ուսամնարանը մեծ կարիք ունե: Շնորհակալություն խեղճ աշակերտուհիների կողմից:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Նստելով սեղանի քով): Ալեքսանդրը մեր օրինակելի բարեգործներից մեկն է: Եվ ես շատ ուրախ եմ, որ նա իմ բարեկամն է:

ՖԼՈՐԱ. Բայց ես քեզ վրա բարկացած եմ, Անահիտ: Դու ժողովրդավարություն ես անկում Հայաստան վերադարձող գաղթականների համար և համարձակվում ես ինձ մոռանա լ: Ամո՜թ քեզ:

ԱՆԱՀԻՏ. Ես քեզ այնքան եմ ձանձրացրել իմ դիմումներով, որ այլևս ամաչում եմ:

ՖԼՈՐԱ. Օհո՜, «ձանձրացրել եմ», կարծես, քեզ համար ես դիմում: (Բաց է անում բազկից քաշ արած քսակը և այնտեղից փող դուրս բերելով, տալիս է): Ահա՛, ես հայրիկիցս վերցրի իմ բաժինը:

ԱՆԱՀԻՏ. (Համրելով փողը): Երկու հարյուր ռուբլի: Կտամ մեր գանձապահին, նա քեզ անդորրագիր կուղարկի: (Դնում է պահարանի մեջ):

ՖԼՈՐԱ. Այժմ դիմենք գործի, (Մի ձեռով ղրկելով Անահիտին, սկսում է նրա հետ անցուդարձ անել): Այդպես, ուրեմն, եղբայրդ եկել է: Երևակայում եմ, որքան փոխվել է: Բայց ո՞ւր է:

ԱՆԱՀԻՏ. Զբաղված է, շուտով, երևի, դուրս կգա:

ՖԼՈՐԱ. Զբաղված է, օհ՜, իհարկե, չէ որ այժմ բժիշկ է, դոկտոր:

ՍԵՆԵՔԵՐԻՄ, Անահիտ, ո՞վ է ձեռք տվել գրասեղանիս:

ԱՆԱՀԻՏ. Ոչ ոք, հայրիկ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Թերթերը քրքրելով): Բաս ո՞ւր է իմ «Բարոյական լիլիպուտներ» անունով հոդվածը: Ահա գտա: (Պենսնեն դնելով սկսում է կարդալ):

ԱՆԱՀԻՏ. Հայրիկ, մենք քեզ խանգարո՛ւմ ենք: Գնանք իմ սենյակը, Ֆլորա:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ո՛չ, ոչ, մնացեք այստեղ: Ես չեմ պարապում, այլ այնպես: Ինձ հաճելի է ձեզ լսել:

ՖԼՈՐԱ. Ասա է, Անահիտ, շա՞տ ես ուրախ: Իհարկե, մի հատիկ եղբայր ունենալ, հինգ տարի չտեսնել և հանկարծ մի օր տեսնել: Ես եղբայր չունիմ, բայց զգում եմ ինչ ասել է քրոջ սեր:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Դու էլ ունեիր, Ֆլորա, դու էլ ունեիր եղբայր: Երեք տարեկան էիր, երբ նա մեռավ բկացավից: Գավրիլը մի սիրուն տղա էր կապույտ աչքերով, գանգուր մազերով:

ՖԼՈՐԱ. Ես հիշում եմ նրան երազի պես:

ԱՆԱՀԻՏ. Ես էլ: Միտս է, նրա սպիտակ դագաղը դուրս տանելիս հանգուցյալ մայրդ ուշաթափվեց:

ՍԵՆԵՔԵՐԻ. Ճիշտ այնպես, ինչպես Ալեքսանդրը եկեղեցում ընկավ թևերիս վրա Օվսաննայի դագաղը դուրս տանելիս: Ալեքսանդրը սիրում էր յուր կյանքի ընկերուհուն: Օվսաննայի մահը նրա համար սոսկալի հարված եղավ:

ԱՆԱՀԻՏ, Հայրիկ, թողնենք այդ խոսակցությունը. Ֆլորան տխրում է:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Ետ նայելով): Այդ՞, ի՞նչ, տխրո՛ւմ է: Ես չեմ թողնիլ, արգելված է: Այսօր մեր տանը տոնախմբություն է:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Գալիս է խորքի դռներից, հագուստի թևերն ուղղելով): Ֆլորա՛:

ՖԼՈՐԱ. (Անմիջապես տխրությունն անցել է): Ահ, տիկին Կատարինե, աչքդ լույս, շնորհավորում եմ: (Համբուրվում է): Վերջապես, ձեր փափագին հասաք:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Հառաչում է, բայց աշխատում է ուրախ ձևանալ): Այո, սիրելիս, հասա... գլխարկդ վերցրու, նստիր: Այսօր դու մեզ մոտ ես ճաշում: Արտաշեսի ընկերները պիտի գան:

ՖԼՈՐԱ. Ուրախությամբ կծանոթանամ Արտաշեսի ընկերների հետ, բայց ճաշի չեմ կարող մնալ, դուք գիտեք, տիկին Կատարինե, որ հայրիկս առանց ինձ երբեք չի ճաշում:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Ցածր ձայնով ե խորհրդավոր): Գալիս է:

ՏԵՍԻԼ 6

ՆՈՒՅՆՔ և ԱՐՏԱՇԵՍ

ԱՐՏԱՇԵՍ. (Գալիս է արագ քայլերով ձախ կողմի դռներից, ձեռքին երկու ծրար); Անահիտ, այստեղ մոտիկ փոստարկղ կա՞:

ԱՆԱՀԻՏ. Այո, ուղիղ մեր տան դեմ ու դեմ:

ԱՐՏԱՇԵՍ. Տար այս նամակները և քո ձեռքով գցիր:

ԱՆԱՀԻՏ. (Առնում է ծրարները և դնում խորքի դռներով):

ՖԼՈՐԱ. Հարգանքներս մեր մեծապատիվ դոկտորին:

ԱՐՏԱՇԵՍ. (Նոր միայն նկատելով Ֆլորային): Ա՛խ, օրիորդ Ֆլորա, ներողություն: (Ձեռ է տալիս բարեկամաբար): Ինչպե՞ս եք, իմ նախկին աշակերտուհի: Ավարտեցի՞ք գիմնազիան:

ՖԼՈՐԱ. Արդեն երկու տարի է:

ԿԱՏԱՐԻՆԵ. Եվ ինչպես, ոսկե մեդալով: Ֆլորան ամբողջ գիմնազիայի աչքն էր...

ՖԼՈՐԱ. (Հեգնորեն): Եվ իմ դուրս գալուց հետո գիմնազիան կուրացել է: Տիկին Կատարինե, դուք միշտ ինձ շփոթեցնում եք:

ԱՐՏԱՇԵՍ. Ի՞նչպես է ձեր հայրը, օրիորդ: Մի ժամանակ նա ինձ սիրում էր:

ԿԱՏԱՐԻՆԵ. Նա այժմ էլ քեզ սիրում է և միշտ հարցնում է քո մասին: Դու պարտավոր ես առաջին վիզիտդ նրան անել:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Միշտ զբաղված գրասեղանի քով: Մեկուսի): Ըհը, թռչնորսը թակարդը դրեց: (Ետ է մտիկ անում պենսնեի վերևից): Տեսնե՛նք:

ԱՐՏԱՇԵՍ. Մայրիկ, ես վիզիտներ անելու մտադրություն չունիմ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Զարախնդությամբ, մեկուսի): Ըհը, կերա՛ր... (Երեսը դարձնում է դեպի գրասեղան):

ԿԱՏԱՐԻՆԵ. Բայց մի՞թե չես կամենալ տեսնել հորդ բարեկամին,

ԱՐՏԱՇԵՍ. Այդ իմ բարոյական պարտքն է: Ես միշտ հարգել եմ պարոն Ալվանդյանին: (Հրավիրելով Ֆլորային նստել, շարունակում է նրա հետ խոսել ցածր):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ալեքսանդրիդ պիտի միշտ հարգել, նա ազգասեր հայ է:

ԱՆԱՀԻՏ. (Վերադառնում է խորքի դռներից հուզված և մոտենալով շշնջում է Սենեքերիմի ականջին):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Վախեցած): Մի՞թե: (Արագ քայլերով գնում է խորքի դռներով):

ԿԱՏԱՐԻՆԵ. (Տեսնելով, որ Արտաշեսը սիրալիր խոսակցում է Ֆլորայի հետ, ուրախացել է): Անահիտ, համոզիր Ֆլորային, որ ճաշի մնա: (Ինչ-որ վերցնում է պահարանից, գնում խորքի դռներով և դարձյալ ետ է գալիս):

ՖԼՈՐԱ. (Ոգևորված): Մի՞տդ է, Անահիտ, ինչպես մի երեկո Արտաշեսը մեզ վախեցրեց: Նա յուր սենյակում դասեր էր պատրաստում, մենք այստեղ թեյ էինք խմում: Հանկարծ լսեցինք նրա գոռոցը. «Վրե՛ժ, վրեժ պետք է առնել այդ գազաններից»: Մենք վազեցինք նրա սենյակը և ի նչ տեսնենք:

ԱՆԱՀԻՏ. Գլուխը սեղանի վրա դրած, հեկեկում է:

ԱՐՏԱՇԵՍ. (Մռայլ): Հիշում եմ ես այդ երեկոն: Դա այն գազան գավառապետ Դուրազովի պատմությունն էր, որ կարդացի ընկերոջս նամակում, և ինձ վրա ազդեց այնպես: Նա մի գյուղի բնակիչներին ամբողջ օրը պահել էր անձրևի տակ չոքած և հետո ծեծելով սպանել էր երկու ծեր գյուղացիների է

ԿԱՏԱՐԻՆԵ. Այդ տեսակ բաները երեխայությունից ազդում էին քեզ վրա:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Ետ է գալիս խորքի դռնից նկատելի շփոթված): Արտաշես, այստեղ եկ:

ԱՐՏԱՇԵՍ. (Մոտենում է հորը):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Շշնջյունով ինչ-որ ասում է Արտաշեսին):

ԿԱՏԱՐԻՆԵ. (Զբաղեցնում է Ֆլորային): Ի՞նչպես ես հավանում Արտաշեսին:

ԱՆԱՀԻՏ. (Հեռվից անհանգիստ նայելով հորն ու եղբորը): Մայրիկ, զգույշ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Ցածր ձայնով): Այդ ի՞նչ է նշանակում:

ԱՐՏԱՇԵՍ. Ինչի՞ մասին էին հարցնում:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ո՞րտեղից ես եկել, ե՞րբ, քանի՞ ժամանակ պիտի մնաս:

ԱՐՏԱՇԵՍ. Դատարկ բան է, մի անհանգստանար, սովորական ոստիկանական Հարց-փորձ է... (Նորից մոտենում է Ֆլորային):

ԿԱՏԱՐԻՆԵ. Արտաշես, ճշմարիտ չէ՞, որ Ֆլորան շատ է փոխվեր: Մտիկ արա, դու այսպիսի սիրուններ շատ ես տեսել քո Ռուսաստանում:

ՖԼՈՐԱ. (Կարմրելով): Տիկին Կատարինե, եթե այդպես խոսեք, ես այլևս ձեր տուն չեմ գալ: (Վեր է կենում):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Կատաղած): Կին, զգույշ խոսիր:

ԱՐՏԱՇԵՍ. (Լուրջ և խիստ): Մայրիկ: ես քեզ արգելում եմ այդ տեսակ խոսակցություն իմ ներկայությամբ: Նստեցեք, օրիորդ այդ մի անզգույշ դարձված էր:

ԿԱՏԱՐԻՆԵ. (վշտացած և ամաչելով): Դե լավ, ի՞նչ ասացի, որ ամեն կողմից հարձակվում եք վրես: Դուք խոմ օտարներ չեք, մանկությունից եք ճանաչում միմյանց:

ԱՆԱՀԻՏ. Ահ, կարծեմ գալիս են: (Շտապով գնում է խորքի դռնով):

ՏԵՍԻԼ 7

ՆՈՒՅՆՔ, ՏԻԳՐԱՆ, ՀՐԱՆՏ և ՆՈՅԵՄԶԱՐ

ՏԻԳՐԱՆ. (Հեզ դեմքով, համեստ ձևերով երիտասարդ է, մաքուր հագնված): Բարով ձեզ: (Արտաշեսին ձեռ է տալիս, մյուսներին քաղաքավարի գլուխ տալով):

ՀՐԱՆՏ. (Բավական երկայն խճճված մազերով, նեղ ճակատով, լայն կզակով և խորն ընկած վառ, անհանգիստ աչքերով երիտասարդ է: Հագնված է շատ անփույթ: Անփույթ են և նրա ձևերը, երբեմն նույնիսկ կոպիտ): Ողջույն, ընկեր: (Ամուր թափով սեղմում է Արտաշեսի ձեռքը և հագիվ ուշադրություն դարձնում մյուսների վրա):

ՆՈՅԵՄԶԱՐ. (Մտնում է ներս մյուսներից ուշ, Անահիտի ուղեկցությամբ: Շիկահեր, կապույտ աչքերով, մի քիչ տղամարդային, բայց ոչ կոպիտ ձևերով օրիորդ է: Հագած է հասարակ ասվյա պարզ սևագույն շրջագգեստ, տղամարդի օձիք, փողկապ, պարզ գլխարկ առանց փետուրի կամ ծաղիկների): Բարև ձեզ: (Արտաշեսի ձեռը սեղմելով, ընդհանուրին գլուխ է տալիս):

ԱՐՏԱՇԵՍ. (Հասարակ ձևով ներկայացնելով): Իմ ընկերները: Իմ ծնողներն ու քույրը: օրիորդ Ալվանդյան: Միմյանց բարևում են:

ԱՆԱՀԻՏ. (Հյուրերին, աթոռներ է տալիս): (Ոմանք նստում են, ոմանք կանգնած մնում):

ՀՐԱՆՏ. (Անփույթ ընկղմվում է աթոռի վրա):

ԿԱՏԱՐԻՆԵ. (Տիգրանին). Դուք տիկին Վարվառե Ներսիսյանի որդին չե՞ք:

ՏԻԳՐԱՆ. (Քաղաքավարի): Այո, տիկին:

ԿԱՏԱՐԻՆԵ. Ավարտեցի՞ք ձեր ուսումը:

ԱՐՏԱՇԵՍ. Երկու ֆակուլտետ — բնագիտականը և իրավաբանականը:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Հրանտին): Ինձ թվում է, որ ես ձեզ մի տեղ տեսել եմ:

ՀՐԱՆՏ. Անշուշտ երկու գարադավոյների մեջ վզակոթիս տալիս:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ո՛չ, ես ձեզ տեսել եմ մի բազմամարդ ժողովում: Դուք ճառ էիք ասում, շատ տաքացած էիք խոսում, բայց բովանդակությունը մոռացել եմ:

ՀՐԱՆՏ. Սարսափի անհրաժեշտության մասին: Ինձ ուրիշ նյութ չի հետաքրքրում: Ծխախոտ ունիք:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Համեցե՛ք: (Առաջարկում է ծխախոտի տուփը):

ՀՐԱՆՏ. (Ծխախոտը վերցնում է և վառում Սենեքերիմի առաջարկած լուցկուց, ոչ մի նշանով շնորհակալություն չհայտնելով):

ԱՆԱՀԻՏ. (Որ ցածր խոսակցում էր Նոյեմզարի և Ֆլորայի հետ): Այո, օրիորդ, ուսուցչուհի եմ, թե՛ դպրոցում և թե՛ մասնավոր տներում:

ՆՈՅԵՄԶԱՐ. Վարժությունը համակրելի արհեստ է, բայց մարդու ներվերը քայքայում է:

ՀՐԱՆՏ. (Անուշադիր թողնելով Սենեքերիմին): Նոյեմզարս էլ երեք տարի, եթե կարելի է ասել, կրթել է մատաղ սերունդը: Բայց այն օրից, երբ վերջապես, հասկացել է, թե հրդեհի ժամանակ ալելույա չեն երգում, թողել է և անցել մեր բանակը:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ձեր բանա՛կը: Այդ ի՞նչ բանակ է:

ՀՐԱՆՏ. Արտաշեսը ձեղ կբացատրի: Թյու, ձեր ծխախոտը շատ թույլ է: (Ձգում է հատակի վրա ու ոտով հանգցնում):

ԿԱՏԱՐԻՆԵ. (Հրանտին): Դուք ո՞րտեղ եք ավարտել ձեր ուսումը:

ՀՐԱՆՏ. Տարրականը բանտում, միջնակարգը աքսորում, իսկ բարձրագույնին դեռ չեմ արժանացել:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Ապշած ու սարսափած հեռանում է Հրանտից):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Միամտաբար ծիծաղելով): Այդ լավ ասացիք: Հուսով եմ, որ բարձրագույն ուսումն էլ կանցնեք հայրենիքի համար:

ՀՐԱՆՏ. Մենք հայրենիք չունենք:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ուզում եմ ասել հայ ազգի համար:

ՀՐԱՆՏ. Մենք ազգ չենք ճանաչում:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Ցնցվելով): Իա՛, ի՜նչպես թե ազգ չեք ճանաչում: Ոտքի է կանգնում և մի զարմացական հայացք ձգելով Հրանտի վրա ոտից մինչև գլուխ, հեռանում է):

ՆՈՅԵՄԶԱՐ. (Շարունակ Ֆլորայի և Անահիտի հետ խոսում): Ասում են հայ օրիորդները ծայրահեղ ազգասերներ են: Դո՞ւք էլ:

ԱՆԱՀԻՏ. (Դրական և կտրուկ): Այո՛, օրիորդ:

ՆՈՅԵՄԶԱՐ. Ինչո՞ւ այդպես խիստ եղանակով ասացիք:

ԱՆԱՀԻՏ. Որովհետև պարծենում եմ դրանով:

ՆՈՅԵՄԶԱՐ. (Հեգնորեն ժպտալով): Կեցցե՛ք: (Դառնալով Ֆլորային): Գուցե դո՞ւք էլ, օրիորդ:

ՖԼՈՐԱ. Չգիտեմ, այդ մասին դեռ չեմ մտածել:

ՆՈՅԵՄԶԱՐ. Մեր ժամանակում դեռ չե՞ք մտածել: Հետաքրքրական է: Թույլ կտա՞ք, օրիորդ, ձեզ հետ մոտիկ ծանոթանալու:

ՖԼՈՐԱ. Ուրախ կլինեմ: Խնդրեմ մի օր շնորհ բերեք մեր տուն:

ՆՈՅԵՄԶԱՐ

ԱՆԱՀԻՏ. § Շարունակում են խոսել ցածր ձայնով:

ՖԼՈՐԱ.

ՆԱԶԱՆԻ. (Երևում է խորքի դների մեջ մի ձեռին դանակ, մյուս ձեռում մի բադրջան, թևերը ծալած): Խանըմ, մին էստեղ եկ:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Շտապով դնում է. Նազանուն նշաններով հանդիմանում է և նրա հետ հեռանում խորքի դռներով):

ՀՐԱՆՏ. Հետաքրքրական է իմանալ այդ ի՞նչ պատկերներ են զարդարում այս պատերը: (Վեր է կենում ու ձեռքերը պանթալոնի գրպանները դնելով, մտիկ է անում պատկերներին):

ՏԻԳՐԱՆ. (Որ շարունակ առանձին խոսակցում է Արտաշեսի հետ): Այդ բոլորն ապացուցանում է, որ դու պետք է զգույշ լինես: Վասոյին արդեն բռնել են:

ԱՐՏԱՇԵՍ. (Ցածր): Ճշմարի՞տ: Ե՞րբ:

ՏԻԳՐԱՆ. Այո: Երեկ երեկո: (Շարունակում է շշնջյունով):

ԿԱՏԱՐԻՆԵ. (Ետ է գալիս խորքի դռներով): Անահիտ, կամաց-կամաց սեղանը պատրաստենք:

ԱՆԱՀԻՏ. Այո, մայրիկ: (Ֆլորային և Նոյեմզարին): Ինձ ներեցեք: (Սկսում է մորն օգնել, պահարանից ճաշի սեղանի վրա տեղափոխելով ամաններ, դանակ, պատառաքաղ և այլն):

ՀՐԱՆՏ. Այո, այո, բոլորը միմյանց համապատասխանում են:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Ֆլորային մոտենալով: Հրանտին): Դուք, անկասկած ամենքին ճանաչո՞ւմ եք:

ՆՈՅԵՄԶԱՐ. (Մոտենում է Արտաշեսին և Տիգրանին):

ՀՐԱՆՏ. (Հեգնաբար): Ո՞վ չի ճանաչում հայ ազգի, այսպես կոչված, սյուներին: Եթե Արտաշեսն երեկ միայն մտած չլիներ այս տաճարը, կարելի էր կարծել, որ նա էլ կռապաշտ է:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ֆլորա, նա ի՞նչ է ասում (Նայում է հեռվից Հրանտին ոտից գլուխ):

ԿԱՏԱՐԻՆԵ. (ճաշի սեղանի մոտ դրված): Անահիտ, ութ հոգի չենք:

ԱՆԱՀԻՏ. Յոթ, մայրիկ Ֆլորան չի ուզում մնար:

ՀՐԱՆՏ. (Նայում է պատկերներին): Ոչ, ոչ, այստեղ նայեցեք, շատ հետաքրքրական է, շատ:

ՆՈՅԵՄԶԱՐ. (Տիգրանին): Այդ կոպիտը ծերունուն վիրավորելու է:

ՏԻԳՐԱՆ. Չպիտի թույլ տալ: (Ցածր): Հրանտ, արի այստեղ:

ՀՐԱՆՏ. Վարդան Մամիկոնյանից սկսած մինչև մեր ժամանակակիցները: Այս ի՞նչ է, մի ծերունի եպիսկոպոսի միրուքով, սուրը ձեռին վրեժ է աղաղակում: Օհո՛, հո դրա՞նք էլ կան, նորագույն հերոսները խորհրդավոր դեմքով: Հայաստանի փրկիչնե՛ր: Ի՞նչ ինքնահավան, անբարտավան դեմքեր: Ազգային բոստանի խրտվիլակներ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Բավական գրաված մոտենում է Հրանտին): Այդ ի՞նչ եք ասում, պարոն: Դրանք մեր ազգային Նորագույն նահատակներ են:

ՏԻԳՐԱՆ. (Բռնելով Հրանտի թևը): Ձսպիր քեզ, տեղը չէ:

ՀՐԱՆՏ. (Չլսելով, միշտ ձեռները պանթալոնի գրպաններում): Որը վեղարով, որը զրահավորված, որը գրիչը ձեռին, որը թուրը, պատրաստ են հարվածելու իրենց ազգի թշնամիներին: Հեպ, ահա և հայկական պատերի սովորական պաստառը — «Ոգի Հայաստանի»: Մի հաստավիզ բուրժուա գեղեցկու ավերակների վրա նստած: (Դադարում է նայել): Սիրահարված ինքն իր գեղեցկության վրա:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Հազիվ զսպում է կատաղությունը): Այդ ինձ նվիրել է իմ նախկին աշակերտուհիներից մեկը:

ՀՐԱՆՏ. Որին, անշուշտ, կրթել եք այդ նկարի ոգով:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Թեկուզ այդպես, երիտասարդ պարոն, թեկուզ այդպես, ի՞նչ կասեք, արդյոք:

ՀՐԱՆՏ. (Կոշտ): Այն կասեմ, որ այդ մինչև անգամ ազգասիրություն չէ, այլ ազգամոլություն:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Որին, հուսով եմ, դեմ չեք դուք և ոչ մեկը ներկա եղողներից:

ՀՐԱՆՏ. Հրաժարվելով հրաժարիմք ի մոլությունն:

ՏԻԳՐԱՆ. (Ուժգին քաշելով Հրանտի թևը): Լռելո՞ւ ես, վերջապես, թե չէ:

ԱՐՏԱՇԵՍ. (Մի անկյունից անհանգիստ դիտում է):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ահա թե ինչ, ուրեմն դո՞ւք...

ՀՐԱՆՏ. Մենք այդ բոլորը պիտի գցենք պատմության արխիվը և փոխարենը մեր պատերին պիտի կախենք աշխատավորի պատկերն՝ իր կոշտ ձեռներով և խորշոմած ճակատով:

ՆՈՅԵՄԶԱՐ. (Անհանգիստ): Հրանտ: Այդպես չի կարելի:

ՀՐԱՆՏ. (Խիստ եղանակով): Հապա ինչպես, երկար տարիներ մարդիկ մոլորեցրել են ժողովրդին, պահել են խավարի մեջ, մի թե բավական չէ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Լսում եք, երիտասարդներ և օրիորդներ: Լսո՞ւմ ես, Արտաշես: Այդ տղան քո ընկերը չէ, սխալմամբ է մտել այստեղ: Ո՞վ է մոլորեցրել, պարոն, ո՞վ...

ՀՐԱՆՏ. Բոլոր այդ երևելիները, մեր պապերը, հայրերը, դուք, սերնդե սերունդ, համառ մոլեռանդությամբ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Անահի՛տ, այդ ի՞նչ է ասում:

ԱՆԱՀԻՏ. (Մոտենալով հորը): Հայրիկ, մի՛ վրդովվիր:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Շփոթված): Այդ մարդը հյուրերին պատվել չգիտե: Միշտ վեճ: (Գնում է խորքի դռներով):

ՆՈՅԵՄԶԱՐ. (Մոտեցել է Արտաշեսին): Ես ցավում եմ, որ այդ կոպիտին հետս բերեցի:

ՖԼՈՐԱ. (Շփոթված դիտում է մերթ մեկին, մերթ մյուսին):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (ճակատը շփելով): Այդպես չի կարող լինել: Այստեղ մի թյուրիմացություն կա: Մի՞տքս է թուլացել, թե ականջներս լավ չեն լսո՞ւմ: Բայց նա պարզ խոսեց, համարձակ, աներկյուղ:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Ետ է գալիս խորքի դռներով): Ճաշը պատրաստ է:

ԱՆԱՀԻՏ. Խնդրեմ, նստեցեք, պարոններ: (Նոյեմզարին):

Խնդրեմ, օրիորդ:

ՖԼՈՐԱ. Ինձ ներեցեք, Ցտեսություն: (Գլուխ է տալիս և. գնում է խորքի դռներով, մերժելով Կատարինեի թախանձանքը, որ դռների մոտ մի անգամ ևս աշխատում է նրան համոզել ճաշի մնալու):

ՏԻԳՐԱՆ. (Բռնելով Հրանտի թևը, տանում է բեմի խորքը): Դու բոլորովին տակտ չունիս: Դու մինչև անգամ կոպիտ ես: (Այստեղ, մինչև Արտաշեսն ու Սենեքերիմը, խոսում են ավանսցենի վրա, բեմի խորքում Կատարինեն աշխատում է Հրանտին համոզել ճաշի մնալու: Անահիտը խոսում է Նոյեմզարի ու Տիգրանի հետ):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Աշխատում է իրան զսպել: Բռնում է Արտաշեսի թևից ու քաշում նրան, դեպի ավանսցեն): Արի այստեղ: Ի՞նչ ասաց այդ տղան:

ԱՐՏԱՇԵՍ. (Մռայլ): Ներողամիտ եղիր, Հրանտը հայտնի է իր կոպտությամբ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Աա, հայի կոպտությունով ինձ չես կարող զարմացնել: Նրա ասածների միտքն է գլխավորը: Ասա, նա քո ընկե՞րն է:

ԱՐՏԱՇԵՍ. Այո՛:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Դու համաձա՞յն ես նրա ասածների հետ:

ԱՐՏԱՇԵՍ. (Կամենում է հեռանալ): Այդ մասին հետո, գնանք դեռ ճաշելու:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ո՛չ, ո՛չ, ես չեմ կարող ճաշի նստել մինչև որ չիմանամ ո՞վ ես դու, ովքե՞ր են քո ընկերները:

ԱՐՏԱՇԵՍ. (Հաստատ): Իմ ընկերները, հայրիկ, իմ գաղափարակիցներն են: Ես ուրիշ ընկերներ չեմ ճանաչում:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Բայց այդ տղան այն չասաց, ի՞նչ որ դու այստեղ մի ժամ առաջ: Երբ դռների մոտից լսեցի քո վեճը մորդ հետ, ե՞րբ ականջիս հասան քո կրակոտ խոսքերը, հափշտակվեցի, ուզում էի հարձակվել քեզ վրա, գրկեի, համբուրեի: Դու անցար քո սենյակը և ես ասացի, ահա իմ զավակը, ահա իմ իսկական ժառանգը:

ԱՐՏԱՇԵՍ. Ինչի՞ մասին էին իմ խոսքերը, հայր:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Մեր վեհ գործի մասին, այնպես չէ՞:

ԱՐՏԱՇԵՍ. Ձեր վեհ գործը մերը չէ, իսկ ձեր գործով դու չես կարող հափշտակվել:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ուրեմն, մենք ովքե՞ր ենք, դու և ես:

ԱՐՏԱՇԵՍ. (Սառը): Դու և ես, հայր, բոլորովին տարբեր աստվածներ ենք պաշտում:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Բռնելով որդու օձիքը): Հայ ես դո՞ւ, թե չէ՞:

ԱՐՏԱՇԵՍ. Ես ազգություն չեմ ընդունում:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Բաց թողնելով Արտաշեսի օձիքը, ձեռը հենում է աթոռի մեջքին բարձր ու դողդոջուն ձայնով): Անիծվի՛ս դու:

ԲՈԼՈՐԸ. (Բեմի խորքից ապշած նայում են):

Վարագույր

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Տեսարանը ներկայացնում է Ալվանդյանների բնակարանը: Ընդարձակ հյուրասենյակ, խորքում երկու դռներ, որոնցից աջ կողմինը տանում է սեղանատան, ձախինը՝ Ֆլորայի սենյակը: Աջ պատի մեջ երկու դռներ, ավանսցենի կողմինը՝ դեպի Ալեքսանդրի առանձնասենյակը, երկրորդը դեպի նախասենյակ: Ձախ պատը ներկայացնում է երկու լուսամուտ, որոնց միջև մի դուռ դեպի պատշգամբ:

Բեմի մեջտեղում կլոր սեղան, գունավոր սփռոցով ծածկված, վրեն գեղեցկակազմ ալբոմներ ու պատկերազարդ հանդեսներ, քովը երեք կիսաբազկաթոռներ: Աջ պատի երկու դռների միջև, գահավորակ ու բազկաթոռներ: Գահավորակի վերևում կախված է Ֆլորայի հանգուցյալ մոր մեծադիր պատկերը: Հատակի վրա գորգեր, պատերի վրա նկարներ: Խորքի պատի առջև հայելի: Ամենուրեք փոքրիկ և մեծ ծաղկամաններ: Ձախ պատի մոտ, լուսամուտի առջե. պիանինո: Վառարան չի երևում, մի գեղեցիկ էկրան ծածկում է երկաթե շոգեկիրը:

ՏԵՍԻԼ 1

ԴԱՆԻԵԼ ԵՎ ՍՈՖԻԱ

ՍՈՖԻԱ. (Երիտասարդ, աշխույժ աղջիկ է: Վարագույրը բարձրանալիս կարմիր փետուրներից կազմված է փոշեվանով սրբում է բազկաթոռները փոշուց և կարգի է բերում հյուրասենյակը, հանդարտ երգելով):

ԴԱՆԻԵԼ. (Կարմիր այտերով, մեծ քթով երիտասարդ է: Հագած է պիջակ, օսլայած շապիկ: Մեջքին կապած է սպիտակ գոգնոց: Պատշգամբի դռներից քլերս է բերում մի մեծ ծաղկաման ու տնքտնքալով դնում է մի անկյունում). Հը՛ հը՛, էս էլ պրծանք: Վալլահ, էս ծաղիկները հոգիս բերանս բերին: Աստծու տված օրը դուրս բեր, ջրիր ու ներս բեր, «նակազանի, բոլշա նիչավո»: (ճակատի քրտիքը սրբում է գոգնոցով):

ՍՈՖԻԱ. Քիչ է մնում հա, շոգերը մոտենում են, շուտով կհավաքեն, կտանեն պարտեզ մինչև հոկտեմբեր:

ԴԱՆԻԵԼ. Յանի որ ամառ-ձմեռ բազում թողնեն հաթամամութ կլինի՞: Հընսկանում չեմ, տա տուն ա, թա բոստան: Ստեղ եշի, կասես Փիթոևանոց բաղչան լինի: Մախլա՛ս: (Գլուխը շարժելով, դիմում է աջ պատի երկրորդ դռները):

ՍՈՖԻԱ. Դանիել...

ԴԱՆԻԵԼ. (Կանգ է առնում, բայց ետ չի նայում): Հա, հի՞նչ ըս օզում: Ձալդ ասա, պեն օնիմ:

ՍՈՖԻԱ. (Մոտենալով, ցածր ձայնով); Այն ո՞վ է նստած պարոնի սենյակում:

ԴԱՆԻԵԼ. Հի՞նչ գիտամ, մի չեշմեա գյավոր մարդ ա, քյաչալ գլխով: Օրի՞շ:

ՍՈՖԻԱ. Ես երեկ այստեղ չէի, Արտաշեսն էլի եկե՞լ էր:

ԴԱՆԻԵԼ. Պա ես քեզ համա շպիոն ը՞մ, թա կուրիեր: Ես հի՞նչ գիտամ եկել ա, թա ոչ: Խե՞րս հարցնում: (Նայում է Սոֆիային):

ՍՈՖԻԱ. Հենց այնպես: Այդ աղան այս տունը ոտ դնելուց հետո օրիորդը փոխվել է: Տխուր-տրտում օրը մինչև երեկո նստած է յուր սենյակում: Երեկ պարոնը հարցրեց. «Ֆլորա, այս ամառ որտե՞ղ ես ուզում, որ քեզ համար ամառանոց վարձեմ»: Օրիորդը պատասխանեց. «Ոչ մի տեղ»: Ուրեմն, այս տարի մենք ամառանոց չենք գնալու:

ԴԱՆԻԵԼ. (Զայրացած) Դմբո, հունց թա քինիլական չընք: Գործադուլ կա նեմ:

ՍՈՖԻԱ. (Ծիծաղելով): Մեն-մենակ:

ԴԱՆԻԵԼ. Պա հոնց: Պա ես էլ խարաբա շհարի շոգում պըտի հալվի մ հունց որ մեղրամոմ: Ամա հավատալ մի, աղան ուժա Կիսլոսկում դաշ ա փռնալ: Եշիլ մի, քո բարիշնան փարսիտ ա անըմ: (Գնում է ու կողմի երկրորդ դռներով):

ՏԵՍԻԼ 2

ԱԼԵՔՍԱՆԴՐ և ՍՈՖԻԱ

ԱԼԵՔՍԱՆԴՐ. (Ալեխառն ընչացքով, հստակ սափրած երեսով, բարի ու խելացի դեմքով մարդ է: Հագած է սև գույնի մարկետ, պանթալոն ու ժիլետ: Ձևերը ծանրաբարո և հանգիստ են: Դուրս է գալիս ծանր քայլերով աջ կողմի առաջին դռներից): Ֆլորան տա՞նն է:

ՍՈՖԻԱ. Այո:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Խնդրեցեք նրան այստեղ գալ:

ՍՈՖԻԱ. Իսկույն (Գնում է խորքի ձախ դռներով):

ԱԼԵՔՍԱՆԴՐ. (Ծանր քայլերով մոտենում է լուսամուտին, նայում է դուրս, ապա ետ է գալիս և նայում է գահավորակի վերևում կախված պատկերին և ծանր հառաչում):

ՏԵՍԻԼ 3

ԱԼԵՔՍԱՆԴՐ և ՖԼՈՐԱ

ՖԼՈՐԱ. (Դուրս է գալիս խորքի ձախ դռներից: Հագած է տնային պարզ հագուստ: Նկատելի տխուր է): Հայրիկ: (Համբուրվում է): Այսօր քեզ առաջին անգամն եմ տեսնում: Դու զբաղված էիր քո սենյակում մի պարոնի հետ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Նստիր, Ֆլորա, քեզ հետ գործ ունիմ: (Նստում է կիսաբազկաթոռներից մեկի վրա:

ՖԼՈՐԱ. (Նստելով հոր դեմ): Հրամայիր, հայրիկ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ես կտակս գրել տվեցի...

ՖԼՈՐԱ. (Անհանգիստ): Հայրիկ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Մի՛ տխրիր, աղջիկս, մահը մերն է, մենք մահինը: Վաղուց էր հարկավոր: Արդեն մոտենում եմ վաթսունին և շատ էլ առողջ չեմ զգում ինձ: Քանի խելքս գլխումս է, պետք է հոգամ քո մասին: Կտակիս ընդհանուր բովանդակությունն այս է. կարողությանս կեսը տալիս եմ զանազան ազգային գործերի համար: Ի միջի այլոց, հանգուցյալ մորդ անունով կբացվի մի ուսումնարան կպահվին որդեգիրներ: Մանրամասնությունների հետ կծանոթանա մահիցս հետո: Մյուս կեսը կարողությանս, որ հորիցս եմ ժառանգել, այս տան հետ թողնում եմ քեզ համար: Կտակակատար նշանակում եմ իմ բարեկամ Սենեքերիմ Սահառունուն, միակ անշահասեր մարդուն, որ ճանաչել եմ կյանքիս մեջ: Համաձայն ես:

ՖԼՈՐԱ. Հայրիկ, քո կամքն ինձ համար օրենք է:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ոչ, Ֆլորա, այդպես չէ: Դու գիտես, որ ես բեռնակալ հայրերից չեմ: Մանկությունից քեզ պահել եմ ազատ և, գոհություն աստծու, այսօր տեսնում եմ, որ ազատությունդ ի չարը գործ չես դրել: Բայց գլխավորն այս չէ, Ֆլորա, ես ունիմ մի մեծ հոգս, ահա այս մասին է, որ ուզում եմ քեզ հետ խոսել բարեկամաբար: Ասա ինձ, Ֆլորա, դու չես մտածում ամուսնանալու մասին:

ՖԼՈՐԱ. (Շփոթվելով): Հայրի՛կ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Մի՛ ամաչիր, դու երեխա չես: Ես փափագում եմ վիճակդ կարգավորված տեսնել, հետո մեռնել: Ֆլորա, ո՞ւմ ես հավանել մեր երիտասարդների մեջ:

ՖԼՈՐԱ. (Ավելի շփոթվելով): Չգիտեմ, հայրիկ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ասա, մի՛ քաշվիր: Ես քեզ համար ոչ միայն հայր եմ, այլև մայր: Ծերությանս մի նայիր, հոգով այնքան էլ խավար չեմ:

ՖԼՈՐԱ. Հայրիկ, կկամենայի, որ իմ հավանածը նախ և առաջ քեզ դուր գար: Ահա բոլորը, ինչ որ կարող եմ ասեր:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ապրիս, որ այդպես է, ուրեմն կարող ենք մի համաձայնության գալ: Տասը տարի է, որ մտքումս որոշած ունիմ քո փեսացուն:

ՖԼՈՐԱ. (Անհանգիստ): Հայրիկ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. (Ժպտալու): Հանգիստ կաց. իմ ընտրելին իսկ և իսկ քո հավանածն է: Ինչո՞ւ ես կարմրում, տեսնում ես, որ ես չեմ բարկանում: Ֆլորա, ես էլ գիտեմ, որ ամուսնական երջանկությունը ոչ փողի հետ է կապված և ոչ էլ դիրքի ու ծագման: Փառք աստծու, դու այնքան ունիս, որ բավական է քեզ էլ, քո ամուսնուն էլ: Արտաշեսը աղքատ ընտանիքի զավակ է, բայց Սենեքերիմի որդին է: Նա այնքան բարոյական է ու մաքուր, որքան յուր հայրը:

ՖԼՈՐԱ. Բայց դու նրան լավ չես ճանաչում, հայրիկ: Չէ՞ որ հինգ տարի է չես տեսել նրան:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Իմ հասակի մարդու համար, սիրելիս, բավական է մեկի հետ երկու անգամ խոսել, որ նրան ճանաչի ոտքից մինչև գլուխ: Արտաշեսը երեք-չորս անգամ եկել է ինձ մոտ յուր հարգանքները հայտնելու: Ես երկար խոսել եմ հետը:

ՖԼՈՐԱ. (Անհանգիստ շարժում է անում):

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Մի՛ վախենար, քո մասին չենք խոսել: Նա իհարկե, փոխվել է, շատ է փոխվել: Նա այժմ կատարյալ տղամարդ է, խելքը գլխին, բայց նրա սիրտը և հոգին չեն փոխվել: Ֆլորա, Արտաշեսը նման չէ մեր այն երիտասարդներին, որոնք Ռուսաստանից կամ Եվրոպայից վերադառնում են... հոգով էլ, մարմնով էլ ապականված: Ես շատերի հետ եմ խոսել և ոչ մեկն ինձ վրա այնպիսի լավ տպավորություն չի արել: Ես իմն ասացի. Ֆլորա, այժմ հերթը քոնն է: Ես լսում եմ, ասա, ոչ մի բան մի թաքցնիր:

ՖԼՈՐԱ. Հայրիկ, քեզ նման հորից գաղտնիք ունենալը հանցանք է: Ես Արտաշեսին հավանում եմ, ճշմարիտ է, բայց այս է բոլորը, ուրիշ գաղտնիք չունիմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ուրեմն ձեր մեջ խոսակցություն չի՞ եղել:

ՖԼՈՐԱ. Ո՛չ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Եվ ո՞չ մի ակնարկ նրա կողմից:

ՖԼՈՐԱ. Ո՛չ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Նա համակրո՞ւմ է քեզ:

ՖԼՈՐԱ. Չգիտե՞մ: Նա ինձ հետ վարվում է առաջվա պես, ինչպես յուր քրոջ հետ, պարզ, հասարակ, բայց վերին աստիճանի համեստ: Հայրիկ, նա շատ մտախոհ է: Ինձ թվում է որ նրա հոգու վրա ծանրանում է մի մեծ հոգս:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Նա ինձ ասում էր, թե այստեղ չի մնալու:

ՖԼՈՐԱ. Այո, նա շուտով գնալու է, գուցե վաղը կամ մյուս օրը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ո՞ւր,

ՖԼՈՐԱ. Չգիտեմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Էհ, տերը նրա հետ, որ դնում է: Ֆլորա, մի՛ շտապիր, լավ մտածիր ապագայիդ մասին, ես քեզ տալիս եմ կատարյալ ազատություն: Բայց ընտրությունդ շատ էլ մի հետաձգիր: Այս գիշեր դարձյալ երազումս մորդ տեսա: Այս երրորդ անգամն է, որ նա կանչում է ինձ յուր մոտ: (Վեր է կենում):

ՖԼՈՐԱ. (Վեր է կենում տխրելով): Հայրիկ, այդպես մի՛ խոսիր:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. (Մոտենամ է յուր կնոջ պատկերին): Ահա նա յուր հեզ կերպարանքով: Ինչպես նա բարի էր Ֆլորա: Նրան ամենքը հարգում էին ու սիրում: Նա էլ յուր հոր միակ զավակն էր քեզ պես: Նրա հայրը մի ազնիվ զինվորական էր: Լավ կին էր հանգուցյալը:

ՖԼՈՐԱ. (Նույնպես զգացվել է): Ութ տարի է մեռել է, այսօր էլ աչքերիս առջև է նրա դագաղը ծաղիկներով ծածկված: (Թաշկինակը մոտեցնում է աչքերին):

ԱԼԵՔՍԱՆԴՐ. (Հուզումը զսպելով): Դու լա՞ց եղար... Այդ չեղավ: Մի՛ նայիր ինձ, ես ծեր եմ: Լացը քեզ չի սազում, ուրախ կաց: Այդպես: Ուշադրություն մի դարձրու ինձ, վերջերս ներվերս մի քիչ թուլացել են: Դե, եթե սիրում ես ինձ, նստիր, և մի ուրախ բան նվագիր: Իսկ ես պիտի գնամ նոտարի մոտ կտակիս սրբագրությունը կարդալու: Հետո պետք է Սենեքերիմին տեսնեմ: Լսեցի՛ր, նստիր ու մի ուրախ բան նվագիր: Ցտեսություն: Համբուրում է, Ֆլորային, ու գնում աջ կողմի երկրորդ դռներով): Նվագիր, ես սիրում եմ, երբ դու ինձ ճանապարհ ես դնում և ընդունում երաժշտությամբ:

ՖԼՈՐԱ. (Ուղեկցում է հորը մինչև դռները, նայում է ետևից): Բարի մարդ: Նա դեռ չգիտե... (Մոտենում է դաշնամուրին, մի քանի վայրկյան նվագում է ուրախ եղանակ: Շուտով վեր է կենում, լուսամուտով նայում դուրս): Նախասենյակից լսվում է էլեկտրական զանգի հնչյուն:

ՖԼՈՐԱ. (Ցնցվում է և ետ նայում):

ՍՈՖԻԱ. (Գալիս է խորքի ձախ դռներից): Օրիորդ տա՞նն եք: (Գնում է նախասենյակ):

ՖԼՈՐԱ. Այո, այո: (Մեկուսի): Սիրտս վկայում է, որ նա է (Շտապով դնում է խորքի ձախ դռներով և իսկույն ետ է գալիս մի փոքրիկ արկղիկ ձեռքին: Արկղիկը դնում է դաշնամուրի վրա և նայում է դեպի նախասենյակի դռները):

ՏԵՍԻԼ 4

ՖԼՈՐԱ և ԱՐՏԱՇԵՍ

ԱՐՏԱՇԵՍ. (Գալիս է աջ կողմի երկրորդ դռներից: Նկատելի հուզված է: Հագած է նույն հագուստը, միայն կապույտ շապկի փոխարեն օսլայած շապիկ ու ժիլետ): Ֆլորա՛, բարև: (Սեղմում է Ֆլորայի ձեռն ընկերաբար, մյուս ձեռում պահած լայնեզր փափուկ գլխարկը հմլած):

ՖԼՈՐԱ. Բարև: Այդ ինչո՞ւ համար դողում է ձեր ձեռը: Գրազ կգամ, որ դարձյալ ընդհարվել եք ձեր հոր հետ:

ԱՐՏԱՇԵՍ. Չեք սխալվում: (Նստում է մեջտեղի կիսաբազկաթոռներից մեկի վրա): Ընդհարվեցի, այո, և այս անգամ այնպես, որ նա ինձ անվանեց ազգավաճառ:

ՖԼՈՐԱ. Մի՞թե: Չէի կարծում, որ գաղափարների տարբերությունը կարող է այդպես գրգռել հայրերին ու զավակներին միմյանց դեմ: (Նստում է Արտաշեսի դեմ):

ԱՐՏԱՇԵՍ. Իմ հայրը մոլեռանդ հայ է, ես ճանաչում եմ համամարդկայինը: Նա համառ է յուր սկզբունքների մեջ — ես ոչ մի քայլ չեմ զիջում նրան: Ինչպես նա է ուղղամիտ և շիտակ — նույնպես և ես չե՛մ կարող կեղծել: Այս տեսակ հակառակորդների մեջ հաշտություն չի կարող լինել:

ՖԼՈՐԱ. Բայց հարգանք կարո՞ղ է լինել:

ԱՐՏԱՇԵՍ. Եթե հարգանքը մի զգացում է և ոչ ձև, ապա այն չպիտի աղավաղել: Իմ կարծիքով իսկական հարգանք կարելի է ունենալ դեպի այն մարդիկ, որոնց գաղափարներն էլ հարգում ես: Իհարկե, ես իմ հորը հարգում եմ իբրև ծնողի, բայց եթե այդպես շարունակվի, հազիվ թե կարողանամ պահել իմ զգացումը: Նա պահանջում է, որ ես խոսեմ ու գործեմ հակառակ իմ գաղափարների: Այդ չի կարող լինել, երբեք: Բայց թողնենք. Ֆլորա, գլուխս պայթում է վիճաբանությունից:

ՖԼՈՐԱ. Դժբախտաբար, ես չգիտեմ ինչպես զբաղեցնեմ ձեզ: Եթե առաջվա Արտաշեսը լինեիք, գուցե կարողանայի...

ԱՐՏԱՇԱՍ. Եթե առաջվա Արտաշեսից իմ մեջ ոչինչ մնացած չլիներ, այս տունը ոտք չպիտի դնեի: Այնինչ պատանեկան հիշողությունները գրեթե ամեն օր ինձ քաշում-բերում են այստեղ հակառակ իմ սկզբունքների:

ՖԼՈՐԱ. Հակառակ ձեր սկզբունքների՞: Չեմ հասկանում ձեր միտքը:

ԱՐՏԱՇԵՍ. Համեմատեցեք մեր դիրքերը, կհասկանաք:

ՖԼՈՐԱ. Ուզում եք ասել, որ ձեր սկզբունքներն արհամարհում են մեզ նմանների ծանոթությունը, այո՞:

ԱՐՏԱՇԵՍ. Ֆլորա, մեր կռիվը, հարստության դեմ լինելով, կամա ակամա և հարուստների դեմ է:

ՖԼՈՐԱ. (Մի քիչ վշտացած): Իմ հայրը երբեք ոչ ոքի չի զրկել, չի հարստահարել: Նրա հարստության մի մասը հայրական է, մյուսը բախտի բերմունք:

ԱՐՏԱՇԵՍ. Բայց սեփականություն է, չէ՞: (Վեր է կենում):

ՖԼՈՐԱ. Ենթադրենք, թե այդ սեփականությունը չունինք, աղքատ ենք, այն ժամանա՞կ: (Վեր է կենում):

ԱՐՏԱՇԵՍ. Այն ժամանակ ես ավելի համարձակ ոտք կդնեի այս տունը: Այն ժամանակ իմ պատանեկան երջանիկ անցյալն ավելի հաճույքով կհիշեի: Այն ժամանակ այն մի քանի օրերը, որ ես այստեղ պիտի մնայի, ինձ համար մի տեսակ ամոթալի երկդիմության և խղճի խայթոցների օրեր չէին լինիլ:

ՖԼՈՐԱ. Լսեցեք, այսօր հայրս յուր կարողության տեր կտակեց բարեգործական նպատակներով, մյուս կեսն ինձ է պատկանելու: Ենթադրենք, որ մի օր վերցնում եմ և իմ ունեցածը տալիս եմ ձեզ, ի՞նչ կանեիք, կշպրտեիք:

ԱՐՏԱՇԵՍ. Ֆլորա, երեխա չեք դուք: Թշնամու զենքը խլելով, նույն թշնամու զինակիցների դեմ են գործածում: Մենք ունեինք մի մեծ գործ, որ բացի անձնազոհությունից, պահանջում է և դրամ: Այս այն զենքն է, որ պակասում է մեզ:

ՖԼՈՐԱ. Պահանջեցե՛ք, գուցե տան ձեզ այդ զենքը:

ԱՐՏԱՇԵՍ. Ումի՞ց:

ՖԼՈՐԱ. Գիտեք ինչ, ինձ համար իսկապես մութ է այն գործը, որի մասին խոսում եք: Բայց ես հավատում եմ, որ լավ գործ է, որովհետև դուք էլ խառն եք: Ես ձեզ եմ միայն հավատում և ոչ այդ կոպիտ Հրանտներին: Պահանջեցե՛ք, և ես կտամ որքան կարող եմ, այսինքն բոլորը, ինչ որ ունիմ:

ԱՐՏԱՇԵՍ. Մի՛ խոստանաք այն, ինչ որ ձեր ուժերից վեր է եղել են մեծ զոհաբերություն անող կանայք, բայց զուր կլիներ այնպիսիներին փնտրել հայերի մեջ:

ՖԼՈՐԱ. Շնորհակալ ենք ձեր հաճոյախոսության համար: (Մոտենում է պիանինոյին և. այնտեղից վերցնում արկղիկը): Լսեցեք, իմ այժմյան ամբողջ հարստությունն այս արկղիկի մեջ է: Այս իմ մոր քարեղեններն ու ոսկեղենն են, որ այժմ պատկանում են ինձ: Հայրս իրավունք չունի նրանց վրա: Երեկ ես որոշեցի այս բոլորը նվիրել ձեր տառապյալ ընկերների օգտին: Վերցրեք և գործածեցեք, ինչպես կամենաք: (Արկղիկը դնում է մեջտեղի սեղանի վրա):

ԱՐՏԱՇԵՍ. (վերցնում է արկղիկը և բաց անում): Ֆլորա, դուք կատա՞կ եք անում:

ՖԼՈՐԱ. Ո՛չ, պարոն, ես այդ տեսակ բաների հետ կատակ անել չեմ կարող:

ԱՐՏԱՇԵՍ. Այստեղ մի ամբողջ հարստություն կա. լավ մտածեցեք:

ՖԼՈՐԱ. Ես բոլորը մտածել եմ և այնպես վճռել, վերցրեք:

ԱՐՏԱՇԵՍ. Ո՛չ, ես չեմ կարող ընդունել մի այդպիսի նվեր: (Դնում է արկղիկը սեղանի վրա):

ՖԼՈՐԱ. Պատճա՞ռը:

ԱՐՏԱՇԵՍ. Դրանք նվիրական բաներ են, կապված ձեր մոր հիշատակի հետ:

ՖԼՈՐԱ. Մի՛ վախենաք, մայրս ինձ չի անիծիլ գերեզմանից, այլ կօրհնի այս զոհաբերության համար: Նրա սիրտը բարի է և ընդարձակ:

ԱՐՏԱՇԵՍ. Այնուամենայնիվ, չեմ կարող ընդունել այդպիսի թանկագին նվեր, մանավանդ մի հայ օրիորդից, որի համար ծնողների հիշատակը սուրբ է:

ՖԼՈՐԱ. (Դառն հեգնությամբ): Մի՞թե: Իսկ հայ օրիորդին նախատել կարող եք:

ԱՐՏԱՇԵՍ. Ե՞ս:

ՖԼՈՐԱ. (Գրգռվելով): Այո, դուք: Հիշո՞ւմ եք ինչ ասացիք հենց առաջին օրը, երբ այստեղ էիք: Դուք ասացիք, թե հայ աղջիկը շատ հետ է մնացել օտարներից, թե նրա միտքը սահմանափակ է, սիրտը նեղ, զգացումներն աղքատ: Իսկ ես ո՞վ եմ: Ոչ միայն մի հայուհի, այլև մի բուրժուայի անհոգ և անմիտ մեծացած աղջիկ: Փույթ չէ, թող ձեր ասածը չլինի, միայն թե ցանկալի կլիներ, որ դուք, նախքան դատավճիռ տալը, մի փոքր ուսումնասիրեիք մեր սիրտը: Ո՞վ գիտե, գուցե ավելի բան գտնեիք այնտեղ, քան կարծում եք: Հիշո՞ւմ եք այն օրվա ձեր պատմածները:

ԱՐՏԱՇԵՍ. Ինչի՞ մասին:

ՖԼՈՐԱ. Մարդկային անհուն վշտերի, հարյուրավոր ուսանողների կրած տառապանքների, հալածանքի, բանտի, աքսորի, կախաղանի: Երբ դուք, այնպես հափշտակված, նկարագրում էիք այդ բոլորը, ես մտածում էի իմ անհոգ կյանքի մասին: Եվ թվաց ինձ, որ ես մի չնչին արարած եմ, արհամարհանքի արժանի: Ես չգիտեի ամոթից ու խղճի տանջանքից ինչպես նայեմ ձեր երեսին:

ԱՐՏԱՇԵՍ. (Կանգ է առել և լսում է): Մի՞թե:

ՖԼՈՐԱ. (Ոգևորվելով): Ա՛հ, այն օրից դես չգիտեմ ինչ ասել է ուրախ տրամադրություն: Ե՞ս, որ միշտ երգում էի, թռչկոտում ու նվագում նույնիսկ իմ պաշտելի մոր մահից հետո: Այն պահից իմ այժմյան կյանքն ինձ թվում է ամոթալի: Ես մի բանի օրվա մեջ զգացել եմ ու մտածել ավելի, քան տարիների ընթացքում: Ես արթուն երազում եմ շղթայակապ ձեռներ, մթին ու խոնավ արգելանոցներ, ուր տառապում են ինձնից շատ ու շատ բարձր օրիորդներ: Դուք ասացիք, որ նրանք դժոխքի մեջ երգում են ազատական գրգռիչ երգեր, արձակում են հերոսական գոչյուններ: Ապա լսում եմ նրանց դառն լացը, կսկծալի հեծկլտանքը և անեծքն ինձ նման անտարբերների գլխին:

ԱՐՏԱՇԵՍ. (Հիացած): Բայց կանգ առեք, ես չէի ուզում ձեզ...

ՖԼՈՐԱ. (Ավելի ու ավելի ոգևորվելով): Դուք ասացիք, որ մայրերը ճիգ են անում ոսկրոտ ձեռներով խորտակել բանտերի դռները, որպեսզի ազատեն իրենց զավակներին, հայրերն անզոր սեղմում են իրենց բռունցքները: Այս ձեր խոսքերն են, որ շարունակ հնչում են իմ ականջներին, ինչպես դառը նախատինք... Բանտապահների կոպիտ հարվածները քարերի պես տեղում են ամուսինների ու քույրերի գլխին: Եվ թշվառները, դառնալով ինձ նմաններին, նույնպես անեծք են թափում մեր գլխին...

ԱՐՏԱՇԵՍ. Ոչ ձեզ նմանների, ոչ...

ՖԼՈՐԱ. Այդպես է, մի՛ հերքեք: Դուք նախատել եք հայ աղջիկներին, որոնցից ես ոչնչով բարձր չեմ: Ապերախտ եք դուք, ինչո՞ւ գոնե ձեր քրոջն աչքի առջև չունեք: Մի՞թե շատ օտարազգի օրիորդներ կան Անահիտի նման, նույնիսկ ձեր շրջաններում:

ԱՐՏԱՇԵՍ. Անահիտն այն չէ, նա ուրիշ է: Իմ և նրա մեջ ևս կա խորխորատ, ինչպես իմ և իմ հոր մեջ:

ՖԼՈՐԱ. Բայց նրա սիրտը: Ես քանի անգամ տեսել եմ նրան արտասվելիս հայկական կոտորածների ժամանակ:

ԱՐՏԱՇԵՍ. Արտա՞սվել է նա, արդյո՞ք, կարդալով Քիշինևի և Բելոստոկի մասին: Ո՛չ, կարող եմ երդվել: Շատ շատ կրծքից արձակել է ծանր հառաչանք, բայց, մի որպե չանցած մտածել է. «այդ բոլորը ցավալի է, միայն մեզ չի վերաբերում»:

ՖԼՈՐԱ. Ունի՞ ք փաստեր այդ մասին:

ԱՐՏԱՇԵՍ. Երեք անգամ դիմել եմ նրան և խնդրել եմ բանտարկյալ ընկերների համար ժողովարարություն անել, երեք անգամ էլ նա հարցրել է. «Հայե՞ր են ընկերներդ»: Եվ երբ իմացել է, թե հայեր չեն լռել է: Այս չէ, Ֆլորա, այս չէ իմ դավանանքը: Ինձ համար թշվառությունն ազգ չունի և ոչ կրոն, և ոչ լեզու: Մենք ուզում ենք, որ միշտ օտարները օգնեն մեզ և մուրացկանների պես շարունակ դիմում ենք բուրժուա պետություններին, իսկ ինքներս մերժում ենք մեր օգնությունը մեզ նման թշվառներին: Դա անարդարություն է:

ՖԼՈՐԱ. (Ուշադիր լսում է): Համաձայն եմ, համաձայն եմ:

ԱՐՏԱՇԵՍ. Քանի ես պատանի էի, մի տեսակ պատնեշ իմ սրտում անջատում էր ազգությունը մարդկությունից: Այժմ չկա այդ պատնեշը: Խորտակվել է այն համաշխարհային մեծագույն իմաստասերների ազդեցությամբ, որոնց գրքերը կարդացել եմ և հափշտակվել: Ահ, եթե տեսնեիք այն վայրերը, ուր մարդիկ զգում են և տանջվում իդեալների համար: Այնտեղ ազգությունը չէ այն օղակը, որ միացնում է հոգիները, այլ մի ուրիշ, ավելի բարձր, ավելի ընդարձակ և ամուր կապ դեպի մարդը:

ՖԼՈՐԱ. Կարո՞ղ եմ, արդյոք, ես էլ զգալ ու տանջվել այդ վայրերում:

ԱՐՏԱՇԵՍ. Այդ ձեզնից է կախված:

ՖԼՈՐԱ. Կկամենայի իմանալ, ի՞նչ հատկություններ են հարկավոր մի Նոյեմզար դառնալու համար:

ԱՐՏԱՇԵՍ. Նախ և առաջ՝ ունենալ այն սոսկալի լեղին, որով լիքն է Նոյեմզարի սիրտը: Ֆլորա, նա հինգ անգամ բանտ է նստել: Նա ծեծվել է, անարգվել է: Եվ այսօր նրա բոլոր բարեկամները տառապում են շղթաների մեջ:

ՖԼՈՐԱ. Եվ դուք մերժում եք վերցնել այդ չնչին նվերը այդպիսիների օգտին: Նախասենյակում էլեկտրական զանգակի հնչուն:

ԱՐՏԱՇԵՍ. Թողեք մնա ձեզ մոտ: Ես կմտածեմ այդ մասին և կհայտնեմ ձեզ: Վերցրեք, խնդրում եմ, գուցե եկողը ձեր հայրն է:

ՏԵՍԻԼ 5

ՆՈՒՅՆՔ և ՆՈՅԵՄԶԱՐ

ՆՈՅԵՄԶԱՐ. (Ներս է մտնում աջ կողմի երկրորդ դռներից: Հագնված է այնպես, ինչպես առաջին արարվածում): Բարև, օրիորդ: Ես եկել եմ ձեզ շնորհակալություն հայտնելու: Դուք Անահիտի միջոցով ուղարկել եք ինձ, մեր ընկերների համար հարյուր ռուբլի: (Ձեռ է տալիս Ֆլորային և հետո միայն նկատում Արտաշեսին: Թեթև ցնցվում է, բայց և անմիջապես ուղղում է իրան): Ես գնացել էի քո ծնողների տունը, քեզ տեսնելու: Օ՜հ, հոգնած եմ (Նստում է, Ֆլորային): Ներեցե՛ք:

ՖԼՈՐԱ. Խնդրեմ:

ՆՈՅԵՄԶԱՐ. Ճանապարհին չգիտեմ ինչ պատահեց ինձ, հանկարծ գլուխս սկսեց սաստիկ ցավել: Արդյոք, չունիք մի փոքր օդեկոլոն:

ՖԼՈՐԱ. Ես իսկույն ձեզ կտամ մի դեղ, որ շատ է օգնում: (Շտապով գնում է խորքի ձախ դռներով):

ՏԵՍԻԼ 6

ԱՐՏԱՇԵՍ և ՆՈՅԻՄԶԱՐ

ՆՈՅԵՄԶԱՐ. (Վեր է կենում): Կյանքումս առաջին անգամ կոմեդիա խաղացի:

ԱՐՏԱՇԵՍ. (Աննան դիտել է Նոյեմզարին): Ի՞նչ է պատահել:

ՆՈՅԵՄԶԱՐ. Իպոլիտից նամակ ստացա: Այս քանի օրերս նրան շտապով ուղարկում են: Պետք է շտապել:

ԱՐՏԱՇԵՍ. (Գունատվելով): Այո՞:

ՆՈՅԵՄԶԱՐ. Ինչո՞ւ վախեցար: Դու տատանվո՞ւմ ես:

ԱՐՏԱՇԵՍ. Ոչ, բայց ես կկամենայի մի քանի օր էլ մնալ:

ՆՈՅԵՄԶԱՐ. Ի՞նչ գործ ունիս այստեղ: Ծնողներիդ հետ տեսնվեցիր, փող բավական ժողոված է: Պետք է գնալ:

ԱՐՏԱՇԱՍ. (Վախեցած): Ի՞նչ ես ուզում ասել:

ՆՈՅԵՄԶԱՐ. Ես ասել եմ քո մասին: Եղել են քեզնից ավելի զորավոր մարդիկ, որոնք չեն դիմացել ոսկեզօծ կահ-կարիսիքի փայլին և փարթամ ծաղիկների բուրմունքին: Հեռանանք, հեռանանք շուտով...

ԱՐՏԱՇԵՍ. Լավ, կհեռանանք, տեղը չէ այդ մասին խոսելու:

ՆՈՅԵՄԶԱՐ. Ես էլ գիտեմ, որ տեղը չէ: Ուրեմն գնանք, իսկույն ևեթ: (բռնում է Արտաշեսի ձեռը); Ես սկսում եմ կասկածել քո մասին: Դու պետք է իսկույն ևեթ դուրս գաս ինձ հետ այստեղից: Լսո՞ւմ ես... Արտաշես: Ես... ես... խնդրում եմ... (Ավելի ամուր սեղմելով ձեռը): Գնանք, դու կարող ես այստեղ կործանվել…

ՏԵՍԻԼ 7

ՆՈՒՅՆՔ և դարձյալ ՖԼՈՐԱ

ՖԼՈՐԱ. (Ետ է գալիս խորքի ձախ դռներից); Ահա, օրիորդ: (Տեսնում է Նոյեմզարին Արտաշեսի ձեռն ամուր բռնած, ցնցվում է, գունատվում և անշարժ մնում): Լռություն:

ԱՐՏԱՇԵՍ. (Ձեռը խլում է Նոյեմզարից և ետ կանգնում):

ՆՈՅԵՄԶԱՐ. (Նույնպես շփոթվում է):

ՖԼՈՐԱ. (Ուշքը ժողվելով): Ահա, օրիորդ, գլխացավի դեմ: (Տալիս է մի սրվակ): Մի փոքր քսեցեք ձեր ճակատին, կանցնի:

ՆՈՅԵՄԶԱՐ. (Առնում է սրվակը և հեղուկը մատներով քսում քունքերին): Ա՛հ, շնորհակալ եմ, դուք շատ բարի եք: (Սրվակը դնում է սեղանի վրա): Շուտով կանցնի: Եթե չանցնի էլ, փույթ չէ, սովոր եմ: Օրիորդ, թույլ տվեք կրկին շնորհակալություն հայտնել ձեր նվերի համար և միևնույն ժամանակ, մնացեք բարով...

ՖԼՈՐԱ. (Սառը): Մենք այլևս չե՞նք տեսնվիր (Ձեռը մեկնում է թույլ):

ՆՈՅԵՄԶԱՐ. Հազիվ թե. ես վաղը գնում եմ: Մնացեք բարով: (Գնում է աջ կողմի երկրորդ դռներով):

ՖԼՈՐԱ. (Նայել է Արտաշեսին տարակուսած): Ինչո՞ւ համար այդպես խորասուզվեցիք...

ԱՐՏԱՇԱՍ. (Մի վճռական շարժում անելով և առանց նայելու Ֆլորային): Մնացեք բարով...

ՖԼՈՐԱ. Դուք է՞լ: (Թույլ, գրեթե ակամա ձեռ է տալիս Արտաշեսին):

ԱՐՏԱՇԵՍ. Ես պարտավոր եմ հետևել Նոյեմզարին: (Արագ քայլերով գնում է աջ կողմի երկրորդ դռներով);

ՖԼՈՐԱ. (Անշարժ կանգնած, ուղեկցում է աչքերով Արտաշեսին մինչև դռները): Ի՞նչ է նշանակում այդ: «Ես պարտավոր եմ...» (Մի քանի քայլ գնալով դեպի բեմի խորքը): Սոֆիա:

ՏԵՍԻԼ 8

ՖԼՈՐԱ և ՍՈՖԻԱ

ԱՈՖԻԱ. (Ներս է մտնում աջ կողմի երկրորդ դռներից մի ծրար ձեռին): Ի՞նչ եք հրամայում:

ՖԼՈՐԱ. Գնացեք և իսկույն Անահիտին խնդրեցեք, որ գա այստեղ:

ՍՈՖԻԱ. (Ծրարը տալով): Այս րոպեիս նրանց աղախինը բերեց այս նամակը:

ՖԼՈՐԱ. (Արագ բաց է անում ծրարն ու կարդում): «Թանկագին Ֆլորա, մեր տունը կատարյալ դժոխք է դարձել: Քեղ հետ շատ կարևոր գործ ունիմ, սպասիր ինձ տանը»: (Սոֆիային): Լավ, հարկավոր չէ գնալ: Եթե հայրիկն ինձ հարցնի, ասացեք զբաղված եմ: (Գնում է խորքի ձախ դռներով տանելով հետը քարեղենների արկղիկը):

ՍՈՖԻԱ. Ախ, Դեռ պարոնի սենյակը չեմ մաքրել: (Գնում է աջ կողմի առաջին դռներով):

ՏԵՍԻԼ 9

ԱԼԵՔՍԱՆԴՐ և ՍԵՆԵՔԵՐԻՄ

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Գալիս է աջ կողմի երրորդ դռներից Ալեքսանդրից առաջ: Հագնված է այնպես, ինչպես առաջին արարվածում): Ես շատ շնորհակալ եմ, որ այդչափ հավատ ես ընծայում ինձ, բայց չէի կամենալ քո կտակակատարը լինել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Պատճա՞ռը:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Պատճառը, որ փափագում եմ քեզանից առաջ մեռնել և կմեռնեմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ինձնից առողջ և ինձնից ջահել լինելով: Ինչո՞ւ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Որովհետև կյանքն այսուհետև ինձ համար մի ծանր լուծ է:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Այդ խոսքը քեզ չի սազում, Սենեքերիմ, քո կյանքը դեռ հարկավոր է հասարակությանը:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Դառը ժպտալով): Հը,հը, հարկավոր է. ես էլ հիմարի պես երևակայում էի, թե հարկավոր է: Բայց բանից երևում է, որ ես ոչ-ոքի հարկավոր

չեմ: Ալեքանդր, Ալեքսանդր, իմ որդին է այն ստորջրյա ժայռը, որին դիպչելով խորտակվում է նավահանգստին մոտեցող նավը: Այն նավը, որ կարծում էի թե վարել եմ տաղանդով և հմտությամբ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Բայց Արտաշեսն ազնիվ երիտասարդ է:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Անիծվի՛ այն ազնվությունը, որից ազգը օգուտ չունի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Սենեքերիմ, ես քեզ ճանաչում եմ, դու շուտ գրգռվող մարդ ես և դեպքերը միշտ չափազանցում ես: Երևի այդ մի սովորական վեճ է հոր և որդու մեջ: Դու ինքդ քանի-քանի անգամ գրել ես, թե հառաջադիմության օրենքը պահանջում է, որ որդիները միշտ պատերազմեն հայրերի դեմ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ես հիմար կլինեի, եթե մոռանայի այդ օրենքը: Օ՛, ես կռվել եմ իմ հոր հետ, բայց իմ կռիվը հիմնված է եղել հայ հասարակության, հայ ժողովրդի, իմ հարազատ ազգի շահերի վրա: Մինչդեռ իմ որդին ազգ չի ճանաչում, Ալեքսանդր, հասկացիր: Տեսնո՞ւմ ես այն պատերը: (Ցույց է տալիս Ալեքսանդրի հանգուցյալ կնոջ պատկերը): Ահ, ինձ է հայտնի, թե նա որքան թանկ է քեզ համար: Երևակայիր, որ քո հարազատ որդին մի օր գալիս է հեռավոր երկրից, ներս մտնում և հանկարծ, այդ պատկերը պոկելով, պատռտում է և ոտնատակ անում քո աչքերի առջև: Այսպես, ճիշտ այսպես է վարվում իմ որդին իմ քսանույոթամյա գրական և մանկավարժական գործունեության հետ: Հենց առաջին օրը նա թույլ տվեց տղայի մեկին քար շպրտել իմ դավանանքի դեմ: Նա չկատաղեց, դուրս չձգեց այդ լրբին: Նա լռեց, նա պաշտպանեց անգամ նրան: Իսկ հետո... հետո ինքն սկսեց հարվածել ինձ, և ինչպե՞ս, ավելի անգութ, ավելի անողոք (Կատաղելով): Օհ, չորանար նրա մոր արգանդը, որ ես չունենայի նրա նման զավակ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Բավական է, հերիք անիծես...

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Նա կոտրում է իմ վարքը հասարակության աչքում, նա ինձ ծաղր ու ծանակի առարկա է դարձնում: Ի՞նչ երեսով պիտի նայիմ այսուհետև մարդկանց: Չե՞ն ասիլ նրանք. «Ա՛ա, դու ուզում էիր կրթել մի ամբողջ հասարակություն, չկարողացար կրթել քո միակ որդուն: Գնա մենք քեզ չենք ճանաչում»:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Այդպես կասեն միայն կարճամիտները, Սենեքերիմ, դու մոռանում ես, որ ունես մի աղջիկ, որը աջ թևն է:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Անահիտը: Այո՛, Ալեքսանդր, նա է, որ ինձ պահպանում է ծայրահեղությունից: Հավատա, եթե նա չլիներ, ես հենց առաջին օրը վերջ կտայի իմ կյանքին:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Հերիք է, Սենեքերիմ, դու սկսում ես զառանցել: Այդ մի թեթև բան է:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Դառը ժպտալով): Թեթև, թեթև... Լսիր, Ալեքսանդր, լսի՛ր.. կա մի բան, որ ևս դեռ չեմ ասել քեզ: Այդ բանն է, որ ինձ հուսահատեցնում է: (Բռնում Ալեքսանդրի ձեռը, ցածր ձայնով, խորհրդավոր): Իմ որդու գլխին կախված է Դամոկլյան թուրը: Վաղ թե ուշ այն պիտի ընկնի նրա վզի վրա: Հասկացիր ինչպես կամենաս: (բաց է թողնում Ալեքսանդրի ձեռը, հեռանում է ու նայում նրան):

ԱԼԵՔՍԱՆԴՐ. (Վախեցած): Ի՞նչ ես ասում, Սենեքերիմ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Հապա՞: Նա այն ճանապարհի վրա էր, որից շատ քչերն են կենդանի վերադառնում: Լսի՛ր, լսի՛ր, Ալեքսանդր, իմ որդին գործիք է տեռորիստների ձեռքում: Նա ուխտ ունի, նրան հանձնարարված է բանտից ազատել իր ընկերներից մեկին: Նա ռումբ պիտի գցե, լսո՞ւմ ես, ռումբ... (Սարսափած նայում է):

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Սենեքերիմ, քո որդին կորած է, ողորմելի...

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Դողդոջուն, արտասվալից ձայնով): Ա՜հ, Ալեքսանդր, ես անիծում եմ նրան, և, միևնույն ժամանակ, ողբում: Չէ՞ որ ես հայր եմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. (Մտածելով): Այո, այո, այժմ հասկանում եմ: Շնորհակալ եմ, բարեկամ, որ ինձ զգուշացրիր: Իսկ ես, հիմարս, ուզում էի իմ ձեռքով իմ աղջկան կրակի մեջ գցել: (Ցնցվելով): Բայց գուցե նա արդեն ընկել է: Ո՛չ, ո՛չ, Ֆլորան հիմար չէ.. Նա գիտե, որ ես չեմ կարող տանել այդ բանը... (Ավելի բարձր և դրդված): Սենեքերիմ, այսօր, հենց այստեղ ես իմ աղջկա հետ խոսում էի քո որդու մասին: Ինչ թաքցնեմ, ես Արտաշեսին համարում էի արդեն իմ փեսան: Ֆլորան հավանում է նրան: Բայց հիմա ամեն բան տակն ու վրա եղավ: Ֆլորան նրա ընկերը չէ, այդ չի կարող լինել: Այսուհետև իմ դռները փակ են նրա առջև: Հասկանո՞ւմ ես իմ դրությունը. Սենեքերիմ, դու պիտի ներես ինձ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Այդ քո կամքն է, ես միայն իմ պարտքը կատարեցի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Բայց մի՞թե չի կարելի նրան ետ դարձնել այդ ճանապարհից:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Ընկճված): Ալեքսանդր, ուշ է: Բաներ կան, որ, դժբախտաբար, չեմ կարող քեզ ասել: Նա արդեն կործանված է: (Աչքերը սրբում է թաշկինակով):

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Լավ, մի՛ հուսահատվիր, միջոցներ շատ կան նրան ազատելու համար: Արի գնանք իմ սենյակը էլ միասին սառնարյուն խորհրդակցենք: Գնանք, ի դեպ, քեզ համար կկարդամ իմ կտակը: (Ծոցի գրպանից դուրս է բերում մի քառածալ թուղթ): Տեսնո՞ւմ ես այս թուղթը բոլորն այստեղ է: Այդ քո գործունեության պտուղներից մեկն է: Թող քո որդին իմանա, թե ո՞ւմ գաղափարներն են մեզ հարկավոր, նրանը, թե՞ քոնը: (Գնում է աջ կողմի առաջին դռներով):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (հետևում է թեք սանդղին):

ՏԵՍԻԼ 10

ՖԼՈՐԱ և ԱՆԱՀԻՏ

ՖԼՈՐԱ. (Գալիս է խորքի ձախ դռներից):

ԱՆԱՀԻՏ. (Գալիս է միաժամանակ աջ կողմի երկրորդ դռներից):

ՖԼՈՐԱ. (Առաջ վազեց): Ա՛հ, համբերությունս հատավ լուսամուտից նայելով: Վերջապե՜ս: (Համբուրում է): Ի՞նչ է պատահել:

ԱՆԱՀԻՏ, (Հագնված է պարզ, գլխին հարդյա էժանագին գլխարկ, ձեռքին տետրակների կապոց): Հազիվ ազատվեցի դասերից: Օ՜հ: (Հոգնած նստում է կիսաբազկաթոռներից մեկի վրա, տետրակները դնելով սեղանի վրա):

ՖԼՈՐԱ. Ի՞նչ է պատահել, շուտ ասա:

ԱՆԱՀԻՏ. Այսօր Արտաշեսը դարձյալ ընդհարվեց հայրիկի հետ:

ՖԼՈՐԱ. Այդ ես գիտեմ:

ԱՆԱՀԻՏ. Բայց հետևանքը չգիտես: Կռվից հետո հայրիկն իսկույն գնաց չգիտեմ ուր, իսկ Արտաշեսն եկավ այստեղ: Այն ժամանակ սկսվեց մի ուրիշ տեսարան: Մայրս հանկարծ ունեցավ սարսափելի հիստերիա, մի բան, որ երբեք չի պատահել նրան: Վերջը նա ուշաթափվեց փրփուրը բերանին: Մի ամբողջ ժամ չարչարվելով, ես ու Նազանին հազար ու մի միջոցով հազիվ կարողացանք նրան ուշքի բերել:

ՖԼՈՐԱ. Խե՜ղճ Անահիտ:

ԱՆԱՀԻՏ. Այժմ նա ուժասպառ պառկած է անկողնում: Նա շարունակ կրկնում է. «Ես դժբախտ եմ, ես դժբախտ եմ»:

ՖԼՈՐԱ. Բայց ի՞նչն է նրան այդպես հուսահատեցնում: Միթե միայն հոր ու որդու վեճը:

ԱՆԱՀԻՏ, Ֆլորա, դա մի վեճ չէ, այլ երկու միմյանց հակասող տարրերի սոսկալի ընդհարում: Ոչ մեկը չի ուզում զիջել և ոչ մեկը կեղծել: Բայց գլխավորն այս չէ, Ֆլորա: Կա մի ուրիշ պատճառ, որ հուսահատեցնում է մայրիկիս, և ես հենց դրա համար ուզում էի քեզ տեսնել:

ՖԼՈՐԱ. Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:

ԱՆԱՀԻՏ, Արտաշեսի կյանքում կա մի գաղտնիք, դա է, որ թունավորում է նրան և դարձնում այդչափ տխուր և դյուրագրգիռ: Հայրիկը, ինչպես երևում է, գիտե այդ գաղտնիքը, բայց ոչինչ չի ասում: Նա միայն կրկնում է. «Արտաշեսը կործանված է»: Իսկ մայրիկն ու ես զանազան ենթադրություններ ենք անում: Ինձ թվում է, որ այդ գաղտնիքը միայն դու կարող ես պարզել:

ՖԼՈՐԱ. Ինչո՞ւ ես անպատճառ:

ԱՆԱՀԻՏ. Արտաշեսն այժմ քեզ հետ ավելի է մտերիմ, քան մեզ հետ: Տխուր րոպեներին նա այստեղ է վազում և ես գիտեմ, որ նրա կյանքից արդեն շատ բաներ են հայտնի քեզ, ասա, Ֆլորա, նախ և առաջ, այդ ի ՞նչ գործ է, որ ստիպում է նրան այստեղից հեռանալ:

ՖԼՈՐԱ. Չգիտեմ: Այդ մասին նա ոչ մի բառ չի ասել ինձ:

ԱՆԱՀԻՏ. Հավատո՞ւմ արդյոք:

ՖԼՈՐԱ, Երդվում եմ մորս գերեզմանով:

ԱՆԱՀԻՏ. Օհ, այդ բավական է, հավատում եմ: Հիմա մի ուրիշ հարց, ո՞վ է այդ Նոյեմզարը. այդ օտար աղջիկը հայ անունով:

ՖԼՈՐԱ. (Նոյեմզար անունը լսելիս շարժումն է անում, բայց թաքցնում է իր շփոթությունը): Չգիտեմ:

ԱՆԱՀԻՏ. Արտաշեսը նրա հետ խոսում է «դուք»-ով: Ասենք այդ ոչինչ, ասում են նրանց շրջանում այդպես է ընդունված: Բայց այդ Նոյեմզարի մասին հազար ու մի բան են պատմում: Ասում են, նրա անվան հետ կապված են մի քանի վտանգավոր գործեր: Արտաշեսը նրա մասին երբեք չի խոսում և մեր հարցերին տալիս է անորոշ պատասխաններ: Երեկ նա մինչև անգամ կատաղեց, երբ մայրիկս դարձյալ փորձեց մի բան իմանալ:

ՖԼՈՐԱ. Բայց ի՞նչ եք կամենում իմանալ այդ Նոյեմզարի մասին:

ԱՆԱՀԻՏ, Նա մորս սիրտը կասկածներ է գցել: Իսկ ես հենց առաջին օրից ատեցի այդ աղջկան: Ինձ թվում է, որ նա իր մտքում հայերին ատում է:

ՖԼՈՐԱ. Այդ ես չեմ նկատել, ընդհակառակը...

ԱՆԱՀԻՏ. Օ՜օ, մի՛ հավատար այդ եկվոր թռչուններին... Նրանք միշտ ատում են մեզ, և մենք էլ պիտի ատենք նրանց: Բայց բանն այդ չէ: Ասում են, որ նրա և Արտաշեսի մեջ կա ինչ-որ կապ:

ՖԼՈՐԱ. (Ցնցվում է, բայց կարողանում է իրան զսպել): Անշուշտ, գաղափարների կապ:

ԱՆԱՀԻՏ. Ա՜հ, ես չեմ հավատում այդ տեսակ աղջկերանց գաղափարներին: Ոչ, Ֆլորա, ուրիշ կապի մասին են խոսում, ավելի մտերիմ:

ՖԼՈՐԱ. (Ոտքի կանգնելով): Ավելի մտերիմ:

ԱՆԱՀԻՏ. Կողմնակի անձանցից լսել ենք և ամենքը խոսում են, որ Նոյեմզարն Արտաշեսի կինն է: Այո, ապօրինի, քաղաքական ամուսնությամբ: Ասում են այդպես է ընդունված նրանց շրջանում: (Ոտքի է կանգնում): Մայրս հենց որ այս լսեց, սկսեց մազերը փետել:

ՖԼՈՐԱ. (Գունատվել է, զուր ճգնում է ուշքը վրան պահել): Կի՞նը: (Ձեռը հենում է կիսաբազկաթոռի մեջքին): Այժմ հանելուկը պարզվում է:

ԱՆԱՀԻՏ. Ի՞նչ ուրեմն, դու մի բան գիտես: Բայց դու գունատվեցիր, դողում ես: Ֆլորա դու սիրո՞ւմ ես իմ եղբորը:

ՖԼՈՐԱ. Ես մի թշվառ էակ եմ (Բարձրաձայն հեկեկալով, փաթաթվում է Անահիտի պարանոցին):

ԱՆԱՀԻՏ (բարձր ձայնով): Սոֆիա:

ՍՈՖԻԱ. (Վազում է ներս աջ կողմի երկրորդ դռներից):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Շտապով դուրս են գալիս աջ կողմի առաջին դռներից, ապշած մնում են):

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Արտաշեսի սենյակը: Խորքի պատի մեջ, ավելի դեպի ձախ դուռը, որ տանում է ընդունարան-սեղանատուն, այլ դասվածքով, դեպի աջ, հասարակ անկողնակալ առանց շիրմի: Անկողնակալի տակ երևում է համփարկղ: Աջ պատի մեջ դուռ դեպի նախասենյակ, ավելի առաջ դեպի ավանսցենի կողմ մի փոքրիկ գահավորակ հնամաշ, քովն երկու աթոռ: Ձախ պատի մեջ մի հատ լուսամուտ առանց վարագույրի: Լուսամուտի առջև գրասեղան, վրեն գրքեր, բրոշյուրներ ն այլն: Գրասեղանների քով աթոռներ: Աջ անկյունում, անկողնակալի մոտ, պատի վրա հանդերձակալ վրեն մի ձմեռային վերարկուն ուրիշ հագուստեղեն Արտաշեսին պատկանող: Ընդհանրապես սենյակն ունի ուսանողական սենյակի տեսք, բայց շատ մաքուր է:

ՏԵՍԻԼ 1

ԱՐՏԱՇԵՍ. (Վարագույրը բարձրանալիս դարսված է գրասեղանի վրայի գրքերը կապկապելով: Հագնված է այնպես, ինչպես առաջին արարվածում):

ՆՈՅԵՄՁԱՐ. (Նստած է գահավորակի վրա ն կարդում է մի մեծ մայրաքաղաքյան լրագիր: Հագնված է այնպես, ինչպես առաջ, միայն վզովը կախված է ճանապարհի պայուսակ և գլխարկին փաթաթած երկայն ընկուզե գույն շղարշ: Մի քանի վայրկյան լուռ կարդալուց հետո, լրագիրը ձգում է գահավորակի վրա և վեր կենում): Այո՛, կռիվն այժմ ուրիշ ուղղություն է ստանում: Մերոնք պետք է լարեն իրենց բոլոր ուժերը: Այժմ ամեն ինչ հարկադրում է մեզ շտապել: Ես հետաքրքրությունից այրվում եմ իմանալու, թե ինչե՞ր են կատարվում այնտեղ, դու չվերջացրիր:

ԱՐՏԱՇԱՍ. (Մի փոքր ներվային): Մի՛ շտապիր, դեռ երկու ժամ ունինք մինչև գնացքը: (Դադարում է աշխատել):

ՆՈՅԵՄՁԱՐ. (Նայելով ժամացույցին): Մի ժամ և քառասուն րոպե: Իսկ ես վաղուց եմ պատրաստ: Մնում է մի անգամ էլ տեսնվել տեղացիների հետ: Այսօր, անպատճառ այսօր, անգործությունն ինձ ձանձրացնում է, բացի այդ, արդեն որսորդներր գտել են մեր հետքը...

ԱՐՏԱՇԵՍ. (Սառը): Երևակայությունդ ամեն տեղ որսորդներ է տեսնում: (Ծուլորեն դուրս է բերում ճամփարկղը անկողնակալի տակից):

ՆՈՅԵՄՁԱՐ. Ա՛խ, երևակայություն չէ, ես հաստատ գիտեմ, որ մեր շատ մեղքերի համար ամենուրեք լրտեսներ են գնացել: Բայց դու չես վախենում: Այդ լավ է: Քո

սառնությունն ինձ սիրտ է տալիս: Այժմ ճանաչում եմ նախկին խելոք և համարձակ Արտաշեսին: Իսկ ես, հիմարս, կարծում էի, թե դու արդեն կորար այստեղ... (Նայում է Արտաշեսին սիրալիր հայացքով):

ԱՐՏԱՇԵՍ. (Գործով զբաղված, չի նկատում Նոյեմզարի հայացքը): Այս էլ այսպես: Կարծեմ բոլորը կտեղավորվի այս ճամփարկղում: (Երեսի քրտինքը սրբում է թաշկինակով):

ՆՈՅԵՄԶԱՐ. Դա մի ռոպեական խելագարություն էր, երբ քեզ տեսա այդ աղջկա հետ առանձին: Երկուսդ էլ հուզված էիք: Ինձ թվաց, որ դու արդեն կորցրել ես քո ազատությունն և դարձել մեկն այն ողորմելիներից, որոնց մենք ճանաչում ենք և արհամարհում: Անցավ փորձանքը, և դու դարձյալ մերն ես: Արտաշես, պետք է միանգամայն խորտակենք ոսկե շղթաները աշխարհային դիրքի հետ, որպեսզի պողպատե կապերով միանանք մեր թշվառ ընկերներին:

ԱՐՏԱՇԵՍ. Այո՛, բայց դու ինքդ ես մոռանում այդ: Երեկվա քո վարմունքն ուղղակի ամոթալի էր: Ի՞նչ կարող է մտածել մեր մասին Ֆլորան:

ՆՈՅԵՄԶԱՐ. Ինչ ուզում է, թող մտածեն: Մի՞թե ինձ համար կարող է որևէ նշանակություն ունենալ մի բուրժուա աղջկա կարծիքը:

ԱՐՏԱՇԵՍ. Առհասարակ այստեղ գալուց հետո դու դարձել ես անզգույշ: Անտոնինա, առաջ դու այդպես չէիր: Ի՞նչ է պատահել:

ՆՈՅԵՄԶԱՐ. Ա՛հ, ես ինքս էլ չգտեմ: Գուցե պատճառն այդ աղջիկն է, կամ ձեր կապույտ ու կրակոտ երկինքը: Ինչո՞ւ թաքցնեմ, այն օրից, որ այստեղ ենք, ես իմ սրտի տերը չեմ:

ԱՐՏԱՇԵՍ. Բայց դու շատ լավ գիտես, որ ոչ մի երկնքի տակ և ոչ մի երկրում մեր հարաբերությունները չեն փոխվել: Եղբայրական է իմ զգացումը դեպի քեզ և այնպես էլ կմնա: (Վերցնում է հանդերձակալից ձմեռային վերարկուն, նայում և ձգում անկողնակալի վրա):

ՆՈՅԵՄԶԱՐ. (Տխուր): Գիտեմ, ախ՛, գիտեմ, հարյուր անգամ լսել եմ քեզանից, անգութ, բավական է: (Գրգռվելով): Բայց ի՞նչ անեմ, քանի որ այստեղ (սիրտը ցույց տալով), հակառակ իմ կամքի, արմատացել է մի տխմար զգացում, որ չի մեռնիլ երբեք, մինչ կենդանի ենք դու և ես:

ԱՐՏԱՇԵՍ. Հիշիր Իպոլիտի վիճակը, հիշիր, որ նա խելագարի պես սիրում է քեզ և մի օր քեզ հետ միանալու հուսովն է տանում իր տառապանքները: Հիշիր մեր երդումը նրա բանտի երկաթապատ լուսամուտի առջև, և դու կմոռանաս անձնականը:

ՆՈՅԵՄԶԱՐ. (Մռայլ): Խե՜ղճ Իպոլիտ, կարող էիր կարծել, որ երբևիցե իմ զգացումներով պիտի դավաճանեմ քեզ: Բայց ես նրան երբեք չեմ սիրել — ինքն էլ գիտե այս: Իմ զգացումը դեպի նա եղել է միշտ ընկերական: Ես հարգել եմ հարգում եմ նրան իբրև մի տաղանդավոր գործիչի և հազվագյուտ ընկերոջ, որ...

ԱՐՏԱՇԵՍ. Որ մի անգամ քեզ և երկու անգամ ինձ ազատել է մահից: Եվ դու ուզում ես, որ մենք դավաճանենք այդպիսի մի ընկերոջ, Անտոնինա, նա քեզ

սիրում է անհուն սիրով և եթե այսօր չի վայելում քո փոխադարձ սերը, համենայն դեպս ես չեմ լինի քեզ նրանից խլողը: Ես չունիմ իրավունք և չեմ կարող մի այդպիսի վիշտ պատճառել Իպոլիտին:

ՆՈՅԵՄԶԱՐ. (Ազդվելով Արտաշեսի խոսքերից, ուշքը ժողովում է, քաջարի): Այո՛, այդպես է, դու ճիշտ ես ասում: Թող քո ասածը լինի: Եթե ես Իպոլիտին չկարողանամ սիրել երբևէ, պարտավոր եմ իմ սիրտը կույս պահել նրա համար: Նա արժե ավելին, քան մի այսպիսի զոհաբերություն: Թող կորչի փոքրոգությունս կաշխատեմ սպանել իմ սրտում այս դավաճանական զգացումը հանուն Իպոլիտի և հանուն մեր ընկերական պարտականության: Բայց հեռո՛ւ, հեռու այս երկրից: Այստեղ ես ինձ ուրիշ մարդ եմ զգում: Այստեղ իմ կամքի ուժը սկսում է թուլանալ, (եռանդով): Եղե՞լ է այստեղ Հրանտը:

ԱՐՏԱՇԵՍ. Դեռ ոչ:

ՆՈՅԵՄԶԱՐ. Ես կգնամ նրան գտնելու: Օհ, նա ֆանատիկոս է: Այդպիսիներն անհրաժեշտ են մեր գործի համար: Ցտեսություն: Մի ժամ չանցած կգամ և միասին կերթանք կայարան: (Գնում է եռանդուն քայլերով աջ կողմի դռներով):

ՏԵՍԱՐԱՆ 2

ԱՐՏԱՇԵՍ և ԱՆԱՀԻՏ

ԱՆԱՀԻՏ. (Գալիս է խորքի դռներով): Գնաց, վերջապես:

ԱՐՏԱՇԵՍ. Անահիտ, ինչո՞ւ համար ես դու Նոյեմզարի այդպես ատում: Երբ նա այստեղ է, դու երբեք չես մտնում իմ սենյակը:

ԱՆԱՀԻՏ. Ես չեմ ուզում նրան տեսնել, նա իր սրտի խորքում ատում է մեզ, քաջերիս:

ԱՐՏԱՇԵՍ. (Զայրացած): Անահիտ, դա զրպարտություն է: Նոյեմզարն այն անձանցից է, որոնք ազգային ատելության զգացումը համարում են զազրելի ախտ:

ԱՆԱՀԻՏ. (Խուսափողական ձևով): Չգիտեմ, գուցե.,. Ես իսկապես ոչ մի փաստ չունիմ նրա դեմ, բայց և այնպես: Ասում են Նոյեմզար անունը տվել է նրան մի հայ, ճի՞շտ է:

ԱՐՏԱՇԱՍ. Իմ ընկերների մեծ մասը թափառում է երկրից երկիր կեղծանունով: Այդ անունը ես եմ ընտրել նրա համար: Տեսե՞լ ես այսօր Ֆլորային:

ԱՆԱՀԻՏ. Նրա մոտիցն եմ գալիս:

ԱՐՏԱՇԵՍ. Ի՞նչպես է:

ԱՆԱՀԻՏ. Թույլ, հուսահատված, ոչ ոքի հետ չի ուզում խոսել, բացի ինձանից. Նա ինձ մի հանձնարարություն է արել:

ԱՐՏԱՇԵՍ. Ա՞յն է:

ԱՆԱՀԻՏ. Նա տվել է ինձ մի փոքրիկ արկղ քեզ հանձնելու: Ես չեմ բաց արել արկղիկը, բայց բովանդակությունն ինձ հայտնի է: Դա Ֆլորայի ակնեղենների պահարանն է:

ԱՐՏԱՇԵՍ. Ո՞ւր է այն:

ԱՆԱՀԻՏ. Իմ սենյակում:

ԱՐՏԱՇԵՍ. Վերադարձրու իրեն: Լսո՞ւմ ես, անպատճառ վերադարձրու:

ԱՆԱՀԻՏ. Այդ իմ գործը չէ: Ես կտամ քեզ, դու ինչ ուզում ես արա:

ԱՐՏԱՇԵՍ. Շատ բարի, թող մնա: Ես իսկույն կերթամ և կխոսեմ նրա հետ: Նախ պետք է բացատրել երեկվա դեպքերի համար մի հանելուկ է:

ԱՆԱՀԻՏ, Ահ, այդ տեսարա՜նը, երբեք չեմ մոռանալ: Երբ նա, ճիչ արձակելով, ընկավ թևերիս վրա, կարծեցի հանկարծամահ եղավ: Հետո, նրա հոր հուսահատական աղաղակը: Հայրիկի ձյունի պես սպիտակեց երկյուղից, ծառաների իրարանցումը, Ֆլորայի քարացած կերպարանքը.: Այս բոլորը պիտի տեսնեիր, Արտաշես, որ զգայիր, թե ի՞նչ ես արել...

ԱՐՏԱՇԵՍ, Դարձյալ նույնը, քույր կարելի է կարծել, որ կամ դու ես խելագարվել կամ ես: Չեմ հասկանում, ի՞նչ եմ արել Ֆլորային, որ երեկվանից դես ակնարկում ես և չես բացատրում:

ԱՆԱՀԻՏ. Դու հափշտակել ես նրա սիրտը:

ԱՐՏԱՇԵՍ. Անահիտ, բառերի հետ մի խաղար:

ԱՆԱՀԻՏ. Ֆլորան ինքը խոստովանեց ինձ: «Ես մի թշվառ էակ եմ», այս էր նրա վերջին խոսքը ուշաթափվելուց առաջ: «Անահիտ, ես սիրում եմ Արտաշեսին», որ էր նրա առաջին խոսքը, երբ ուշքի եկավ և երբ մենք մենակ էինք իր սենյակում: Այնուհետև բոլորը պատմեց: Զգացումը հղացել է նրա սրտում քեզ տեսնելու առաջին օրից և զարգացել է այնքան արագ, որ ինքն էլ չգիտե իրան հաշիվ տալ:

ԱՐՏԱՇԵՍ. (Մեկուսի, մռայլ): Մի խոչընդոտ և՛ս իմ ճանապարհի վրա:

ԱՆԱՀԻՏ. Դու չպիտի թույլ տայիր, որ այդ զգացումը նրա մեջ զարգանա: Դու չունեիր իրավունք թույլ տալու:

ԱՐՏԱՇԵԱ. Ումի՞ց պիտի վերցնեի այդ իրավունքը:

ԱՆԱՀԻՏ. (Տատանվելով): Չգիտեմ, այդ մասին քեզ է հայտնի և ուրիշներին և ոչ քո մորն ու քրոջը:

ԱՐՏԱՇԵՍ. (Մի քանի վայրկյան լուռ տարակուսանքով նայում է Անահիտին, ապա մոտենում է և բռնում նրա ձեռը): Քույր, դու գիտես, որ ես կատակ չեմ սիրում:

Ասա պարզ, ի՞նչ է այն գաղտնիքը, որ թաքցնում եք ինձանից: Ի՞նչ պատճառով է Ֆլորան ուշաթափվել:

ԱՆԱՀԻՏ. (Տեղը խլելով): Թող ինձ, չեմ կարող ասել: Հարցրու մայրիկին: Ահա գալիս է այն աներեսը: Ներիր, ես չեմ կարող նրան տեսնել: (Գնում է խորքի դռներով):

ՏԵՍԻԼ 3

ԱՐՏԱՇԵՍ, ՀՐԱՆՏ և ԱՐԱԶ ԱՐԱԶՅԱՆ

ՀՐԱՆՏ. (Գալիս է աջ կողմի դռներով: Ձեռ է տալիս Արտաշեսին ամուր թափով): Ողջո՛ւյն, ընկեր: (Դառնալով դեպի հյուրասենյակ); Արի, արի, ահա նա, պարոն: Կարող ես անձամբ հետը խոսել և համոզվել քանի որ ինձ չես հավատում:

ԱՐԱԶ ԱՐԱԶՅԱՆ. (Գալիս է Հրանտից հետո: Ամուր կազմվածքով, քաջառողջ, արևակեզ դեմքով երիտասարդ է, արծվաքիթ, կարճ խուզած մազերով և բավական մեծ միրուքով: Հագած է հին վեստոն, տակից սևագույն արխալադի պես մի բան, երկայն կոշիկներ, որ մինչև ծնկերը ծածկում են մոխրագույն պանթալոնը: Հայացքը համարձակ է, քայլվածքը խրոխտ, ձևերը ծանրաբարո, բայց ներվային: Սովորություն ունի մի ձեռը խոթել պանթալոնի գրպանը: Վզովը գցած է դեղնագույն գլխանոց (բաշլղ): Գլխին դրած է մորթյա կլոր գդակ, որ ներս մտնելով իսկույն չի վերցնում: Կանգնում է դռան առջև առանց (բարևելու):

ԱՐՏԱՇԵՍ. (Մի փոքր նայելուց հետո ճանաչում է և ուրախացած): Արազ, այդ դո՛ւ ես: (Դիմում է առաջ, ուղում է, համբուրել, բայց տեսնելով Արազի սառնությանը, կանգ է առնում):

ԱՐԱԶ. (Կողք նայելով, սառը հեգնական, բավականանում է միայն թույլ սեղմելով Արտաշեսի ձեռը): Առաջ պետք է միմյանց ճանաչենք: Լսել եմ գնում ես:

ԱՐՏԱՇԵՍ. (Սառը): Այո՛:

ԱՐԱԶ. Ո՞ւր:

ԱՐՏԱՇԵՍ. Իմ ընկերների մոտ:

ԱՐԱԶ. Ո՞վքեր են քո ընկերները,

ԱՐՏԱՇԵՍ. Դու նրանց չես ճանաչո՞ւմ:

ԱՐԱԶ. Ուրեմն, ճի՞շտ է այդ տղայի ասածը:

ՀՐԱՆՏ. (Չարախինդ հեգնությամբ): Ինչպես տեսնում ես:

ԱՐԱԶ. (Կտրուկ): Ուխտադրո՞ւժ, ես այդ չէի սպասում:

ԱՐՏԱՇԵՍ. Արազ, կատակ անելու ժամանակ չէ:

ԱՐԱՋ. Դժբախտաբար Արազը վաղուց է մոռացել կատակ անելը: Ուխտադրուժ, կրկնում եմ, քեզ ուրիշ անուն տալ չի կարելի: Լինել մեր շրջանի մոլեռանդ անդամ, գնալ հյուսիս, մի քանի տարվա մեջ մոռանալ բոլորը, թողնել իսկական ընկերներին, երես դարձնել մի դրոշակից, անցնել մյուսը և դավանել մեզ համար վնասակար գաղափարներ — դա ոչ միայն ուխտը դրժել է նշանակում, այլև... դավաճանություն: (Ներվային թափով վերցնում է գլխից գդակը և մի քայլ առաջ է գալիս):

ԱՐՏԱՇԵՍ. (հանգիստ): Նախկին ընկեր, եթե դու չլինեիր Արազ Արազյանը, ես գիտեի ինչպես կապել քո բերանը: Բայց դու այն մոլորվածներից ես, որոնք սիրելի են մեզ համար իրենց անկեղծությամբ, ազնվությամբ և խոր հավատով դեպի իրենց գործը:

ԱՐԱՋ. Ինչ արժեք ունի այժմ քո սերը կամ համակրանքը: Ես արհամարհում եմ քո կարծիքը:

ՀՐԱՆՏ. (Քաշվել է մի անկյուն և ամբողջ ժամանակ մերթ հեգնական, մերթ կատաղի հայացքներ է ձգում Արազի վրա): Օհո՛...

ԱՐՏԱՇԵՍ, Թող այդպես լինի, բայց հանգստացիր, ես ուխտադրուժ չեմ, մանավանդ — դավաճան: Ես միայն երեխայության խանձարուրից դուրս եկած մարդ եմ: Տասնութ տարեկան էի, երբ հափշտակվեցի ձեր շրջանով: Հայրս էր ձեր գլխավոր ուսուցիչը: Հեռացա այստեղից, տեսա ուրիշ շրջաններ, ծանոթացա ավելի լուրջ և ավելի բարձր իդեալների հետ — փոխվեցի: Լավ արի, թե վատ — չգիտեմ, Բայց փոխվեցի խելքով. համոզմունքով և սրտիս բոլոր ուժով:

ՀՐԱՆՏ. Ինչպես և ես...

ԱՐՏԱՇԵՍ. Ասա՛, ի՞նչն է ինձ պակասում այն ժամանակից, արդյոք մաքրությունը, անկեղծությունը, թե ազնվությունը, թե սերը դեպի հալածվածները և տանջվածները: Ահա այս մասին միայն կարող է խոսք լինել մեր մեջ: (Սկսում է անցուդարձ անել):

ՀՐԱՆՏ. Դու այժմ ավելի ազնիվ ես, քան առաջ:

ԱՐԱՋ Ես լեզվի մարդ չեմ, որ քեզ հետ երկար վիճաբանեմ: Մենք էլ ունինք պերճախոս հռետորներ, որոնք լեզվով պետություններ են կործանում ապահով ժողովներում: Ես արհամարհում եմ նրանց էլ: Ես մի մեծ և անբախտ գործի հասարակ զինվոր եմ: Ես գիտեմ միայն մի բան, որ այնտեղ, հեռու երկրում ունինք մի արյունաքամ ժողովուրդ, որին այսպես կամ այնպես պիտի փրկենք մեր կյանքի գնով:

ՀՐԱՆՏ. Փրկեցեք, ո՞վ է ձեզ խանգարում:

ԱՐԱՋ. (Ուշադրություն էի դարձնում Հրանտի վրա): Եվ դու, որ այնպիսի ոգևորությամբ խոստանում էիր մեզ հետ այնտեղ գնալ, այժմ գնում ես հակառակ կողմ: Այժմ, երբ քո ուժերը կազմակերպվել են, երբ ունիս ուսում, գիտություն և մի կարևոր արհեստ: Արտաշես, մենք այժմ թվով շատ ենք, ճիշտ է, բայց մեր թշնամին հազար գլխանի մի հրեշ է: Մենք չպիտի ջլատենք մեր ուժերը, մենք

բոլորս պիտի միանանք և ծառայենք մեր և միմիայն մեր ժողովրդին: Եթե քեզ նմանները թողնեն մեր անբախտ արյունակիցներին և գնան օտարներին ծառայելու — մեր դատը մեռած է:

ՀՐԱՆՏ. (Կծու եղանակով): Ձեր դատը մեռած է ծնվելու օրից:

ԱՐԱԶ. (Վշտացած, կատաղի): Ո՛չ, պարո՛ն, ոչ, նա մեռած չէ և չի մեռնիլ, քանի որ մենք բոլորովին ջնջված չենք աշխարհի երեսից: (Մի արհամարհական հայացք ձգելով Հրանտի վրա, երեսը դարձնում է):

ԱՐՏԱՇԵՍ Արազ, մարդ կարող է միայն այն գործին ծառայել, որին հավատում է, այլապես, դրա ծառայությունն անբարոյականություն է: Ես ձեր գործին չեմ հավատում: Երկրորդ, երբ ամբողջ մարմինը վարակվել է, երբեք նրա անդամները առանձին-առանձին չեն բուժվում:

ՀՐԱՆՏ. Այդ մի սովորական միտք է, որ միայն ապուշները չեն հասկանում:

ԱՐԱԶ. Բայց այնտեղ սովորական հիվանդություն չի տիրում, մանուկ, այլ ժանտախտ, սով, ավերում, հրդեհ, կոտորած: Այնտեղ դժոխքն է թագավորում, հասկացի՛ր:

ԱՐՏԱՇԵՍ. Գիտեմ, գիտեմ:

ԱՐԱԶ. Ոչ, չգիտես: Օհ, եթե տեսնեիր այն, ինչ որ ես տեսել եմ իմ աչքով, այն ավերված գյուղերը ամայի ավանները, այրված արտերը, սրբապղծված տաճարները, բռնաբարված աղջիկներին, այն հազարավոր մայրերին իրենց զավակներին ողբալիս, այն կիսակենդան թաղված դիակները, այն ժամանակ չէիր փոխիլ քո հավատամքը:

ՀՐԱՆՏ. Եվ կնստեիր տանդ, հայրենասիրական վառվռուն է դեր կհորինեիր կամ կգնայիր այնտեղ, երկու քուրդ կսպանեիր, որպեսզի փոխարենը հարյուրավոր հայ կանանց և երեխաների գլուխներ կտրվին:

ԱՐՏԱՇԵՍ. (Մի զսպիչ և կատաղի հայացքով): Հրանտ, ձայնդ կտրիր: (Արազին): Այն բոլորը, ինչ որ ասացիր, տեսել եմ ես և ես...

ԱՐԱԶ. Օտար վայրերում, մեզնից հեռ՞ու…

ԱՐՏԱՇԵՍ. Թշվառությունը հայրենիք չունի:

ԱՐԱԶ. Բայց մեր թշվառությունն անսահման է. անիրավ, քո տեսածները մերը չեն, անիրավ, այդ ամենի համար կան ուրիշ պատերազմներ: Ինչո՞ւ նրանք չեն թողնում իրենց արյունակիցներին և գալիս մեզ օգնելու, ասա օտարամոլ:

ԱՐՏԱՇԵՍ. (Դառը ծիծաղ): Օտարամո՛լ... Ահա իմ հոր սիրած հայհոյանքը, որ կարծում է մի համոզիչ զենք է իր ձեռքում: Օտարամոլությունը բոլոր ազգերի թշվառների արդար դատին ծառայելը չէ, ո՛չ, հազար անգամ ո՛չ, այլ սխալ գաղափարներին հետևիլը: Կրկնում եմ, ես չեմ հավատում ձեր գործին, ինչպես ուրեմն, ծառայեմ նրան առանց հավատի: Թշվառ, հեռու չէ այն ժամանակը, երբ կպարզվի, թե ում իդեալներն են հիմնված ավելի արդար հիմունքների վրա՝ մե՞րը,

թե ձե՞րը: Սակայն թողնենք անօգուտ վիճաբանությունը: Միևնույնն է, ոչ դու կարող ես ինձ դարձի բերել և ոչ ես քեզ: Ասա, ո՞րտեղ է Դերեկյանը:

ԱՐԱՁ. Երկրում:

ԱՐՏԱՇԱՍ. Ո՞րտեղ է Հալլաբյանը:

ԱՐԱՁ. Բիթլիսի բանտում:

ԱՐՏԱՇԵՍ. Համազա՞սպը:

ԱՐԱՁ. Աքսորված է Աքիա:

ԱՐՏԱՇԵՍ. Ո՞ւր է Գրիգորիսը:

ԱՐԱՁ. Սպանված է քրդերից:

ՀՐԱՆՏ. (Կծու): Իր եղբայրներից:

ԱՐՏԱՇԵՍ. Իսկ Արմենա՞կը:

ԱՐԱՁ. Դեռ կենդանի է:

ԱՐՏԱՇԵՍ. Հուսով եմ, որ մեր կատակասեր Մելիքսեթը նո՞ւյնպես:

ԱՐԱՁ. Կատակով ավանդեց հոգին ձեռքերիս վրա համիդեյի գնդակից:

ՀՐԱՆՏ. Անօգուտ զոհեր:

ԱՐՏԱՇԱՍ. (Հետզհետե հուզվում է): Արամայի՞սը:

ԱՐԱՁ. Կասկածի տակ էր, սպանեցինք:

ՀՐԱՆՏ. (Կծու): Երևի, առանց կասկածն ստուգելու:

ԱՐՏԱՇԵՍ. Վերջապես, մեր անվեհեր Դարիա՞լը:

ԱՐԱՁ Քրդերն այրեցին նրան, (Հուզված): Բայց ինչո՞ւ համար ես քրքրում իմ վերքերը, ո՞վ տվեց քեզ իրավունք:

ԱՐՏԱՇԵՍ. (Մռայլ եղանակով, դողդոջուն, ձայնով): Անձնազոհ ընկերներ իմ պատանեկության, բոլորդ միևնույն անիրագործելի նպատակի համար, միևնույն սխալ ճանապարհի վրա:

ՀՐԱՆՏ. (Կծու և չարախինդ): Ասում են այսպես կոչված Հայաստանում հայ չի մնացել:

ԱՐԱՁ (Բռունցքները սեղմելով խեղդված ձայնով): Ասում են, պարոն, ասում են:

ՀՐԱՆՏ. Ասում են, ձեր շնորհիվ են նրանց ոչնչացրել:

ԱՐԱԶ. (Գդակը դնում է գլխին, դուրս է բերում դաշույնը պիջակի տակից և, պատյանից հանելով, հարձակվում է Հրանտի վրա): Ես կկտրեմ այդ շան կոկորդը:

ՀՐԱՆՏ. (Ետ ցատկելով, դուրս է բերում պանթալոնի գրպանից մի ատրճանակ և ուղղում է Արազի կրծքին): Հապա, փորձի՛ր:

ԱՐՏԱՇԵՍ. (Անմիջապես կանգնում է երկուսի մեջ): Կանգ առեք, հիմարներ: Դա կռվի դաշտ չէ: Թեթև լռություն: Հրանտին: Միթե դրա համար են տվել քեզ այդ ատրճանակը, (Դառնալով Արազյանին): Դիր դաշույնը պատյանը: Մի՛ կարծիր, թե զենք գործածելը միայն դուք գիտեք: (Դառնում է երկուսին էլ); Ամոթ ձեզ. դուք դեռ չեք մոռացել ձեր հին հաշիվները մի աղջկա համար: Թշվառներ եք դուք երկուսդ էլ: (Թեթև, լռություն): Զենքը միայն բռնակալների դեմ պիտի գործածել:

ՏԵՍԻԼ 4

ՆՈՒՅՆՔ և ՍԵՆԵՔԵՐԻՄ

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Ներս է գալիս խորքի դռներից, աղմուկը լսելով: Նկատելի նիհարել է և ավելի ծեր է երևում): Ատրճանակ, դաշույն, եղբայր եղբոր դեմ, ահա ինչ օրին ենք հասել:

ԱՐԱԶ. (Ուշքը ժողվել է, բայց տակավին դողում է կատաղությունից): Դա մի ստոր զրպարտություն էր, դա անարգանք էր նահատակների դիակներին: Բայց ես չեմ ուզում եղբայրասպան լինել: (Դաշույնը դնում է պատյանը, թաքցնում է իր տեղը, նկատելով Սենեքերիմին, մոտենում է նրան և ջերմագին ձեռը սեղմում): Ուսուցիչ, ներումն եմ խնդրում :

ՀՐԱՆՏ. (Տեսնելով Սենեքերիմին, ատրճանակը դնում է գրպանը և քաշվում է մի անկյուն):

ԱՐՏԱՇԵՍ. Արազ, Հրանտը լավ տեղյակ չէ ձեր գործերին, ապա թե ոչ չէր համարձակվի այդպիսի ծանր մեղադրանք դնել ձեր վրա: Ազնիվ երիտասարդներ, ինչ էլ լինի ձեր նպատակը, գաղափարի զոհեր եք, և ես խոնարհում եմ ձեր գերեզմանների առջև:

ԱՐԱԶ. (Արտասվալի ձայնով): Եթե միայն գերեզմաններ ունին:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Լավ ասացիր, Արազ. «Եթե միայն գերեզմաններ ունին». (Ջերմ գրկում է Արազին): Ահա սիրտ, ահա գլուխ: (Արտաշեսին): Ներիր, ես ինձ թույլ տվեցի մի փոքրիկ լրտեսություն, ականջ դրեցի այն դռների ետևից: (բաց է թողնում Արազին): Ա՜հ, Արազ Արազյան, իմ նախկին աշակերտ, դու կարճ խոսքերով ասացիր բոլորը, ինչ-որ ահա տասն օր է ես քարոզում էի այդ դավաճանին: Քո կրակոտ խոսքերը բխում էին իմ սրտի խորքից: Ա՜ա, լավ ասացիր, «Ինչո՞ւ նրանք չեն թողնում իրենց արյունակիցներին և գալիս մեզ օգնելու»: Հապա, ինչու մեզ ձգել են կրակի և արյան մեջ, անտեր, անօգնական: Խե՜ղճ ազգ, խե՜ղճ ժողովուրդ:

ԱՐԱԶ. Ուսուցիչ, մի ողբար, մենք շատ էլ խեղճ չենք:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Իհարկե, իհարկե, խեղճ չենք, քանի որ քեզ նման հերոսներ ունինք: Ա՛հ, ո՞վ ասաց, թե արյան զավակն ավելի թանկ է, քան հոգեկանը: Ահա սա է իմ զավակը, սա, և ոչ նա, այն խորթ ծնունդը հարազատ ծնողների: Մի մերձենար նրան, Արազ, նա թույն է բերել հյուսիսից, նա կարող է վարակել քեզ մի սոսկալի ախտով:

ԱՐՏԱՇԵՍ. (Զարմանալով); Հայր, խնդրում եմ վերջ տալ այդ տեսարանին, մենք արդեն բավական ճանաչում ենք միմյանց:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Լռի՛ր, ես քո հայրը չեմ: Մի՛ պղծիր այդ բառը: Ազգամոռներ, դուք կործանվածներ եք, որ ուզում եք կործանել մեր ազգը, գրգռելով մեր դեմ մի հզոր պետություն: Ա՛հ, հեռո՛ւ, հեռո՛ւ ձեզ նման ժանտախտից: Արազ, նա լեղի սրսկեց իր հոր սիրտը: Նա մութ գերեզմանի դռները վաղաժամ բաց արավ իմ աչքերի առջև:

ԱՐԱԶ. Ուսուցիչ, դուք դողում եք, դուք տկար եք երևում: (Մեկուսի): Որքա՜ն փոխվել է:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Տկար չեմ, Արազ, Ես կազդուրվեցի քո խոսքերից: Նեկտարի նման ուժ ներշնչեցին իմ հնացած արյան: Ա՛հ, դողում եմ, այնպես չէ՞, Արազ: Բայց այդ ոչինչ, ուրախությունից է: Գնա՛, որդի, գնա քո սուրբ ճանապարհով, օրհնում եմ այն հոգվույս ամբողջ կարողությամբ, սրտիս ամբողջ ուժով:

ՀՐԱՆՏ. (Ցածր): Դժբախտաբար, օրհնություններն այժմ չեն օգնում:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Առաջ չէր նկատել Հրանտին: Լսելով նրա ձայնը, ցնցվում է); Ա՛հ, դու նրան դեռ չե՞ս վռնդել այստեղից: (Նայում է Հրանտին և կատաղում): Վնասակար միջատ ի՞նչ գործ ունիս իմ տանը: (Շնչասպառ): Դո՛ւրս, դո՛ւրս այստեղից: (Ուզում է հարձակվել Հրանտի վրա):

ԱՐԱԶ. (Բռնելով Սենեքերմի թևը): Ուսուցի՛չ...

ԱՐՏԱՇԵՍ. Հայր, ուշքի եկ, լավ բան չես անում:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Դուրս վռնդիր այդ զազրելի սողունին: Դո՛ւրս, ապա թե ոչ — մա տներովս կխեղդեմ նրան: Նա հանդգնեց ցեխ շպրտել իմ ուսուցիչների երեսին, նա ծաղրեց իմ սրբությունները, նա ոտնատակ արավ իմ հյուրասիրությունը: Նա չի կարող մինչև անգամ քո ընկերը լինել, որքան ևս դու ապականված լինիս: (Հրանտին): Դուրս, լիրբ, դո՛ւրս, գարշելի, քեզ նմանների տեղը անարգության սյունն է:

ՀՐԱՆՏ. Ոչ, կախաղանն է, որին սպասում եմ:

ԱՐՏԱՇԵՍ. (Հրանտին կատաղած): Լռելո՞ւ ես թե չէ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Խոսի՛ր, Արազ, դո՛ւ խոսիր, իմ լեզուն այրվում է ներքին կրակից:

ԱՐԱԶ. Ուսուցիչ, նա չարժե ձեր բարկությանը: (Բռնում է Սենեքերիմի թևը):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Աա՛, չարժե՞: ճիշտ ես ասում, ճիշտ ես ասում, որդի: Բայց տար ինձ այստեղից: Տար, ես խեղդվում եմ: Այստեղ օդ չկա, մայրենի օդ... (Թույլ է տալիս, որ Արազը տանի իրան):

ԱՐԱԶ. (Հրանտին, մոտովն անցնելիս): Մենք դեռ կտեսնվինք:

ՀՐԱՆՏ. Ես ինքս կաշխատեմ հանդիպել քեզ հենց այսօր:

ՏԵՍԻԼ 5

ԱՐՏԱՇԵՍ և ՀՐԱՆՏ

ԱՐՏԱՇԵՍ. (Մի քանի վայրկյան լռությունից հետո): Կարելի է լինել տեռորիստ, անիշխանական, ինչ կամենաս, բայց քաղաքավարությունը պարտավորական է ամենքի համար:

ՀՐԱՆՏ, Ես չեմ հիշում ոչ հայր, ոչ մայր, որոնցից սովորեի այդ: Ես ունիմ մի թունավորված հոգի, որ վրեժ է պահանջում մարդկանցից: Գնանք այստեղից շուտով: Ես տեսնում եմ, որ շրջանը կամաց-կամաց ազդում է քեզ վրա: Նոյեմզարին կուղարկեմ դուրս բերելու քեզ այս նեխված մթնոլորտից: (Դանդաղ քայլերով գնում է աջ կողմի դռներով):

ԱՐՏԱՇԵՍ. (Նայում է ժամացույցին, արագ քայլերով մոտենում է խորքի դռներին և բանալով) Անահի՛տ:

ԱՆԱՀԻՏ. (Ներսից): Ի՞նչ ես կամենում:

ԱՐՏԱՇԵՍ. Բեր այստեղ այն արկղիկը: (Ետ է գալիս, վերցնում

է սեղանի վրայից գլխարկը): Դեռ ժամանակ ունիմ:

ԱՆԱՀԻՏ. (Գալիս է խորքի դռներով Ֆլորայի արկղիկը ձեռքին): Ահա:

ԱՐՏԱՇԵՍ. Ես իսկույն կվերադառնամ: (Վերցնում է արկղիկը և շտապով գնում է):

ՏԵՍԻԼ 6

ԱՆԱՀԻՏ Ա ԿԱՏԱՐԻՆԵ

ԿԱՏԱՐԻՆԵ. (Գալիս է խորքի դռներից): Ուր գնաց նա, (Նկատելով ճամփարկղը, որ կիսով չափ լիքն է) Աա, նա արդեն իրեղենը կապել է: Անաստվածը դուրս քշեց իմ որդուն տնից:

ԱՆԱՀԻՏ. Ոչ ոք նրան դուրս չի քշում: Նա ինքն է գնում իր կամքով:

ԿԱՏԱՐԻՆԵ. Եթե հայրդ հենց առաջին օրից նրա հետ այնպես չվարվեր, այս փորձանքն իմ գլխին չէր գալ: Տեսնված բա՞ ն է, որ հայրը որդուն անվանի դավաճան:

ԱՆԱՀԻՏ. Հայրիկին պետք է շատ բան ներել: Նա ծեր է և տանջվում է: Տեսնո՞ւմ ես ինչպես է փոխվել տասն օրվա մեջ: Գիտես, մայրիկ, երեկ նա գրիչը կոտրեց և դեն ձգեց: Նա այժմ միայն իրան է անիծում:

ԿԱՏԱՐԻՆԵ. Սուտ ես ասում: Հենց այս րոպեիս նա օրհնեց ինքն իրան, օրհնելով իր աշակերտին:

ԱՆԱՀԻՏ. Այնդիսի աշակերտին չէր կարելի չօրհնել Արազ Արազյանը գնում է իր կյանքը զոհելու իր ժողովրդին: Նա հերոս է:

ԿԱՏԱՐԻՆԵ. Ահ, ինչպե՜ս նրան ճանապարհ դրեց, ինչպե՜ս համբուրվեց հետը: Հարազատ որդի ունենաս և, ուրիշներին օրհնելով, նրան անիծես. Ահ, Անահիտ, քո հայրը սիրտ չունի:

ԱՆԱՀԻՏ. Մայրիկ, դու այնքան նախապաշարված ես հայրիկի դեմ, որ մոռանում ես Արտաշեսի գնալու իսկական պատճառը:

ԿԱՏԱՐԻՆԵ. Այդ աղջիկը: (Կատաղելով): Ա՛ա, չորանար այն կնոջ մեջքը, որ ծնել է նրան: Ինչո՞ւ համար է նա փաթաթվել իմ որդու վզին: Ո՞վ է նա, ի՞նչ անցյալ ունի: Ես այս բոլորը պիտի իմանամ այսօր, հերիք է ինչքան լռեցի...

ԱՆԱՀԻՏ. Նա ինձ նեղը գցեց, հարցնելով Ֆլորայի ուշաթափվելու մասին: Ես պատճառը չկամեցա ասել: (Անցուդարձ է անում):

ԿԱՏԱՐԻՆԵ. Ես կասեմ: Նա իմ ձեռքից հեշտ չի ազատվիր Խեղճ Ֆլորա, դու ինչ մեղք ունեիր, որ խառնվեցիր մեր քամրախտության: Այնպիսի ընտանիքի աղջիկ, այնպիսի գեղեցկուհի, սիրտ, խելք, հարստություն…ո՞ւմ է թողել իմ որդին և ո՞ւմ հետ է կապել իր կյանքը:

ԱՆԱՀԻՏ. (Քայլելով մոտեցել է նախասենյակի դռներին): Զգույշ, գալիս է:

ՏԵՍԻԼ 7

ՆՈՒՅՆՔ ՈՒ ԱՐՏԱՇԵՍ

ԱՐՏԱՇԵՍ. (Գալիս է աջ կողմի դռներից, վրդովված): Դա ստորություն է, անասելի ստորություն: Ի՞նչ եմ արել ես նրանց: Գնացի վերջին բարևս տալու Ալվանյլաններին, ծառան կոպիտ կերպով դռները փակեց իմ առջև, ասելով, թե ինձ ընդունել չեն կարող: Ա՛ա, գիտեմ, հիմար չեմ, դա իմ հոր մեքենայությունն է:

ԱՆԱՀԻՏ. Ձսպիր քեզ, ես չեմ կարող հայրիկի մասին այդպիսի խոսքեր լսել:

ԱՐՏԱՇԵՍ. Չես կարող, հեռացիր այստեղից: Բոլորդ երես եք դարձրեք ինձնից, մոռացեք, այդ հազար անգամ ավելի լավ կլինի ինձ համար: Գնա այս րոպեիս

Ֆլորայի մոտ և ասա նրան, որ արկղիկն ես հանձնեցի ծառային: Շտապիր, ես ուզում եմ իմանալ ստացե՞լ է, թե չ՞է:

ԱՆԱՀԻՏ. Ինչպես կամենաս: (Գնում է խորքի դռներով):

ՏԵՍԻԼ 8

ԱՐՏԱՇԵՍ Ա ԿԱՏԱՐԻՆԵ

ԿԱՏԱՐԻՆԵ. Ուրեմն, անում ես: Շատ լավ, թող մորդ այստեղ, ձեռքերը խցում, արտասուքն աչքերին:

ԱՐՏԱՇԵՍ. (Սկսում է մնացյալ իրեղենները տեղավորել ճամփարկղի մեջ): Լավ, բավական է, կաշխատեմ շուտով վերադառնալ:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Հառաչելով): Ոչ, դու չես վերադառնալ, ես այդ շատ լավ գիտեմ: (Լռություն մի քանի վայրկյան): Լսիր, որդի, ես այժմ գիտեմ քո գնալու պատճառը: Ի՞նչ արած, մնացիր այստեղ, թող նա էլ մնա: Ես նրան դուրս, չեմ անիլ իմ տնից:

ԱՐՏԱՇԵՍ. (Շարունակ աշխատելով); Ո՞վ, մայրիկ, ո՞ւմ մասին է խոսքը:

ԿԱՏԱՐԻՆԵ. Քո կնոջ մասին:

ԱՐՏԱՇԵՍ.(Շարունակում է աշխատել, զարմացած¤: Իմ կնո՞ջ: Ո՞վ է իմ կինը:

ԿԱՏԱՐԻՆԵ. Ես ի՞նչ գիտեմ, անունն էլ միտս չէ: Այն աղջիկը, որ քեզ հետ եկել է և ամեն որ քո սենյակումն է:

ԱՐՏԱՇԵՍ. Նոյեմզա՞րը: Ո՞վ ասաց, թե նա իմ կինն է:

ԿԱՏԱՐԻՆԱ. Ամբողջ քաղաքն է խոսում:

ԱՐՏԱՇԵՍ. (Ծիծաղելով): Այդ լավ է, ամբողջ քաղաքն ինձ պսակել է, մինչդեռ ես ամուրի եմ: (Լուրջ): Մայրիկ, դատարկ բամբասանքներ են: Իմ և Նոյեմզարի մեջ եղած կապն ավելի մաքուր է, քան ամուսնականը:

ԿԱՏԱՐԻՆԵ. Տեսնում ես, ուրեմն, կա քո և նրա մեջ մի կապ: Դա խայտառակություն է, որդի, ավելի լավ է օրինավոր պսակվել:

ԱՐՏԱՇԵՍ. Մայր, ես գիտեմ՝ ինչ ես ուզում ասել: Բայց Նոյեմզարն այնքան անարատ է, որքան քո աղջիկը:

ԿԱՏԱՐԻՆԵ, (Վիրավորված): Մի՛ անպատվիր քրոջդ, մի՛ անպատվիր:

ԱՐՏԱՇԵՍ. Ես այնքան ստոր չեմ, որ իմ քրոջ բյուրեղի մաքրությունը համեմատեմ մի արատավոր բանի հետ: Նոյեմզարը մի ազնիվ ընտանիքի աղջիկ է: Նա իմ գաղափարակիցն է և իմ ամենասիրելի ընկերոջ հարսնացուն:

ԿԱՏԱՐԻՆԵ. Քո ընկերոջ հարսնացուն ինչո՞ւ է քեզ հետ շրջում քաղաքից քաղաք, եթե օրինավոր աղջիկ է:

ԱՐՏԱՇԱՍ. Մայրիկ, Նոյեմզարն իմ կինը չէ: Ես ոչ կերդվեմ և ոչ փաստեր կտամ ուզում ես հավատա, ուզում ես ոչ: Ուրիշ ասելիք չունիմ: (Դառնում է, որ շարունակի գործը):

ԿԱՏԱՐԻՆԵ. Սիրուհի՞դ էլ չէ:

ԱՐՏԱՇԵՍ. Ոչ , ոչ, ասում եմ: Մի վիրավորիր մի որբ, անօգնական և անմեղ աղջկա: Ասում եմ, նա իմ ամենամտերիմ ընկերոջ հարսնացուն է: Այն ընկերոջ, որ երկու անգամ ինձ ազատել է մահից...

ԿԱՏԱՐԻՆԵ. (Վախեցած): Մահի՞ց... Ի՞նչ ես ասում դու:

ԱՐՏԱՇԵՍ. Այո՛, գրեթե մահից, Նա ինձ փրկել է մի անգամ կազակների մտրակից, մի ուրիշ անգամ սվինների հարվածից... բանտում:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Ավելի վախեցած): Ի՞նչ ասացիր, բանտո՞ւմ: Ուրեմն դու բա՞ նտ ես նստել:

ԱՐՏԱՇԵՍ. Երեք անգամ:

ԿԱՏԱՐԻՆԵ. Երեք անգամ: Ինչո՞ւ համար:

ԱՐՏԱՇԵՍ. (Սառն հեգնությամբ): Ո՞վ գիտե: Համենայն դեպ ոչ գողության և ոչ որևէ խարդախության համար: Նրանք իրավունք ունեին ինձ ավելի խիստ պատժելու, ես չեմ բողոքում:

ԿԱՏԱՐԻՆԵ. Այդ էր պակասում իմ տանջանքներին: Բայց ինչո՞ւ մեզ չես գրել:

ԱՐՏԱՇԵՍ. Ինչ կարիք կար ձեզ վշտացնելու: Ես ամեն միջոց ձեռք էի առել, որ լուրը ձեզ չհասնի: Մայր, ես եղել եմ և հիվանդանոցում:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Ընկճված): Ասա՛, որդի, ասա բոլորը և միանգամից վերջացրու:

ԱԲՀՏԱՇԵՍ. Չէի ասիլ, եթե դու չխոսեիր Նոյեմզարի մասին: Ամբողջ մի ամիս ես գտնվել եմ մահու և կյանքի մեջ: Եվ գիտե՞ս ով է եղել այն միակ անձը, որ գիշեր-ցերեկ հսկել է ինձ ինչպես հարազատ քույր — անքուն, անհանգիստ: Այն աղջիկը, որին արհամարհում եք և անպատվում, Նոյեմզարն իմ կինը չէ, մայր, մի կին կամ սիրուհի չէր կարող լինել այն, ինչ որ նա է ինձ համար: Նա ավելի է ինձ համար, քան նույնիսկ մի քույր կամ մայր, Բայց թողնենք, այդ տեսակ հարաբերությունների մասին դուք դեռ գաղափար չունիք...

ԿԱՏԱՐԻՆԵ. Խելքս ոչինչ չի կտրում, Ի՞նչ գործ ունի նա այստեղ: Ինչո՞ւ է եկել քեզ հետ և քեզ հետ էլ գնում է:

ԱՐՏԱՇԵՍ. Այդ ինքը գիտե, (Նայելով ժամացույցին): Մայրի՛կ, ես ուշանում եմ, թող գործս վերջացնեմ:

ԿԱՏԱՐԻՆԵ. Ո՛չ, չեմ թողնիր: Այն բոլորից հետո, ինչ որ ասացիր, քո գնալն ավելի անհնարին է դառնում, Քեզ երեք անգամ բանտ են նստեցրել, դու եղել ես մահամերձ հիվանդ, և ես չեմ իմացել: Խնայի՛ր մորդ, մի գնար այդ անիծված երկիրը: Մինչև հիմա այնտեղ թոքախտն ու վատ հիվանդություններն էին սպանում մեր զավակներին, այժմ բանտն ու աքսորը: Մի գնար, (Նստում է թուլացած):

ՏԵՍԻԼ 9

ՆՈՒՅՆՔ և դարձյալ ԱՆԱՀԻՏ

ԱՆԱՀԻՏ. (Գալիս է խորքի դռներից՝ գլխարկով): Ասացի Ֆլորային, նա ստացել է արկղիկը, նա ուզում է քեզ հետ տեսնվել:

ԱՐՏԱՇԵՍ. (Հեգնական ժպիտով): Ուզում է ինձ հետ տեսնվել դռներն իմ առջև փակելու:

ԱՆԱՀԻՏ. Նա մեղավոր չէ: Հայրն է հրամայել ծառաներին քեզ չընդունել: Այս մասին Ֆլորան ահագին վեճ է ունեցել իր հոր հետ: Այժմ նրանք չեն խոսում միմյանց հետ: Ֆլորան հագնվում էր, նա իսկույն ինքը կգաս այստեղ: Ես վազեցի, որ քեզ զգուշացնեմ: (Մոտենալով Կատարինեին): Մայրիկ, ինչո՞ւ ես այդպես ընկճվել: Դու Արտաշեսին պիտի ուրախ սրտով ճանապարհ դնես:

ԿԱՏԱՐԻՆԵ. Թո՛ղ ինձ, թո՛ղ ինձ, նա ուզում է, որ ես կամ հանկարծամահ լինիմ, կամ խելագարվիմ:

ԱՆԱՀԻՏ. (Նայելով դեպի աջ կողմի դռները): Ահա Ֆլորան, (Գնում է դիմավորելու):

ՏԵՍԻԼ 10

ՆՈՒՅՆՔ, ՖԼՈՐԱ, հետո ՆՈՅԵՄԶԱՐ, ՍԵՆԵՔԵՐԻՄ և ՀՐԱՆՏ

ՖԼՈՐԱ. (Ներս է մանում աջ կողմի դռներից: Նրա դեմքը հոգնած և գունատ է): Տիկին Կատարինե, ես եկա ձեզ համար միայն: Անահիտն ասաց, որ դուք հուսահատված եք... (Մոտենում է և համբուրվում Կատարինեի հետ):

ԿԱՏԱՐԻՆԵ. (վեր կենալով տեղից): Այո, Ֆլորա, նա գնում է և ինձ թողնում աղի արտասուքի մեջ: Ես մայրերից ամենադժբախտն եմ, որ զրկվում եմ քեզ նման հրեշտակից...

ՖԼՈՐԱ. (Սաստիկ շփոթվում է):

ԱՆԱՀԻՏ. Մայրիկ, ինչո՞ւ են հարկավոր այդ խոսքերը:

ԱՐՏԱՇԵՍ. (Ծանր): Օրիորդ, ես շնորհակալություն եմ հայտնում ձեր առատ նվիրաբերության համար: Բայց հետ ուղարկեցի այն, որովհետև եթե ընդունեի,

կվիրավորեի իմ ընկերներին: Կողպելով ձեր տան դռներն իմ առջև, դուք դրանով հետ եք վերցրել ձեր նվերը:

ՆՈՅԵՄԶԱՐ. (Ներս է մտնում աջ կողմի դռներից ու, տեսնելով Ֆլորային, թեթև ցնցվում է և կանգնում է դռների առջև):

ԿԱՏԱՐԻՆԵ. (Տեսնելով Նոյեմզարին, նույնպես ցնցվում է):

ԱՆԱՀԻՏ. (Արհամարհանքով երես է դարձնում Նոյեմզարից):

ՖԼՈՐԱ. (Չի նկատել Նոյեմզարին): Եթե ես անձ ունենայի իմ իրավունքի տակ, նրա դռները միշտ բաց կլինեին ամենավտանգավոր ընկերների համար: Բայց, ինչպես կամենաք, ես կգտնեմ ճանապարհ իմ նվերը տեղ հասցնելու:

ԱՐՏԱՇԵՍ. (Ճամփարկղը կողպելով, բանալին դնում է գրպանը): Ես պատրաստ եմ: Մնում է մի կառք կանչել (Վերարկուն վերցնում է թևի վրա):

ՆՈՅԵՄԶԱՐ Իմ կառքը սպասում է դրսում, կարող ենք երկուսս էլ տեղավորվել: Վերարկուդ տուր ինձ:

ՖԼՈՐԱ. (Նոյեմզարի ձայնից ցնցվելով, նայում է):

ԿԱՏԱՐԻՆԵ. (Հանկարծ գրգռվելով): Անիծվածներ, ի՞նչ եք ուզում իմ որդուց: Գնացեք ձեր գործին, թողե՛ք նրան,

ԱՐՏԱՇԵՍ. (Խիստ հանդիմանությամբ): Մայրի՛կ, մայրի՛կ:

ԱՆԱՀԻՏ. (Բռնելով Կատարինեի թևը): Մի՛ թեթևացնիր մեր անունը այդ օտարուհու մոտ:

ԿԱՏԱՐԻՆԵ. Ա՛հ, երկնային թագավոր, ուժ տուր ինձ դիմանալու:

ԱՐՏԱՇԵՍ. Ես կգամ, մայրիկ, հետ կգամ, շուտով: (Ճամփարկղը վերցնում է):

ԿԱՏԱՐԻՆԵ. (Ուրախանալով): Ահ, կգաս, շուտո՛վ, ասում ես: Դեհ, ներիր, որդի, բարի ճանապարհ, արի համբուրեմ քեզ, (հարձակվում է Արտաշեսին համբուրելու, բայց հանկարծ սարսափահար կանգ է առնում, լսելով Սենեքերիմի ձայնը):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Բեմի խորքից, բարձր, դողդոջուն ձայնով): Նա չի գալ, նա չի գալ... Նա գնում է օտարների համար կախաղան բարձրանալու:

ԲՈԼՈՐԸ. (Ցնցվում են):

(Մի քանի վայրկյան լռություն):

ՀՐԱՆՏ. (Երևում է նախասենյակի դռներում և կանգնում սպառնալի դիրքում):

ԿԱՏԱՐԻՆԵ. Ա՜ա, բայղուշ, քո ձայնը... (Մի ճիչ արձակելով, հարձակվում է Արտաշեսի վրա, ճամփարկղը խլում է և գցում է հատակի վրա): Առաջ սպանիր

ինձ, հետո ոտքդ դուրս դիր այս տնից: Դու չես գալ, դու չես գալ... Կախաղան ասաց:

ԱՐՏԱՇԵՍ. Մայր, թո՛ղ, աղաչում եմ, մի՛ խայտառակիր ինձ...

ԿԱՏԱՐԻՆԵ. (Խեղդված ձայնով): Գնա... գնա... Օհ, խեղդվում եմ... օդ, օդ, (Ուշաթափվում է):

ԱՐՏԱՇԵՍ. Մայրի՛կ, (հարձակվում է և մորը բռնում, որ չընկնի):

ՖԼՈՐԱ. (Գունատ ու անշարժ կանգնած է):

ԱՆԱՀԻՏ. (Նոյեմզարին և Հրանտին): Դուք տեսնո՞ւմ եք այս տեսարանը: (Վազում է մորն օգնելու):

ՆՈՅԵՄԶԱՐ նայում եմ միմյանց

ՀՐԱՆՏ

Վարագույր

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Առաջին արարվածի տեսարանն է անփոփոխ, միայն ճաշի սեղանի վրա ոչինչ չկա:

ՏԵՍԻԼ 1

ԱՆԱՀԻՏ և ՆԱԶԱՆԻ

ԱՆԱՀԻՏ. (Վարագույրը բարձրանալիս դուրս է գալիս աջ կողմի երկրորդ դռներով, մի աման ձեռքին, վրեն գդալ): Նազանի:

ՆԱԶԱՆԻ. (Գալիս է խորքի դռներով, թևերը ծալած): Հրամանքս:

ԱՆԱՀԻՏ, էլի կա՞ սուպ:

ՆԱԶԱՆԻ. Կա մի քիչ էլ:

ԱՆԱՀԻՏ. Պահիր մայրիկի համար: Տար այս ամանը:

ՆԱԶԱՆԻ. Ուրեմն, կերա՞ վ,

ԱՆԱՀԻՏ.. Վերջապես:

ՆԱԶԱՆԻ. Փառք աստծու: Երեք օր էր խեղճ կնիկը պատառ չէր դրել բերանը: Օ՛հ, ողորմած աստված, չեմ իմանում ինչ պատահեց, որ քո օրհնած տունը տակն ու վրա եղավ: (Գնում է խորքի դռներով, ամանը տանելով):

ԱՆԱՀԻՏ. (Կամացուկ մոտենում է աջ կողմի դռներին, նայում է արանքով, ականջ է դնում, հետո): Հայրի՛կ: (Սպասում է): Երևի քնած է, (հառաչում է, նա դառնում է, նստում ճաշի սեղանի քով և ընկնում մտածողության մեջ):

ՏԵՍԻԼ 2

ԱՆԱՀԻՏ և ՏԻԳՐԱՆ

ՏԻԳՐԱՆ. (Գալիս է խորքի դռներից: Հագնված է այնպես, ինչպես առաջին արարվածում): Օրիորդ:

ԱՆԱՀԻՏ. (Սթափվելով, ոտքի է կանգնում): Ա՜հ, այդ դո՞ւք եք, պարոն Տիգրան: Շնորհակալ եմ, որ չեք մոռանում:

ՏԻԳՐԱՆ. Ինչպե՞ս է այժմ տիկինը:

ԱՆԱՀԻՏ. Մի փոքր լավ է այսօր, բայց աջ թևը չի կարողանում շարժել: Գիշերը դարձյալ անքուն է անցկացրել: Միայն լուսադեմին մի քիչ քնեց: Առհասարակ, վատ է, վատ է, պարոն Տիգրան:

ՏԻԳՐԱՆ. Իսկ պարոն Սենեքերի՞մը:

ԱՆԱՀԻՏ. Հայրիկն ավելի վատ դրության մեջ է: Երեկվա տեսարանից հետո մտել է իր սենյակը և ոչ ոքի չի թողնում յուր մոտ: Գիշերվա ընթացքում նա մի քանի անգամ եկավ մայրիկին տեսնելու, նայեց լուռ, գլուխը տարօրինակ շարժեց ու գնաց: Նա էլ չի քնել ամբողջ գիշերը, շարունակ ծխում է, հառաչում ու անցուդարձ անում: Պարոն Տիգրան, նա գիտե ավելի, քան թե մենք, նրան հայտնի է Արտաշեսի մի սարսափելի գաղտնիքը, որ մեզ չի ասում: Նա միայն կրկնում է. «Նա կործանված է, փրկություն չկա»: Եվ այդ խոսքերն են, որ երեկ մայրիկին այնպես հարվածեցին:

ՏԻԳՐԱՆ. (Մտազբաղ, խորհրդավոր): Ո՞րտեղից և ինչպե՞ս կարողացավ նա իմանալ այդ գաղտնիքը:

ԱՆԱՀԻՏ. Ուրեմն, դուք է՞լ գիտեք: Ասացեք, պարոն Տիգրան, աղաչում եմ, ի՞նչ է այդ:

ՏԻԳՐԱՆ. Չունիմ իրավունք ասելու, Արտաշեսն ինձ կհամարի մատնիչ:

ԱՆԱՀԻՏ. (Հուսահատված): Անգութ մարդիկդ, դուք սիրտ չունիք...

ՏԻԳՐԱՆ. Օրիորդ, մի՛ հուսահատվեք. հո՛ւյս կա, որ Արտաշեսն հաջող տանի յուր գործը և ազատվի: Մի՛ մտածեք, բոլորը կանցնի:

ԱՆԱՀԻՏ. Այս ամենի մեջ մի բան գոնե մխիթարական է, որ Արտաշեսը Նոյեմզարի հետ ամուսնացած չէ: Դա միակ բանն է, որ սփոփում է մորս:

ՏԻԳՐԱՆ.. Ես չէի ասում ձեզ, որ այդ մի անմիտ բամբասանք է:

ԱՆԱՀԻՏ. Ոհ, ամոթ բամբասողներին: Ես էլ թեթևամտաբար շտապեցի ասել Ֆլորային և այն փոթորիկն առաջացնել: Բայց ի՞նչ գիտեի, որ նա այդպես սիրում է Արտաշեսին:

ՏԻԳՐԱՆ. Ուրեմն, այդ ճի՞շտ է, որ օրիորդ Ալվանդյանը սիրում է նրան:

ԱՆԱՀԻՏ. Երեկ երեկոյան դեպքից հետո ես նրա մոտն էի: Պետք է տեսնեիք ինչպես փոխվեց խեղճ աղջիկը, երբ ասացի, թե լուրը սուտ է, թե Արտաշեսը ոչինչ կապ չունի այդ Նոյեմզարի հետ, բացի ընկերականից: Նա փաթաթվեց իմ պարանոցին և ուրախությունից արտասվեց:

ՏԻԳՐԱՆ. Ո՞ւր է այժմ Արտաշեսը:

ԱՆԱՀԻՏ. Կարծեմ յուր սենյակում:

ՏԻԳՐԱՆ. Մենա՞կ:

ԱՆԱՀԻՏ. Ո՞վ գիտե: Շարունակ գալիս են, խորհրդակցում ու գնում: Ամբողջ գիշեր նրա սենյակից ձայներ էին լսվում:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Բեմի ետևից): Անահի՛տ, Անահի՛տ... ա՛խ...

ԱՆԱՀԻՏ. Լսո՞ւմ եք այդ բարձր հառաչանքը: Առաջ այդ չկար: (Բարձր): Գալիս եմ, հայրիկ: (Ցածր). Պարոն Տիգրան, ես վախենում եմ ծերունու ուղեղի մասին...

ԱԵՆԵՔԵՐԻՄ. (Բեմի ետևից): Անահի՛տ, Անահի՛տ... ախ...

ԱՆԱՀԻՏ. Իսկո՛ւյն, իսկո՛ւյն: (Շտապով գնում է աջ կողմի առաջին դռներով):

ՏԵՍԻԼ 3

ԱՐՏԱՇԵՍ և ՏԻԳՐԱՆ

ՏԻԳՐԱՆ. (Մենակ մնալով, մոտենում է ձախ կողմի դռներին, ականջ է դնում և հետո թեթևակի մի քանի անգամ զարկում դռներին): Կարելի՞ է:

ԱՐՏԱՇԵՍ. (Դուրս է գալիս ձախ կողմի դռներից ձեռքին թղթերի մի կապոց): Տիգրա՛ն: Ես հենց ուզում էի քեզ տեսնել, այս թղթերը թաքցրու մի ապահով տեղ:

ՏԻԳՐԱՆ. (Թղթերը առնում է և դնում գրպանը): Դու սպասո՞ւմ ես:

ԱՐՏԱՇԵՍ. Ամեն վայրկյան: Բայց միևնույնն է, ինչ ուզում է, թող լինի: (Ձեռը դնում է Տիգրանի ուսին): Ա՛խ, Տիգրան, երանի քեզ, որ միայն գաղափարներով ես կապված մեր շրջանի հետ և ոչ գործով: Թեորիայի և գործի մեջ կա ահագին անդունդ, որ շատ քչերին է վիճակված անցնելու առանց ոտք կոտրելու:

ՏԻԳՐԱՆ. Դու տատանվո՞ւմ ես:

ԱՐՏԱՇԵՍ. Եղել են մարդիկ, որոնք իրենց հոգում կրել են պարտականության և սիրո կռիվը: Մեր լեզվով դա անվանվում է՝ գտնվել երկու կրակի մեջ: Բայց ե՛ս, Տիգրան, ե՛ս չորս կրակի մեջ եմ, չորս միմյանցից զորավոր և միմյանց ջնջող զգացումների փոթորկում: (Հեռանում է Տիգրանից): Այո, երեկ ես քաջություն ունեի, այսօր տատանվում եմ:

ՏԻԳՐԱՆ. Այս րոպեին Անահիտն ինձ ասաց, թե նա վախենում է հորդ ուղեղի մասին:

ԱՐՏԱՇԵՍ. Դատարկ երկյուղ չէ, ընկեր, (Մոտենում է ցածր և խորհրդավոր): Ծերունին կարծեմ իմացել է իմ գալու, և գնալու իսկական պատճառը:

ՏԻԳՐԱՆ. Այս բանն ասաց և Անահիտը: Բայց նա թաքցնում է գաղտնիքը մորիցդ ու քրոջիցդ:

ԱՐՏԱՇԵՍ. (Դառն ժպիտով): Լավ է թաքցնում, հը, երեկ նա ուրիշների մոտ գոռաց. «Նա չի գալ, նա չի գալ, նա գնում է օտարների համար կախաղան բարձրանալու»: Եվ ո՞վ է այդ օտարը, արի, հասկացրու նրա մոլեռանդ ազգասիրությանը: — Իմ ամենամտերիմ ընկերը, որին պարտական եմ իմ կյանքը երկու անգամ, Ի՞նչ փույթ, որ նա հայ չէ, ի՞նչ փույթ, որ նա միևնույն արգանդից չի ծնվել, որից ծնվել եմ ես: Ոչ մի եղբայր չէր անիլ ինձ համար այն, ինչ որ Իպոլիտն է արել: Եվ իմ հայրը պահանջում է, որ ես լինիմ ուխտադրուժ, երդմնազանց, փոքրոգի և երկչոտ միմիայն նրա համար, որ Իպոլիտը հայ չէ... Օհ, գռեհիկ զգացում ցեղամոլության, ե՞րբ պիտի դու վերջնապես ոչնչանաս մարդկանց սրտերում: Ոչ, ոչ, թող կորչին տատանումները: Ես երդվել եմ ազատել և պետք է ազատեմ Իպոլիտին շղթաներից:

ՏԻԳՐԱՆ. Նույնիսկ զոհելով ծնողների՞դ:

ԱՐՏԱՇԵՍ. Նույնիսկ զոհելով ծնողներիս:

ՏԻԳՐԱՆ. Նույնիսկ Ֆլորայի՞ն:

ԱՐՏԱՇԵՍ. Կաց: Դու գիտե՞ս այդ:

ՏԻԳՐԱՆ. Ես վաղուց էի կասկածում: Անահիտն այսօր հաստատեց իմ ենթադրությունը: Ինչո՞ւ դու ինձ ոչինչ չէիք ասում այդ մասին:

ԱՐՏԱՇԵՍ. Մինչև երեկ ես ինքս էլ չգիտեի այդ: Երեկվա տեսարանը բացեց աչքերս և ես նոր միայն իմացա, թե որքան հեռու եմ գնացել: Հրաժեշտի վայրկյանին, նայելով Ֆլորայի քարացած կերպարանքին, ես զգացի մի այնպիսի վիշտ, որ ծնողներիս անգամ մոռացա: Եղավ մի վայրկյան, երբ պատրաստ էի չոքել այդ աղջկա առջև և ասել. «Թող կորչի պարտականությունը, դու տանջվում ես, ապրել ես ուզում, ես էլ եմ ուզում, ծնողներս էլ են ուզում: Ես մնում եմ այստեղ քեզ և ծնողներիս համար»: Բայց դռների միջից նայում էին ինձ ընկերներս հանդիմանական հայացքով, ականջներիս հնչում էին Իպոլիտի աղերսական խոսքերը. «Ազատեցեք ինձ, ես հարկավոր եմ մի մեծ գործի համար, ազատիր դու, Արտաշես, որովհետև ես քեզ երկու անգամ ազատել եմ, և հենց քո պատճառով եմ այս շղթաները կրում»: Եվ, բարեբախտաբար, ես չարի այդ հիմարությունը:

ՏԻԳՐԱՆ. Եվ, այնուամենայնիվ, վճռեցիր զոհել մի քանի անձեր մեկի կասկածելի փրկության համար: Դա խիստ է, դաժան:

ԱՐՏԱՇԵՍ. Բայց դա սուրբ պարտականություն է:

ՏԻԳՐԱՆ, Համաձայն եմ: Սակայն, որքան Իպոլիտին ես պարտական քո կյանքը, նույնչափ և՛ ծնողներիդ: Մտածե՞ լ ես այդ մասին:

ԱՐՏԱՇԵՍ. Ամբողջ գիշեր, դառը տանջանքներով... Լսի՛ր, լսիր, Տիգրան, կա մի բան, որ դեռ քեզ հայտնի չէ: Եթե ես լինեմ այնքան երկչոտ և ստոր, որ վճռեմ այսօր ետ կանգնել իմ քայլից, այնուամենայնիվ, ես կորած եմ իմ ծնողների համար:

ՏԻԳՐԱՆ. (վախեցած մի քայլ ետ է կանգնում): Ճի՞շտ եմ հասկանում, արդյոք, քո միտքը:

ԱՐՏԱՇԵՍ. (Բռնում է Տիզրանի ձեռը): Սուս, ոչ մի խոսք նրանց: (Խորհրդավոր ձայնով): Երեկ ստացա առաջին, այսօր երկրորդ սպառնալիքը: Ես ստիպված եմ գնալ: (Բաց է թողնում Տիգրանի ձեռը և հեռանում):

ՏԻԳՐԱՆ. Թշվառ, այդ ի՞նչ ես արել:

ԱՐՏԱՇԵՍ. Ես խլել եմ ուրիշի վիճակը: Այդ ավելի պատասխանատու է, քան եթե վիճակն ինձ ընկներ:

ՏԻԳՐԱՆ. (Մռայլ): Այո՛, այո՛, քո դրությունը սոսկալի է:

ԱՐՏԱՇԵՍ. Բավական է, այլևս ոչ մի խոսք այդ մասին: Գնա, խնդրում եմ և այդ թղթերը թաքցրու: Որպե առ որպե կարելի է սպասել անկոչ հյուրերին: Երեկ պիտի փախչեի նրանց ձեռքից, չթողեցին, դու գիտես, որ ես շատ մեղքեր ունիմ քավելու համար... Պետք է շուտով փախչիլ:

ՏԻԳՐԱՆ. Ես կերթամ և շուտով կվերադառնամ: (Արագ քայլերով գնում է դեպի խորքի դռները, այնտեղ հանդիպում է Ալեքսանդր Ալվանդյանին, քաղաքավարի ճանապարհ է տալիս և դուրս գնում):

ՏԵՍԻԼ 4

ԱՐՏԱՇԵՍ, ԱԼԵՔՍԱՆԴՐ և ՍԵՆԵՔԵՐԻՄ

ԱՐՏԱՇԵՍ. (Ալեքսանդրին տեսնելով, ցնցվում է, անշարժ մնում)

ԱԼԵՔՍԱՆԴՐ. (Գլուխը թեթև շարժում է իբրև բարևելու նշան): Սենեքերիմը տա՞նն է:

ԱՐՏԱՇԵՍ. (Լուռ մոտենում է աջ կողմի առաջին դռներին, բաց է անում և դեպի ներս): Հայրիկ, պարոն Ալվանդյանը կամենում է քեզ տեսնել: (Ետ դառնալով գնում է դեպի յուր սենյակը):

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Սպասեցեք:

ԱՐՏԱՇԵՍ. (Կանգ է առնում):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Դուրս է գալիս աջ կողմի առաջին դռներից: Հագուստը նույնն է, միայն օսլայած շապիկի փոխարեն գիշերային շապիկ: Անքնությունից աչքերի կոպերն ուռել են, անլվա է, մազերը քիչ գզգզված): Ալեքսանդր:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Երբեք չէի կարող մտածել, թե պետք է մի օր բարեկամիս տունը մտնեմ այս դրության մեջ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Անտարբեր): Ի՞նչ է պատահել: (Առանց Ալեքսանդրին նայելու մոտենում է ծանր քայլերով գրասեղանին և ցրված հայացքով նայում գրքերին, պատին, հատակին):

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Որդիդ իմ աղջկան խլել է իմ ձեռքից, ես մնացել եմ անզավակ, ահա ինչ է պատահել:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Միևնույն ցրված հայացքով, միևնույն անտարբերությամբ նայում է նախ Ալեքսանդրին, ապա Արտաշեսին):

ԱՐՏԱՇԵՍ. (Վայրկենաբար վրդովվելով, անմիջապես զսպում է) Ի՞նչ եք կամենում ինձանից:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. (Ձայնը մի քիչ բարձրացնելով): Ի՞նչ եմ կամենում: Կամենում եմ, որ դուք իմ աղջկան վերադարձնեք ինձ:

ԱՐՏԱՇԵՍ. Ձեր աղջիկը ձեր տանն է, իսկ ես այստեղ եմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Նա չկա իմ տանը: Դուք հափշտակել եք նրա սիրտը, հոգին, բոլոր մտքերը և թողել մի դատարկ մարմին, որ օր-օրի վրա կմախք է դառնում: Դուք մտել եք իմ տունը բարեկամի դիմակով և վարվել եք ինձ հետ ինչպես ավազակ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Դառը հանդիմանությամբ): Ալեքսանդր...

ԱՐՏԱՇԵՍ, (Մի ուժգին շարժումն է անում, կարծես կամենա հարձակվել Ալեքսանդրի վրա, բայց իսկույն զսպում է իրան. թեթև լռություն): Շարունակեցեք...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ուրիշ ի՞նչ անուն տամ ձեր վարմունքին: Դուք նրա երեխայական գլուխը լցրել եք այնպիսի մտքերով, որոնք նրան պիտի կործանեն: Դուք նրա բարի սիրտը խլել եք յուր հորից և դարձրել սատանան գիտի դեպի ո՞ւր: Նա թողնում է ինձ մեն-մենակ և հեռանում, ուր եք տանում նրան, ասացեք:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Թույնը մի անգամ բույն է դրել կազմվածքի մեջ և պետք է արագ-արագ տարածվի: Ողորմելի , անտեր հասարակություն: (Բռունցքները կատաղի սեղմելով): Ախ, կջախջախեի ոտներիս տակ այն հիդրային, որ կոչվում է սոցիալիզմ...

ԱՐՏԱՇԵՍ. (Սառը): Կկամենայի իմանալ, ձեր աղջիկն ի՞նքն է ասել, թե ես շեղել եմ նրան ճանապարհից:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Մ՚իթե նա պիտի ասեր, որ ես իմանայի, դժբախտությունը որտեղից է գալիս իմ գլխին: Այն օրից, որ դուք եկել եք, ես իմ աղջկան չեմ ճանաչում: Նա առաջ հեզ էր, խոնարհ և աշխատում էր ոչ մի բանով ինձ չվշտացնել: Ես նրա դեմքի վրա տխրություն չէի տեսնում: Ուրախ էր, ինչպես մի անհոգ թռչուն: Իսկ այժմ յուր սենյակից դուրս չի գալիս, միշտ մենակ, մտախոհ, ծածկամիտ: Նա իմ հարցերին պատասխանում է ակամա: Նա խոսում է ինչ-որ պարտականությունների մասին և ահա երեք օր է շարունակ կրկնում է. «Հայրիկ, ես պետք է հեռանամ այս քաղաքից»: Ո՞ւր, հարցնում եմ: Ինքն էլ չգիտե ինչ պատասխանե: Մեկ ասում է, թե ուզում է ճանապարհորդել, մեկ, թե զզվել է յուր այժմյան կյանքից, ուզում է փոխել այն: Իսկ այսօր պնդում է, թե վճռել է բարձրագույն ուսում ստանալ: Վերջապես, մի կես ժամ առաջ ես հուսահատությունից կատաղեցի և կյանքումս առաջին անգամ գոռացի նրա վրա: Իսկ նա... ամենայն սառնասրտությամբ ասաց. Բոլորը զուր է, ես այստեղ մնալ չեմ կարող: Եթե չթողնես գնալ, ես կփախչեմ տնից: Եվ այս րոպեիս նա ճանապարհի պատրաստություն է տեսնում:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Մի՛ թողնիր նրան, Ալեքսանդր, մի՛ թողնիր: Կապոտիր նրա ոտներն ու ձեռները, գցիր մի մութ սենյակ և ինքդ պահապան կանգնիր դռան մոտ: Ազատությունն է, որ փչացրել է մեր զավակներին: Ես այժմ եմ հասկանում: Ես, որ միշտ ազատություն էի քարոզում:

ԱՐՏԱՇԵՍ. (Սառը): Պարոն Ալվանդյան, ես ձեր աղջկան երբեք չեմ հորդորել յուր հոր տնից հեռանալու: Հավատո՞ւմ եք իմ խոսքերին:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Բայց նա հեռանում է, ասում եմ, նա կատակ չի անում, (Զգացվելով): Նա թողնում է յուր ծերունի հորը վիզը ծռած, անեծքը բերանին: Ի՞նչ վատություն էի արել ձեզ, որ այս փորձանքը բերեցիք իմ գլխին: Ինչո՞ւ համար էր հարկավոր այդ: Մի՞թե չկային ուրիշ ընտանիքներ, ուր քարոզեիք ձեր ցնորքները, ինչո՞ւ ընտրեցիք ձեր հոր ամենահավատարիմ բարեկամի տունը:

ԱՐՏԱՇԵՍ. Դժբախտաբար, ես ժամանակ չունիմ վիճելու: Ասացե՛ք կարճ ու կտրական, ի՞նչ եք ուզում ինձնից:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ես պահանջում եմ, որ դուք ինչպես իմ աղջկան շեղել եք ճանապարհից, այնպես էլ ետ բերեք:

ԱՐՏԱՇԵՍ. Այսինքն կամենում եք, որ ես նրան համոզեմ մնալ ձեր տանը, այնպես չէ՞ :

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Այո:

ԱՐՏԱՇԵՍ. Կարո՞ղ եմ ես այդ անել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Կարող եք, որովհետև ինչ որ էլ նա ասի, գիտեմ, որ ձեր ետևիցն է գնում:

ԱՐՏԱՇԵՍ. Շատ բարի, ես կաշխատեմ կատարել ձեր պահանջը: (Բարձր): Անահի՛տ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ի՞նչ եք ուզում անեք:

ԱՐՏԱՇԵՍ. Խնդրել, որ ձեր աղջիկը գա այստեղ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Այդ անկարելի է,

ԱՐՏԱՇԵՍ. Ինչո՞ւ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Անկարելի է: Եկեք դուք ինքներդ մեր տուն:

ԱՐՏԱՇԵՍ. (Դրական): Երբե՛ք: Դուք ձեր տան դռները փակել եք իմ առջև, թողեք, որ նրանք միշտ փակված մնան:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. (Տատանվելով): Բայ՞ց...

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ալեքսանդր, կարող ես հավատալ նրան: Նա ամեն բան կորցրել է, բացի ազնվությունից: Վերջապես, չէ որ այս իմ տունն է:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Շատ լավ, ես համաձայն եմ: Կգնամ և նրան կուղարկեմ այստեղ: Սենեքերիմը պատասխանատու է: Խե՜ղճ մարդ, ինչպես փոխվել ես դու: (Գնում է խորքի դռներով):

ՏԵՍԻԼ 5

ԱՐՏԱՇԵՍ, ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԱՆԱՀԻՏ

(Լռություն):

ԱՐՏԱՇԵՍ. (Նայել է նախ Ալեքսանդրի ետևից, ապա իր հորը՝ թախիծով):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Լուռ ճանապարհ է դնում Ալեքսանդրին մինչև դռները և ետ է գալիս): Նա իր աղջկան կուղարկի այստեղ: Քո արարմունքից հետո դա այնպիսի հավատ է Ալեքսանդրի կողմից դեպի իմ տունը, որ պետք է հարգել ինչպես սրբություն:

ԱՐՏԱՇԵՍ. Այդպես է:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ես պատասխանատու եղա քո ազնվության մասին, որովհետև ապականված է քո գլուխը և ոչ սիրտը: Դու կհամոզես այդ աղջկան տեղից շչարժվել, ես կկանգնեմ ահա այն դռների ետևում: (Ցույց է տալիս աջ կողմի առաջին դռները): Եվ կհետևեմ ձեր խոսակցությանը: Եթե դու չաշխատիս կատարել քո խոստումը, երդվում եմ, որ քեզ կսպանեմ:

ԱՐՏԱՇԵՍ. Լավ, հայրիկ...

ԱՆԱՀԻՏ. (Դուրս է գայիս աջ կողմի առաջին դռներից գլխարկով, ձեռին տետրակներ և շտապով անցնում է դեպի խորքի դռները):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ո՞ւր ես գնում, աղջի:

ԱՆԱՀԻՏ. Դասի, հայրիկ. ուշացել եմ: (Շտապով գնում է խորքի դռներով):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Դառնությամբ): Լսեցի՞ր: Տեսա՞ր ինչպես է մաշվել ու սպառվել: Այդ դասերը նրան կսպանեն: Նա առանց այն էլ թույլ կազմվածք ունի: Արտաշե՛ս, Արտաշե՛ս. գնա քո ընտրած ճանապարհով, ես համոզվեցի, որ չեմ կարող քեզ դարձի բերել: Բայց, գիտե՞ս, մի քիչ գութ ունենալն էլ լավ բան է: Մի՛ կարծիր, որ ինձ համար եմ ասում: Ոչ, ոչ, քավ լիցի. ես կարեկցություն չեմ խնդրում քեզնից: Խնայիր նրան, խնայիր մորդ...

ԱՐՏԱՇԵՍ. (Ցնցվելով): Մո՛րս... (Գնում է դեպի աջ կողմի երկրորդ դռները):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Մի՛ անհանգստացնիր, նա քնած է:

ԱՐՏԱՇԵՍ. (Դռները կամացուկ բաց է անում և նայում): Այո, քնած է: (Գալիս է բեմի կենտրոնը):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Անբախտ կին: Նրա աջ թևը չի շարժվում և.... չի շարժվիլ երբեք, այդ դու լավ գիտես, իբրև բժիշկ: Ես էլ եմ մեղավոր նրա առաջ, օհ, շատ եմ մեղավոր: Քսանյոթ տարի հափշտակված լինելով իմ գործունեությամբ, ես նրա վերաբերմամբ եղել եմ մի զազրելի էգոիստ: Բայց ոչինչ, իմն էլ վերջացած է: Ես երկար ապրել չեմ կարող, զգում եմ: Մի՛ թողնիր նրան իմ մահից հետո դռնեդուռ ընկնիլ, ողորմություն մուրալ: Ես խոմ ոչինչ չունիմ, իմ միակ ժառանգությունը դու էիր, գնացիր ձեռքիցս: Դե, հերիք է, ինչ հարկավոր է պառավ կնոջ պես մրթմրթալ, չէ որ ամեն բան վերջացած է... (Քայլերն ուղղում է դեպի աջ և գրեթե հասնում առաջին դռներին):

ԱՐՏԱՇԵՍ. (Ուշադիր դիտել է հորը, մոտենում է նրան մի քանի քայլ): Հայր, սպասիր: (Ավելի մոտենալով): Դու գիտե՞ս իմ այստեղ գալու պատճառը:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Ինչի՞դ է հարկավոր:

ԱՐՏԱՇԵՍ. Հայր, դու գիտե՞ս իմ գալու իսկական պատճառը:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Գիտեմ:

ԱՐՏԱՇԵՍ. (Շնչասպառ): Ո՞վ է ասել քեզ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Դու ինքդ...

ԱՐՏԱՇԵՍ. Հայր, ես երբեք չեմ հարբում, և ուղեղս դեռ առողջ է:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Պատանիներ եք դուք, անփորձ պատանիներ. Եվ հիմարներ են նրանք, որոնք ձեզ այդ տեսակ վտանգավոր գործեր են հանձնում: Ես լսել եմ իմ ականջներով, ահա այնտեղից, այդ դռների ետևից: (Ցույց է տալիս ձախ կողմի դռները):

ԱՐՏԱՇԵՍ. Հայր, դու կատարելապես լրտեսում ես ինձ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Հիմար-հիմար մի՛ խոսիր: Ի՞նչ ասել է լրտեսություն: Միթե դուք չե՞ք լրտեսում և ամեն միջոցների դիմում ձեր հակառակորդների միտքը հասկանալու: Այդ քո գալու օրից ես հետևում եմ քո ամեն մի քայլին: Բայց այս անգամ լրտեսություն չէր ուրիշ բան: Ասում եմ, երեխաներ եք դուք, դեռ մայրական կաթը չի չորացել ձեր շրթունքների վրա: Չգիտեք, որ պատերն էլ ականջներ ունին այդ տեսակ բաների համար:

ԱՐՏԱՇԵՍ. (Գրգռված): Ի՞նչպես պատահեց այդ, ասա՛:

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Գիշեր էր: Քունը փախել էր ինձանից: Իսկ միտքս գործում էր: Մռայլ գիշեր, սոսկալի վայրկյաններ: Դուք կարծում էիք ես քնած եմ: Խուլ խոսում էիք, ճշմարիտ է շշնջյունով, բայց պարզ: Լսեցի: Այո, ես ակամա լրտես եղա և բոլորն իմացա: Դու կործանված ես, զինվորների սվիններն արդեն պսպղում են քո կրծքի վրա... և հետո... կախաղանը...

ԱՐՏԱՇԵՍ. (Նայելով աջ ու ձախ): Սուս, բավական է. մայրիկը...

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Մի՛ վախենար, ես նրան ոչինչ չեմ ասիլ: Բայց ինչ օգուտ, մայրական նախազգացումը վաղուց է նրան ասել, թե դու կորած ես... թշվա՛ռ, թշվա՛ռ... (Գնում է աջ կողմի առաջին դռներով):

ՏԵՍԻԼ 6

ԱՐՏԱՇԵՍ ԵՎ ՏԻԳՐԱՆ

ԱՐՏԱՇԵՍ. (Հոր խոսքերից խորն ազդված, մտածում է, ճակատը շփելով: Մի քանի վայրկյան մենակ է բեմի վրա):

ՏԻԳՐԱՆ. (Գալիս է խորքի դռներով գունատ և հուզված): Մի դժբախտ լուր:

ԱՐՏԱՇԵՍ. (Սթափվելով, բայց անտարբեր): Ի՞նչ է պատահել:

ՏԻԳՐԱՆ. Այս րոպեիս լսեցի, որ Արազը երկաթուղու կայարանում դաշույնով ծանր վիրավորել է Հրանտին:

ԱՐՏԱՇԵՍ. Հրանտն երկու ժամ առաջ ինձ մոտ էր:

ՏԻԳՐԱՆ: Դեպքը պատահել է մի ժամ առաջ: Դու գիտես, որ Արազն այսօր իր խմբով պիտի ուղևորվեր Տաճկահայաստան: Հրանտը գնում է կայարան հատկապես նրա հետ վեճի բռնվելու երեկվա ընդհարման պատճառով: Նա Արազին վիրավորում է փողոցային խոսքերով: Արազը հանում է դաշույնը և խփում նրան, գոռալով «դավաճան»:

ԱՐՏԱՇԵՍ. Արազը բանտարկվա՞ծ է:

ՏԻԳՐԱՆ. Դեռ ոչ, չեն բռնել:

ԱՐՏԱՇԵՍ. Եվ հազիվ թե կարողանան բռնել: Ճանաչում եմ ես Արազին:

ՏԻԳՐԱՆ. Հրանտին տարել են հիվանդանոց: Դրությունը անհուսալի է և ասում են հազիվ թե մինչև երեկո ապրի:

ԱՐՏԱՇԵՍ. Մի զոհ ևս իմ խղճի վրա: Եթե երեկ ինձ թողնեին գնալ, այդ դժբախտությունը չէր պատահիլ:

ՏԻԳՐԱՆ. Հրանտը վաղ թե ուշ պիտի իր անզուսպ լեզվի զոհը դառնար:

ԱՐՏԱՇԵՍ. Ես ցավում եմ ավելի Արազին: Ի՞նչ հոգով նա պիտի պաշտպանի իր արյունակիցներին այդ տեսակ եղբայրասպանությունից հետո: Տիգրան, գնանք Հրանտին տեսնելու:

ՏԻԳՐԱՆ. Ի՞նչ ես ասում, անմիտ, եթե մի տեղ կա քեզ համար գնալու, այդ երկաթուղու գնացքն է: (Տատանվելով): Դու դեռ չգիտես ի՞նչ է պատահել:

ԱՐՏԱՇԵՍ. Ուրիշ դժբախտությո՞ւն...

ՏԻԳՐԱՆ. (Գլուխը տխուր թեքում է կրծքին):

ԱՐՏԱՇԵՍ. (Ձայնը բարձրացնելով): Ասա՛, ի՞նչ ես համրացել:

ՏԻԳՐԱՆ. (Տատանվելով): Նոյեմզարին բանտարկել են:

ԱՐՏԱՇԵՍ. (Ցնցվում է, գունատվում: Լռություն): Ուրեմն, ամեն բան վեջրացա՛վ:

ՏԵՍԻԼ 7

ՆՈՒՅՆՔ ԵՎ ՖԼՈՐԱ

ՖԼՈՐԱ. (Գալիս է խորքի դռներով): Հայրս ինձ ասաց... որ (Տիգրանին տեսնելով, շփոթվում է):

ՏԻԳՐԱՆ. Թույլ տուր ինձ անցնիլ քո սենյակը մի նամակ գրելու: (Առանձին ցածր ձայնով): Չերկարացնես: Դու պետք է փախչես իսկույն ևեթ: (Գնում է ձախ կողմի դռներով):

ՏԵՍԻԼ 8

ԱՐՏԱՇԵՍ ԵՎ ՖԼՈՐԱ

ԱՐՏԱՇԵՍ. (Թեթև լռությունից հետո): Ֆլորա, ձեր հայրն ասաց, թե դուք ուզում եք հեռանալ այս քաղաքից: Կարելի՞ է իմանալ, ո՞ւր եք մտադիր գնալու: (Աթոռ է առաջարկում):

ՖԼՈՐԱ. (Չի նստում): Դրա համա՞ր էիք կամեցել ինձ տեսնել:

ԱՐՏԱՇԵՍ. Այո:

ՖԼՈՐԱ. Չեմ կարող պատասխանել ձեր հարցին:

ԱՐՏԱՇԵՍ. Ֆլորա, դուք երեխա չեք: Երբ որոշում եք մի այդպիսի լուրջ քայլ անել, պարտավոր եք նախ և առաջ ձեզ հաշիվ տալու՝ ինչու համար եք անում:

ՖԼՈՐԱ. Ես գնում եմ բարձրագույն ուսում ստանալու:

ԱՐՏԱՇԵՍ. Ձեր հայրը հավատո՞ւմ է այդ բանին:

ՖԼՈՐԱ. Ոչ:

ԱՐՏԱՇԵՍ. Ֆլորա, այնտե՛ղ, ուր ուզում եք գնալ, դուք դեր չունիք կատարելու:

ՖԼՈՐԱ. (Վշտացած): Ինչո՞ւ մի Նոյեմզար կարող է ունենալ, իսկ ես՝ ոչ:

ԱՐՏԱՇԵԱ. Նոյեմզարն ունի որոշ պատրաստություն, կամքի զորեղ ուժ և բոլոր դժվարություններին դիմանալու համբերություն:

ՖԼՈՐԱ. Իսկ ես ունիմ թշվառներին օգնելու ջերմ փափագ և դրամ:

ԱՐՏԱՇԵՍ. Դուք դրամ չունիք: Բոլորը առայժմ պատկանում է ձեր հորը, իսկ նա ձեզ ոչինչ չի տալ:

ՖԼՈՐԱ. (Գրական): Կտա, ստիպված կլինի տալ: Առաջին պահ նա կկատաղի, կանիծե ինձ, բայց հետո կտա: Եվ ես նրա տվածով կօգնեմ նրանց, որոնք այնպես տանջվում են գաղափարի համար բանտերում և աքսորում:

ԱՐՏԱՇԵՍ. Այդ օգնությունը դուք կարող եք անել առանց այստեղից հեռանալու էլ:

ՖԼՈՐԱ. Ոչ, այդ այն չէ: Ես նույնպես ուզում եմ իմ աչքերով տեսնել բոլորը, մտածել ու զգալ ուրիշների պես: Իմ անմիտ, անհոգ, կուսական կյանքը ինձ ձանձրացրել է: Ես էլ փափագում եմ լինել մի Նոյեմզար, որ այնքան արժանացել է ձեր և ձեր ընկերների հարգանքին ու գովասանքին:

ԱՐՏԱՇԵՍ. Կամենո՞ւմ եք ասեմ, թե իսկապես ինչու համար եք գնում:

ՖԼՈՐԱ. (Շփոթվելով): Ասացեք:

ԱՐՏԱՇԵՍ. Դուք ոչ այնքան գործով եք հափշտակված, որքան... ինձնով:

ՖԼՈՐԱ. (Ավելի շփոթվելով): Դուք... սխալվում եք:

ԱՐՏԱՇԵՍ. Ֆլորա, այն շրջանը, ուր ուզում եք մտնել, նախ և առաջ թշնամի է կեղծիքին: Դիմակն այնտեղ դեր չի կատարում ընկերական հարաբերությունների մեջ: Սովորական ծամածռություններն առմիշտ արտաքսված են այդ շրջանից: Եթե ես ձեզ, առանց քաշվելու, ասացի, թե հափշտակված եք ինձնով, դա անհամեստություն չէր, այլ ընկերական պարզ խոստովանություն: Երբ իմ քույրը

թեթևամտաբար հաղորդել է ձեզ մի փողոցային բամբասանք, թե ես իբր թե գաղտնի ամուսնացած եմ Նոյեմզարի հետ, դուք ուշաթափվել եք: Ճի՞շտ է, արդյոք:

ՖԼՈՐԱ. (Տատանվելով): Ճիշտ է...

ԱՐՏԱՇԵՍ. Տեսնո՞ւմ եք: Ի՞նչ է ապացուցանում այդ: Մի՛ ամաչեք: Մեր շրջանում այդ տեսակ ամոթի զգացումը համարվում է երեսի շպար: Ազատվեցեք նախ և առաջ այն ժանգից, որ կյանքի հնամաշ պայմանները դրել են վեր կանանց սրտերի վրա: Համեստությունն այն ժամանակ է միայն համակրելի, երբ բնական և անբաժան է անկեղծությունից: Փոխանակ ձեր զգացումները քողարկելու, աշխատեցեք, որ նրանք միշտ լինեն մաքուր:

ՖԼՈՐԱ. (Ուշադիր լսելով, հափշտակվում է): Շարունակեցեք, շարունակեցեք...

ԱՐՏԱՇԵՍ. Այն, ինչ որ ձեր շրջաններում համարվում է պարկեշտություն, մի տեսակ փարիսեցիություն է: Մենք աշխատում ենք տղամարդի և կնոջ հարաբերությունները դարձնել ընկերական, անքող, բայց մաքուր: Մենք աշխատում ենք այնպես մտածել կնոջ մասին, որ մեր լեզուն չամաչի արտահայտել մեր զգացումները: Ձեր շրջանի մեջ ընդունված արտաքին վայելուչ ձևերի տակ թաքնված են շատ արատավոր միտումներ, որոնցից մենք զզվում ենք:

ՖԼՈՐԱ. (Ավելի ու ավելի հափշտակվելով): Առաջին անգամն եմ լսում այդպիսի խոսքեր և պատրաստ եմ լսել անվերջ: Շարունակեցեք, նրանք բաց են անում իմ առջև մի նոր, անծանոթ աշխարհ:

ԱՐՏԱՇԵՍ. Աշխատեցեք, ուրեմն, գրավվիլ այդ նոր աշխարհի լույսով: Այն ժամանակ դուք կբարձրանաք մեր հասարակության բարոյական մակերևույթից և կհասկանաք, թե ուր է թաքնված մարդու իսկական կոչումը: Ֆլորա, ո՛րքան դուք եք ինձնով հափշտակված, նույնքան և ես ձեզնով: Եթե սերը տանջանք է, ապա երեկվանից դես ես տանջվում եմ ավելի, քան վերջին հինգ տարիները, որ սոսկ տվայտանքների մի շղթա են եղել:

ՖԼՈՐԱ. (Բոլորովին հափշտակվելով): Արտաշես, անգին Արտաշես... (Ուզում է մոտենալ):

ԱՐՏԱՇԵՍ. (Ձեռի մի հանգիստ շարժումով): Ոչ, դրա համար չասացի: Թողնենք սովորական ձևերը: Սերը զգացում է և ոչ կիրք թողնենք այն իր մաքրության մեջ: Շնչենք նրա հստակ բուրմունքը հեռվից: Քիչ է տևելու մեր տեսակցությունը: Քսանևվեց տարեկան եմ և դեռ չեմ ճաշակել կնոջ համբույրը: Ինչո՞ւ քսանուվեց վայրկյան էլ չկարողանամ մնալ նույնը:

ՖԼՈՐԱ. (Վախեցած): Ի՞նչ եք ասում, ինչո՞ւ քսանվեց վայրկյան միայն, ինչո՞ւ ոչ ավելի: Ձեր խոսքերի տակ ես զգում եմ մի ինչ-որ սարսափելի բան...

ԱՐՏԱՇԵՍ. (Հանգիստ): Բոլորը կբացատրվի ինքնըստինքյան: Մի քիչ համբերություն: Այսօր ձեր հայրն ինձ անվանեց ավազակ: Մի վայրկյան արյունը գլխովս տվեց և չգիտեի ինչ կանեի, եթե ժամանակին չզսպեի ինձ: Դա մի անարդար վիրավորանք էր: Բայց ես նրան չեմ մեղադրում: Մի հայր, որ զրկվում է իր միակ զավակից, ունի իրավունք իր սովորական սառնասրտությունը

մոռանալու: Ֆլորա, մնացեք ձեր հոր տանը, մի՛ անբախտացրեք նրան — ահա իմ միակ խնդիրը:

ՖԼՈՐԱ. Չեմ կարող: Քանի որ ստիպել եք ինձ անկեղծ լինել — կլինեմ մինչև վերջը. առանց ձեզ ես մի օր անգամ չեմ կարող մնալ այստեղ:

ԱՐՏԱՇԵՍ. Բայց գիտե՞ք ես ուր եմ գնում... (Նայում է Ֆլորային տարօրինակ):

ՖԼՈՐԱ. Այդ ինձ համար միևնույն է: Ես կհետևեմ ձեզ, ուր որ գնաք: Ինչ՞ու եք ինձ այդպես նայում: Սպասեցեք, այդ չէ, այստեղ կա մի վատ բան: (Մոտենում է և բռնում Արտաշեսի ձեռը): Ասա, ի՞նչ ես մտածում դու այս վայրկյանին, ինչո՞ւ քո աչքերն այդպես տարօրինակ են նայում...

ԱՐՏԱՇԵՍ. (Ականջ է դրել դեպի դուրս, գունատվում է, դողում): Գնա՛ տուն, գնա հորդ մոտ... (Ձեռն ազատում է):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Բեմի ետևից): Ա՛հ, ա՛հ, գալիս են, եկան, ուղղակի մեր տան վրա... Ազատվեցե՛ք...

ԱՐՏԱՇԵՍ. Լսո՞ւմ ես, լսո՞ւմ գնա, փախիր...

ՏԵՍԻԼ 9

ՆՈՒՅՆՔ, ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԱՆԱՀԻՏ, ԿԱՏԱՐԻՆԵ, ՏԻԳՐԱՆ և մի ոստիկանական պաշտոնյա

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Ներս է վազում աջ կողմի առաջին դռներից դողալով): Ազատվեցե՛ք, գալիս են: Ես տեսա այնտեղից, լուսամուտից: Կատարինե՛, Կատարինե՛, Օ՛հ (Անիմաստ վազվզում է դեսուդեն):

ՏԻԳՐԱՆ. (Ներս է գալիս ձախ կողմի դռներից մի գրիչ ձեռին): Ի՞նչ պատահեց:

ԱՆԱՀԻՏ. (Գալիս է շտապով խորքի դռներով): Հայրի՛կ, հայրի՛կ, նրանք գալիս են, ես հազիվ կարողացա ներս մտնել: (Ընկնում է հոր գիրկը):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Գրկում է Անահիտի գլուխը): Մի վախենար, նրանք գալիս են միայն մեկի համար: Այդ ես վաղուց էի սպասում:

ԱՐՏԱՇԵՍ. (Լուռ և անշարժ կանգնած է բեմի ձախ կողմում և նայում է դեպի խորքի դռները):

Բեմի ետևից լսվում է, թե ինչպես մի ծանր բան ընկնում է հատակի վրա:

ԱՆԱՀԻՏ. Մայրիկը: (Վազում է դեպի աջ կողմի երկրորդ դռները, բաց է անում դռները, նայում, սարսափում): Մայրի՛կ... Օ՛հ, նա սողում է հատակի վրա: Օգնեցե՛ք:

ՖԼՈՐԱ. (Քարացած, անշարժ, բեմի աջ կողմից դիտում է Արտաշեսին):

ՏԻԳՐԱՆ. (Վազում է դեպի աջ կողմի երկրորդ դռները և շեմքի վրա Անահիտի օգնությամբ հատակից բարձրացնում է անդամալույծ Կատարինեին):

ԲՈԼՈՐԸ. (Բեմի աջ կողմումն են, բացի Արտաշեսից և նայում են խորքի դռները):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Արտաշեսին): Փախի՛ր, թշվառ, ի՞նչ ես քարացել.

ԱՐՏԱՇԵՍ. Մայրի՛կ: (Արագ մոտենում է մորը, գրկում, համբուրում: Հետո համբուրվում է Անահիտի հետ և դառնալով հորը): Մնաս բարով, հայրիկ, ես այլևս քեզ չեմ տանջիլ: Ֆլորա ներիր ինձ: (Մի վայրկյան դառը թախիծով նայելով Ֆլորային, վազում է ձախ կողմի դռներով և դռները ետևից փակում):

ՊՐԻՍՏԱՎ. (Երևում է խորքի դռների մեջ: Նրա ետևից երևում են ուրիշ ոստիկանների գլուխներ): Արտաշես Սահառունի: (Բեմի ետևից լսվում է ատրճանակների երկու զարկ):

ՍԵՆԵՔԵՐԻՄ. (Աղաղակելով): Ահա կործանվածը:

ՏԻԳՐԱՆ.

ՖԼՈՐԱ. Վազում են դեպի ձախ կողմի դռները:

ՏԻԳՐԱՆ. (Կոտրում է դռները, ներս նայում և ետ կանգնում).Նա լողում է արյան մեջ:

ԿԱՏԱՐԻՆԵ. (Ճչում է): Ա՜, անաստվածներ...

ՍԵՆԵՔԵՐԻՄ. Նա ուրիշ ելք չուներ: (Վազում է Արտաշեսի սենյակը տարօրինակ ճիչեր արձակելով):

Վարագույր